

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԴԻ  
ԱՐԵՎԵԼԱՏԱՅԵՐԵՆԻ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ  
ԲԱՌԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ  
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ  
ԲԱՌԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2024

ՀՏԴ 811.19'374

ԳՄԴ 81.51-4

Ա 858

*Բառարանը հրատարակության է պատրաստվել ՀՀ ԳՊԿ  
դրամաշնորհով (գիտական թեման՝ «Արդի արևելահայերենի  
ուսումնական քերականական բառարան»)*

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

Կազմողներ՝

**Յու. Ավետիսյան, Ա. Սարգսյան, Լ. Մելքոնյան, Լ. Ծատուրյան**

Խմբագիր՝

*բ. գ. թ., դոց. Մ. Ֆելեքյան*

Գրախոսներ՝

*բ. գ. թ., դոց. Կ. Միքայելյան*

*բ. գ. թ., դոց. Զ. Աղաջանյան*

Ա 858 Արդի արևելահայերենի ուսումնական քերականական բառարան / Կազմ.՝ Յու. Ավետիսյան, Ա. Սարգսյան, Լ. Մելքոնյան, Լ. Ծատուրյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2024, 392 էջ:

Բառարանը նախատեսվում է բանասերների, ուսուցիչների, ուսանողների, բարձր դասարանների աշակերտների, առհասարակ, մտավոր աշխատանքով զբաղվողների և հասարակության լայն խավերի համար:

ՀՏԴ 811.19'374

ԳՄԴ 81.51-4

ISBN 978-5-8084-2676-4

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426764>

© ԵՊՀ հրատ., 2024

© Հեղ. խումբ, 2024

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ .....	5
1. ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ .....	5
2. ԲԱՌԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ .....	11
3. ԲԱՌԱՁԵՎԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....	18
4. ՆԵՐԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....	22
ՏԻՊԱՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ .....	44
ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ .....	51
Ա .....	52
Բ .....	96
Գ .....	109
Դ .....	121
Ե .....	130
Զ .....	138
Է .....	145
Ը .....	146
Թ .....	152
Ժ .....	163
Ի .....	166
Լ .....	174
Խ .....	185
Ծ .....	197
Կ .....	206
Հ .....	222
Ձ .....	250
Ղ .....	254
Ճ .....	254
Մ .....	258
Յ .....	280
Ն .....	281
Շ .....	297
Ո .....	308
Չ .....	314

Պ.....	317
Ջ.....	329
Ռ.....	334
Ս.....	336
Վ.....	356
Տ.....	363
Ր.....	370
Յ.....	370
ՈՒ.....	372
Փ.....	377
Ք.....	380
Օ.....	383
Ֆ.....	385
ՀԱՎԵԼՎԱԾ (հատուկ անուններ).....	386
ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	390

# ԱՌԱՋԱԲԱՆ

Բառարանում ներկայացված է մոտ 4000 բառի ձևաբանական ամբողջական նկարագրություն: Բառարանային նյութը ընտրված է ժամանակակից արևելահայերենի գործածական և հիմնականում ձևակազմության մեջ որոշակի դժվարություններ ներկայացնող բառերից:

## 1. ԲԱՌԱՐԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հայ բառարանագրությունը հարուստ ավանդույթներ ունի: Մեզանում ստեղծվել են բանասիրական տարատեսակ բառարաններ՝ բացատրական, ուղղագրական և ուղղախոսական, ստուգաբանական, դարձվածաբանական ևն: Իհարկե, ավանդույթը շարունակվելու է՝ բառարանների այդ տեսակները հարստացնելով նորանոր օրինակներով: Բայց, այնուամենայնիվ, մեր բառարանագրական փորձը աղքատիկ է բառարանների առանձին տեսակների վերաբերմամբ: Խոսքը մասնավորապես գրական լեզվի մշակվածությունը արտահայտող նորմատիվ բառարանների մասին է: Մեզանում խստորեն զգալի է քերականական բառարանի պակասը:

Հրապարակի վրա եղած հայերեն բառարաններում, այս կամ այն հանգամանքով պայմանավորված, այս կամ այն չափով իհարկե տրվում են քերականական ցուցումներ՝ խոսքիմասային պատկանելություն, հոլովական ինչ-ինչ ձևեր, անկանոն խոնարհումներ, դերբայական ձևեր ևն: Բայց դա արվել ու արվում է խիստ անկանոն ու անհամակարգ: Բազմաթիվ օրինակներից բերենք ընդամենը մեկ-երկուսը. բառարաններից մեկում, օրինակ, որպես **լինել** անկանոն բայի քերականական հատկանիշ նշվում է դիմավոր և անդեմ 13 ձև, բայց **թողնել**, **առնել**, **ուտել** անկանոն բայերի վերաբերյալ, բացի սեռից, ուրիշ որևէ նշում չի արվում: Կամ՝ մեկ այլ բառարանում նշվում է **հողմաբան** բառի հոգնակին (**-ներ**), սակայն բառարանում զետեղված նույն կազմությամբ և ավելի գործածական *հողմաչափ*, *հողաչափ*, *հողմավար*, *հողմափար* բառերի հոգնակին չի նշվում: Եվ կամ՝ նշվում են **տալ** բառի սեռական-տրականի զուգահեռ ձևերը (տալի//տալոջ), բայց չեն ներկայացվում, օրինակ, **տեգր** բառի սեռական-տրականի կազմությունները: Կամ էլ՝ **գի-**

**տեմ, ունեմ, արժեմ** բայերի սկզբնաձևեր են տրվում ժամանակակից հայերենում չգործածվող **գիտել, արժել, ունել** ձևերը: Երբեմն բառի քերականական նույն հատկանիշ(ներ)ի վերաբերյալ տարբեր բառարաններում (և ոչ միայն բառարաններում) բերվում են խիստ հակասական, իրարամերժ տեղեկություններ, և այսպես շարունակ: Հասկանալի է. բառի քերականական նկարագրություն տալը նրանց խնդիրը չի եղել. բառի ձևաբանական ամբողջական և հետևողական նկարագրությունը տրվում է քերականական բառարանում: Այդպիսի մի բառարան ունենալու կարևորությունից ելնելով էլ՝ բառարանի հեղինակները «Վ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ նախաձեռնեցին քերականական ուսումնական այս բառարանը ստեղծելու գործը: Հասկանալի է նաև, որ այս բառարանում առանձին բառերի և դրանց առանձին քերականական հատկանիշների վերաբերյալ արձանագրված են ավանդաբար ընդունված և գրքից գիրք մեխանիկորեն փոխանցված տեսակետներից տարբեր տեսակետներ: Բերենք ընդամենը մեկ օրինակ:

Լեզվաբանական գրականության մեջ կարծես թե բավարար չափով և ճշգրիտ նկարագրված չէ **լալ** բայը: Բանն այն է, որ այս բայը մեր դիտարկումներով պակասավոր է: Ճիշտ է, գրականության մեջ որպես շեղում են ներկայացված վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայներում և համապատասխան ժամանակաձևերում անցյալի հիմքից կազմվող ձևերը (**լացել եմ, լացող, լացած** են), բայց ոչինչ չի ասվում, օրինակ, ենթադրականի դրական ձևերի մասին (ըստ կանոնի՝ **կ+ըղծ.՝ կ+լամ, կ+լանք** են), որոնք իրականում արդի լեզվում գոյություն չունեն. **պակաս են**. այդ ձևերը լրացվում են **լացել** բայի ներկայի հիմքից ձևերով (**կ+լացեմ, կ+լացենք** են) և ոչ թե, իհարկե, **լալ**-ի անցյալի հիմքից ձևերով (քանի որ արդի հայերենի ըղծականը բոլոր բայերի դեպքում կազմվում է ներկայի հիմքից): Իսկ սա նշանակում է, որ **լալ**-ը պակասավոր բայ է, որը իր հերթին նշանակում է, որ **լալ** բայի՝ անցյալ կատարյալի խոսակցական կազմությունները (**լացի, լացիք, լացին** են) ոչ թե «շեղումներ» են, այլ կանոնական ձևեր, իսկ դրանց զուգաձևերը (**լացեցի, լացեցինք, լացեցին**, ինչպես նաև ցոյական հիմքով մի շարք այլ ձևեր՝ **լացելու է, լացի՛ր, մի՛ լացիր** են) ոչ թե **լալ** բայի «կանոնարկված ձևեր» են<sup>1</sup>, այլ **լացել** հավելավոր բայի կանոնական ձևեր:

<sup>1</sup> Տե՛ս **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Եր., 2004, էջ 473: «Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, Եր., 1974, էջ 426:

Մի շարք դեպքերում տարակարծություններ առաջացնող քերականական այս կամ այն հատկանիշը արձանագրելու համար կատարվել է մասնագիտական գրականության մեջ եղած տեսակետների հետևողական և խոր ուսումնասիրություն, և միայն դրանից հետո է արվել համապատասխան նշումը: Բերենք մեկ-երկու օրինակ: Լեզվաբանական գրականության մեջ վեճ կա **մերոնք** և **ձերոնք** բառերի խոսքիմասային պատկանելության վերաբերյալ. դրանք գոյական խոսքի մաս պետք է համարել, թե՞ դերանուն: Եզրահանգումը կատարել ենք հետևյալ վերլուծության հիմքի վրա: Հարցի մասին մասնագիտական գրականության մեջ շատ է խոսվել: Գրվել են նույնիսկ առանձին հոդվածներ<sup>2</sup>: Բացատրական բառարանները **մերոնք** և **ձերոնք** բառերը կա՛մ համարում են գոյական (**Մերոնք, թոնց, յոզն. գ. 1. Մեր ունեցածները.... (ՀԲԲ); Մերոնք, թոնց, գ. հվք. 1. Մեր մոտիկները՝ հարազատները.... (ԱՀԲԲ); Ձերոնք, թոնց, հոզն. գ. (բրբ.), 1. Ձեզ պատկանածները... (ԺՀԲԲ)**), կա՛մ խոսքի մասը չեն նշում (**Մերոնք, թոնց (հոզն.)՝ 1. Մեր մերձավորները.... ԺՀԲԲ**): Է. Աղայանը հարցին անդրադառնում է նաև իր աշխատություններից մեկում. **ք/ց** հերթագայությամբ հոլովվող գոյականների շարքում (Վարդանանք, Վանդունք, Չալոյենք)<sup>3</sup> որպես **-ոնք** մասնիկով կազմություն, ներկայացնում է նաև **մերոնք** բառի հարացույցը<sup>3</sup>:

Քերականությունների մեծ մասում դրանք համարվել են ոչ թե գոյականներ, այլ դերանուններ՝ *փոխանուն ստացական* (Ա. Մարգարյան) կամ *փոխանուն գոյական դերանուններ* (Գ. Զահուկյան, Հ. Բարսեղյան), և կամ դերանուններ են համարել՝ չնշելով տեսակը (Ս. Աբրահամյան): Ֆ. Խլղաթյանը դրանք համարում է անձնական դերանունների տարատեսակ՝ **հատկացական դերանուններ**<sup>4</sup>՝ ի տարբերություն անձնական/**դիմային** դերանունների (*ես, դու, ինքը, մենք, դուք, իրենք*)<sup>4</sup>: Մ. Ասատրյանը դրանց մասին մի երկու խոսք է ասում «Գերդաստան, տոհմ, խմբակցություն ցույց տվող գոյականներ» ենթավերնագրի տակ՝ չնշելով խոսքի մասը. «Կան նաև, — գրում է նա, — **ՈՆՔ** ձևով կազմված բառեր դերանունների սեռական հոլովածներից, օրի-

<sup>2</sup> **Խլղաթյան Ֆ., Մերոնք** և **ձերոնք** բառերի մասին//Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1-2, Եր., 1968, էջ 99-102: **Ներսիսյան Վ.**, Գրական արևելահայերենի **մերոնք/ձերոնք** բառերի խոսքիմասային արժեքի հարցը//Լեզու և լեզվաբանություն, Եր., 2018, թիվ I (18):

<sup>3</sup> Տե՛ս **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 253:

<sup>4</sup> Տե՛ս **Խլղաթյան Ֆ.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. Գ, Եր., 2007, էջ 114-115:



նակ՝ **մերոնք, ձերոնք**: Ժողովրդական-բարբառային են **իմոնք, քոնոնք** և այլ ձևերը»<sup>5</sup>: Հարությունյանը համարում է պարզապես առարկայանիշ կամ գոյական դերանուններ, «որոնք կազմված են անվանական **-ոնք** հոգնակերտով, որը դրվել է սեռականի ձևի վրա, և նշանակում է առաջին կամ երկրորդ դեմքին վերաբերող, մոտ անձ, առարկա»<sup>6</sup>: Եվ վերջապես, ուսումնասիրողներից Վ. Ներսիսյանը առաջարկում է արևելահայերենում ընդունել **ստացական դերանունների**՝ որպես դերանուն խոսքի մասի առանձին տեսակի գոյությունը և քննարկվող դերանունները (*մերոնք, ձերոնք, իմոնք, քոնոնք* ևն) զետեղել դերանվան այդ տեսակի մեջ<sup>7</sup>:

Առհասարակ այս կամ այն բառի կամ բառախմբի խոսքիմասային պատկանելության հարցը քննարկելիս բնականաբար պետք է առաջնորդվել խոսքի մասերին հատուկ քերականական տարբերակիչ հատկանիշներով: Այդ ելակետից՝ **մերոնք, ձերոնք** բառերը ունեն դերանունների հատուկ խոսքիմասային բոլոր հատկանիշները: Այսպես: **Առաջին**. հայտնի է, որ դերանուն համարվող բառերի ամենաբնորոշ հատկանիշներից մեկը, ի տարբերություն մյուս անուն խոսքի մասերի, ընդհանուր, չտարբերակված իմաստ արտահայտելն է: **Մերոնք/ձերոնք**-ի իմաստը խոսքից դուրս խիստ ընդհանրական է և կարող է վերաբերել ցանկացած խոսողի կամ խոսակցի՝ առանց տարբերակման, այնպես, ինչպես **ես, դու** դերանուններինը կամ **իմոնք, քոնոնք** ստացական խոսակցական ձևերինը: **Երկրորդ**. դերանուն համարվող բառերը ոչ թե անվանում են առարկան (առարկայի հատկանիշը կամ հատկանիշի հատկանիշը), այլ ցույց են տալիս, ակնարկում են, մատնանշում են: **Մերոնք**-ը և **ձերոնք**-ը, ինչպես բոլոր գոյական դերանունները, առարկան ցույց են տալիս, մատնացույց են անում: **Երրորդ**. դերանունների մի զգալի մասը ցույց է տալիս առարկա, առարկայի հատկանիշ և հատկանիշի հատկանիշ որոշակի տարածական կամ դիմային հարաբերությամբ. դրանք եռաշարք կազմություններն են՝ *ես, դու, նա; այս, այդ այն* և դրանցով կազմվածները՝ *այստեղ, այդտեղ, այնտեղ; այսքան, այդքան, այնքան; այսպես* ևն: **Մերոնք**-ը և **ձերոնք**-ը նույնպես առարկան ցույց են տալիս որոշակի դիմային հարաբերությամբ (**մերոնք**=իմ յուրայինները, **ձերոնք**=քո յուրայինները): Եվ վերջապես **չորրորդ**. քննարկվող դերանունները, ինչպես բոլոր դերանունները, կատարում են փոխարինող դեր. այս դեպքում փոխարինում

<sup>5</sup> Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983, էջ 57:

<sup>6</sup> Հարությունյան Հ., Ածական անուն, դերանուն, Եր., 1976, էջ 76:

<sup>7</sup> Տե՛ս Ներսիսյան Վ., նշվ. հոդվ., էջ 63-66:

են անուն խոսքի մասերին: Այսպես՝ «Եկվորների աշխատավարձը *հայաստանյան մասնագետների* աշխատավարձից մի քանի անգամ ավելի է, մինչդեռ աշխատանքի ամբողջ ծանրությունը կրում են **մերոնք** (=ընկերության հայաստանյան մասնագետները)»:

Այսպիսով՝ **մերոնք** և **ծերոնք** (ինչպես նաև **խմոնք**, **քոնոնք**) բառերը ունեն դերանուններին բնորոշ հատկանիշներ, հետևաբար կարող են իրենց տեղը ունենալ դերանուն խոսքի մասի մեջ: Ո՞րն է այդ տեղը, դերանունների ո՞ր տեսակի մեջ: Իրենց հատկանիշներով՝ դրանք գոյական դերանուններ են: Քերականություններում առավել ընդունված է դրանց եզակիի ձևերը կոչել **փոխանուն սեռականներ** (ինչպես՝ *խմը-խմինը, իմինները, իմիններից, իմիններով, իմիններում*; *քոնը-քոնինները, մերը-մերինները; ձերը-ձերինները, ձերինների* ևն): Հոգնակի 3-րդ դեմքի այս ձևերը, սակայն, ի տարբերություն եզակի ձևերի, արտահայտում են անձերի **հավաքական նշանակություն**. հարաբերակցվում են 1-ին և 2-րդ դեմքերին և մատնացույց են անում խոսողի կամ խոսակցի անունից հանդես եկող խումբ՝ բացառյալ խոսողը կամ խոսակիցը. **մերոնք**-ի մեջ բացառված է **ես**-ը, **ծերոնք**-ի մեջ՝ **դու**-ն (Սիրելի՛ս, **ծերոնք** արդեն գնացել են; **Մերոնք** իմ մասին մոռացել են): Հետևաբար ավելի ճիշտ կլինի դրանք կոչել **հավաքական նշանակությամբ փոխանուն գոյական դերանուններ**, ինչպես որ ունենք **-անք, -ենք, -ունք, -ոնք** վերջավորություններով հավաքական հոգնակիներ՝ *պապոնք, Գրիգորենք, Վեդունք, Վարդանանք* ևն: Այդ դերանունները, ինչպես նշված համարժեք գոյականները, ենթարկվում են **g** հոլովման (*մերոնք-մերոնց, մերոնցից, մերոնցով, մերոնցում* ևն): Ի դեպ, դրանք առավելապես **անձնանիշ** դերանուններ են (Շատ մարդ էր մասնակցում փառատոնին, թեև **ծերոնցից** շատերը չկային), սակայն կարող են հանդես գալ նաև որպես **իրանիշ** (Արկղերը մի՛ խառնեք իրար. **ծերոնք** առանձնացրե՛ք. **մերոնցում** այլ միրգ է լցված): Հազվադեպ գործածվում են նաև հոգնակի թվով (Օգտագործեք ձե՛ր ճամպրուկները. դրանք դատարկ են. **մերոնցներում** իրեր կան): Քննարկվող բոլոր այս ձևերը առավել բնորոշ են խոսակցական լեզվին:

Կամ՝ էական տարակարծություններ կան մի շարք բայերի կրկնասեռ լինելու կամ չլինելու վերաբերյալ: Բառարանիս հեղինակները առաջնորդվել են նորմատիվ քերականություններում ընդունված սկզբունքներով: Կրկնասեռության դրսևորումներ չեն համարվում՝

**ա) Գործողության ներքին խնդրառությունը.** չեզոք սեռի բայերը գործածվում են ներգործական սեռի նշանակությամբ. կոչվում է գործողության **ներքին խնդրառություն**. Խնդիրն արտահայտվում է բայի արմատական մասով՝ *Ծիծաղ ծիծաղել: Լաց լացել: Պարը պարել: Կոիվը կովել:*

**բ) Չեզոք սեռի բայերի փոխաբերական գործածությունը,** երբ դրանք առնում են ներգործական սեռի իմաստ՝ *Չանգը զրնգում է (=հաղորդում է) օրվա գույժը: Ոռնաց (=հայտնեց) իր քաղցը: Սայլը ճոնչում էր (=երգում էր) մի երգ: Բառաչում (=երգում է) է իր սերը: Հառաչում է (=պատմում է) մոռացված մի պատմություն:* Սրանցում ներգործական սեռի նշանակությունը ժամանակավոր է՝ պայմանավորված բառի փոխաբերական գործածությամբ:

**գ) Համանուն բառերի սեռային տարբեր իմաստները:** Օրինակ՝ **շրջել** «շրջագայել, ման գալ» և **շրջել** «շուռ տալ, փոխել, թերթել» բայերը տարբեր բառեր են՝ համանուններ. առաջինը չեզոք սեռի բայ է (**շրջել** քաղաքի փողոցներում), իսկ երկրորդը՝ ներգործական (**շրջել** պատմության էջը): Այս դեպքում խոսք չի կարող լինել կրկնասեռության մասին:

**դ) Լծորդական տարբերություններով պայմանավորված սեռային տարբերությունները.** **թվել**–«**Թվեց** իր համախոհներին» (նբ) և **թվալ**–«**Դա** ինձ երազ **թվաց**» (չբ); **Ծփել**–«Ձուն պետք է լավ **ծփել**» (նբ) և **ծփալ**–«**Ծփում է** Սևանը» (չբ): Սրանք բառարանային տարբեր միավորներ (հարանուններ) են և հետևաբար չեն կարող համարվել միևնույն բայի սեռային տարբերակներ՝ կրկնասեռ բայեր:

**ե) Ներգործական սեռի բայերի՝ նախադասության մեջ ընդհանրական իմաստով (իբրև թե չեզոք սեռով) գործածությունները,** երբ դրանց ուղիղ խնդիրը նախադասության մեջ արտահայտված չէ («Ես լավ եմ **սովորում**», «Հաճախակի եմ **կարդում**», «Երեք օր է՝ չի **տեսնում**», «Վարպետորեն է **նկարում**», «Արագ չի **կառուցում**»): Ընդգծված բայերը այսպիսի գործածություններում չեն դադարում ներգործական սեռի բայ լինելուց, չեն դառնում չեզոք: «Երբ ներգործական բայերը գործածվում են առանց օբյեկտի, իրենց ո՛չ բառային, ո՛չ էլ քերականական նշանակությունը չեն փոխում և, հետևաբար, չեն փոխում նաև իրենց սեռը... ցույց են տալիս գործողություն ընդհանրապես»<sup>8</sup>:

<sup>8</sup> Ասատրյան Մ., Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Եր., 1959, էջ 119:

Մի շարք դեպքերում նաև փորձել ենք ճշգրտել բառի խոսքիմասային պատկանելության սահմանների հարցը՝ ելնելով մեր լեզվում կատարվող իմաստային-քերականական տեղաշարժերից: Այսպես: **Ավել** ածականի (տե՛ս ԱՀԲԲ) վերաբերյալ բառարանները ունեն նաև *մակբայ* և *կապ* նշումները («Որդին հազար վերստից **ավել** պիտի գնա; «Ոչինչ չեմ տեսնում այս ծխից **ավել**» (տե՛ս ԺՀԲԲ): Մինչդեռ մեր դիտարկումներով **ավել** բառին վերագրվող խոսքիմասային այս երկու հատկանիշները կարծես հնացած են և արդի գրական լեզվում փոխանցվում են **ավելի** բառին, որը երկարժեք խոսքի մաս է՝ մակբայ և կապ, ինչպես՝ «Դրանում **ավելի** կհամոզվեք, եթե տիրապետեք փաստերին» (մկբ.); «Երեկոյան նա **ավելի** հոգնեց և ստիպված դադարեցրեց աշխատանքը» (մկբ.); «Ձևավորվեց միջազգային շարժում, որի անդամ են 1200-ից **ավելի** կազմակերպություններ» (կապ); «Ձեռք բերված արդյունքները սպասածից **ավելի** են» (կապ); «Ձեզանից **ավելի** ոչ ոք այդ մասին չգիտի» (կապ): **Ավելի**-ին, ի տարբերություն իրեն հարաբերակից նաև այլ բառերի (**շատ, քիչ, նվազ, պակաս** ևն), ունի իմաստային վերացարկվածության ավելի բարձր աստիճան և ուստի բաղադրում է ածականի համեմատության աստիճան՝ *գեղեցիկ-ավելի գեղեցիկ, մեծ-ավելի մեծ* ևն:

## 2. ԲԱՌԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

### ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**Քերականական** այս բառարանը **ձևակազմական-ձևաբանական** բառարան է. ներկայացնում է արդի արևելահայերենի բառային միավորի ձևաբանական նկարագրությունը: Բառաձևի **շարահյուսական հատկանիշները** տրվում են այն չափով միայն, որչափով առնչվում են ձևակազմությանը, ինչպես, օրինակ՝ խնդրառության և կրկնաստեղծության դեպքերում:

Բնականաբար չեն տրվում նաև բառի **բառային-բառական իմաստները**՝ բացառությամբ համանունների, խոսքիմասային տարարժեքության և իմաստային կրկնաստեղծության առանձին դեպքերի:

Բառարանում բառաձևի **նկարագրությունը** տրվում է **ամբողջությամբ**, այսինքն՝ նշվում են նրա ձևաբանական բոլոր հիմնական հատկանիշները՝ բացառությամբ հոդառության: Դա շատ կարևոր է և՛ զուտ գործնական-հաղորդակցական նշանակության տեսակետից, և՛ տեսական առումով: **Նախ**՝ կա-

րևոր է այն, որ սովորական ընթերցողը ձեռքի տակ ունենա մի բառացանկ, որով կարողանա իր համար ճշտել գրական կանոնական քերականական ձևերը՝ հոլովաձև, հոգնակիի կազմություն, խոնարհման կառույցներ ևն՝ ապահովելու համար իր գրագետ հաղորդակցումը միջավայրի հետ: **Երկրորդ՝** այսպես կոչված տեսական կարևորությունն այն է, որ բառարանը, լինելով այդպիսին, կունենա նաև զուտ բանասիրական նշանակություն. Մասնագետը հնարավորություն կունենա ակադեմիական մակարդակում օգտագործելու քերականական զարգացումների վերաբերյալ բառարանում արձանագրված նյութը:

Լեզվի քերականությունը **անընդհատ զարգացող համակարգ** է: Փոխվում են քերականական իմաստները, փոխվում են մանավանդ քերականական ձևերն ու կառույցները: Վերջին բացատրական և ուղղախոսական, այսպես կոչված, հիմնարար բառարանների ստեղծումից անցել է շուրջ կես դար: Այդ բառարաններում ամփոփված քերականական ցուցումները, որոնք իհարկե համապատասխանեցված են իրենց ժամանակի գրական լեզվի գործող կանոններին, այսօր երբեմն չեն համապատասխանում մեր գրական լեզվի զարգացումներին: Տեղաշարժեր են կատարվել գոյականի հոլովումների, հոգնակիակազմության մեջ, փոփոխություններ են արձանագրվում բայի խոնարհման հարացույցում, ակնհայտ տեղաշարժեր կան քերականական զուգաձևությունների նախընտրություններում ևն: Բառարանի հեղինակները այս և նման լեզվական փաստերը վերանայել, մշակել և համապատասխան ճշգրտումներով ներկայացրել են բառարանում:

Բառարանը արձանագրում է գրական **լեզվի տեղաշարժերը**. նշվում են թեքման այն ձևերը, որոնք գործող զուգաձևեր են: Ավելին, բառարանը ունի նորմավորող նշանակություն. մատնանշում է լեզվի զարգացման հնարավոր ուղիները: Այս իմաստով՝ բառարանը մի զգալի չափով ստանձնում է գրական հայերենի քերականությունը նորմավորողի պատասխանատու դերը: Նշված հանգամանքը մեր օրերում դառնում է երիցս կարևոր, քանի որ մենք վկան ու ժամանակակիցն ենք մի իրականության, որտեղ ըստ էության գործնականում շատ բան չի արվում ժամանակակից գրական հայերենի քերականությունը կանոնարկելու համար:

Քերականական բառարանի պարագային չափազանց բարդ ու դժվարին խնդիր է, այսպես կոչված, **պոստենցիալ քերականական ձևերի** արձանա-

գրումի հարցը: Լեզվում կան ձևեր, որոնք գործնականում գրեթե չեն հանդիպում կամ հանդիպում են խիստ հազվադեպ, սակայն անհրաժեշտության դեպքում կարող են ձևավորվել՝ համապատասխան լեզվի քերականական օրինաչափություններին: Այս կարգի դրսևորումների, այսպես կոչված, օրինականությունը հաճախ տարակարծությունների առիթ է տվել հայ քերականագիտության մեջ, ուստի փոքր-ինչ հանգամանորեն անդրադառնանք դրանցից մի քանիսին: Այսպես:

Հայերենի քերականություններում ավանդաբար նշվել է, որ՝

**ա.** *բացի շնչավոր գոյականներից՝ ներգոյական հոլովածն չունեն նաև՝* • վերացական գոյականները (սարսափ, մտահոգություն, ափսոսանք, հուշ, քեն, երկյուղ), • ժամանակ ցույց տվող որոշ բառեր՝ տարվա եղանակների, շաբաթվա օրերի, ամիսների և այլնի անվանումներ (գարուն, ծմեռ, երկուշաբթի, հունիս, առավոտ, ցերեկ), • **-ան** հոլովման պատկանող գոյականների մեծ մասը (գարգացում, հանդիպում, լեռ, դուռ, ձուկ, մուկ), • իբրև թե պարունակության իմաստ չունեցող մի շարք գոյականներ (գարի, սեղան, ակնոց, բռնակ, դանակ) ևն,

**բ.** *հարաբերական համարվող ածականները համեմատության աստիճաններ կազմել չեն կարող,*

**գ.** *կան գոյականների խմբեր, որոնք իբրև թե չունեն կամ չեն կարող կազմել հոգնակի թիվ, ինչպես՝* • **-ույթուն** ածանցով մի շարք գոյականներ, որոնք ունեն հավաքականության իմաստ՝ *ուսանողություն, հոգևորականություն, ազնվականություն* ևն, կամ անվանում են հատկանիշ՝ *հավատարմություն, վստահություն, խրոխտություն, չափավորություն, սրտացավություն* ևն, • **-եղեն** ածանցով գոյականները՝ *ամանեղեն, կանաչեղեն, ոսկեղեն, մորթեղեն, կաթնեղեն* ևն, • հասարակագիտական ուղղություն, գիտաճյուղ, հասարակարգի և այլնի ընդհանուր անվանում հանդիսացող գոյականներ՝ *լեզվաբանություն, իրավագիտություն, քարտեզագիտություն, ռեալիզմ, կապիտալիզմ* ևն, • ներքին զգացում արտահայտող մի շարք վերացական գոյականներ և առհասարակ այնպիսի երևույթների անուններ, որոնք չեն կարող թվարկվել, ինչպես՝ *գույթ, խանդ, ափսոսանք, զայրույթ, հավատ, ռիս, խիղճ, վախ, քեն, վազք, ուսում, սով* ևն:

Այդպիսի բառաձևերը բացառելը և դրանց գործածականության վերաբերյալ արգելքներ սահմանելը առնվազն գիտական չէ: Արդի գրական արևելահայերենի գործող կանոններով՝ այդ բառաձևերի գոյությունը միանգամայն օրինաչափական է: Այլ հարց է, որ դրանց կազմությունը կամ գործածությունը սովորական չէ կամ, ավելի ճիշտ, սպասված չէ: Սովորական չեն, օրինակ, *ափսոսանքում, վազքում, հունիսում, դռնում, երկուշաբթիում, աթոռում; հուշում, սերում, վախում; կաթնեղեններ, խանդեր, առավոտներ, վստահություններ, անզլերեններ; ամենաուսումնական, ամենահայկական* և նման ձևերը: Բայց այդ անսովորությունը կամ չսպասվածությունը պայմանավորված է ոչ թե բառաձևի քերականական հատկանիշներով, այլ սկզբնաձև բառի բառային-բառական նրբիմաստներով: Վերացական իմաստ ունենալը, պարունակության իմաստ չունենալը, գիտական ուղղություն ցույց տալը, հավաքականությունը ևն, քերականական «կատեգորիաներ» չեն: Այս երևույթը չունի, այսպես կոչված, քերականական պատճառաբանվածություն: Հետևապես քերականական բառարանում այդ բառաձևերը սկզբունքորեն չեն կարող համարվել մերժելի: Բացի այդ՝ հաղորդակցական տեսակետից շատ կարևոր է նաև մեկ այլ հանգամանք. մերժելով այդ ձևերը՝ մենք լեզուն զրկում ենք ճկունությունից, հնարավորություն չենք տալիս նրան դրսևորվելու իր ողջ հարստությամբ ու բազմազանությամբ: Լեզուն հաճախ կենդանանում և իր ազդեցությունը զորացնում է հենց այդպիսի յուրահատուկ գործածություններով: Քերականական որևէ կանոն, օրինակ, չի խանգարում գործածելու այսպիսի կազմություններ. «Սա *ամենահայկական, ամենագիտական, ամենալեզվաբանական* միջավայրն է, որտեղ կարող են քննարկվել մեզ հետաքրքրող հարցերը», «*Վստահություններդ* կորցրել եք», «Քո էդ *սրտացավությունները* դիր մի կողմ», «*Խեցեղեններն ու ոսկեղենները* առանձնացրեք իրարից», «Տարբեր են հայկական և ֆրանսիական *ռոմանտիզմները*», «*Առավոտները* անպայման մի բաժակ սուրճ եմ վայելում», «Բրիտանական և ամերիկյան *անզլերենները* ունեն որոշակի տարբերություններ»: Վերացական իմաստ ունեցող գոյականի հոգնակի թվի կիրառությամբ Չարենցի տողը դառնում է խորիմաստ ու ազդեցիկ. «**Կարողներիս** ծովի կղզիներում անցած. Դու իմ կղզին եղար միակ ոսկե»: Եվ վերջապես, այդ ձևերը կարող են գործածվել պարզապես տերմինային նշանակությամբ, օրինակ՝ **վախեր** ձևի գործածությունը մանկավարժական հոգեբանության մեջ՝ «Մանկական **վախերը** տարիքային յուրահատուկ **վախեր**

են...., 6-7 տ. - պատժելու վախ, մահվան վախ, կենդանիներից վախ և **վախեր՝** կապված բնական աղետների հետ» («Արևակ»)»<sup>9</sup>:

Այս տեսակետից կարելի է ասել, որ լեզվի օրինաչափություններով ձևավորված կազմությունների վերաբերյալ բառարանում սկզբունքորեն չեն կարող սահմանվել, այսպես կոչված, քերականական արգելանքներ: Բառարանում, օրինակ, որոշ գոյականների ներգոյականի և հոգնակիի ձևեր չեն նշվում, հարաբերական համարվող ածականների համար սովորաբար չեն նշվում համեմատության աստիճաններ, բայց դա չի նշանակում, որ սկզբունքորեն մերժվում են այդ կազմությունների գոյությունը և դրանց՝ այս կամ այն չափով, այս կամ այն նպատակներով (ոճական, գործառական կամ այլ) գործածության իրավունքը:

Բառարանը ունի **ուղղորդող նշանակություն**. ոչ միայն արձանագրում է գոյություն ունեցող լեզվական վիճակը, այլև մատնանշում է զարգացման միտումները: Այսպես, օրինակ՝ հայտնի է, որ ձևակազմական հիմքերում (հոլովական ձևերի և հոգնակիի կազմություններում) արդի հայերենում և առհասարակ լեզուներում ակհայտ միտում է նկատվում անհնչյունափոխ հիմքով բառաձևերի ակտիվացման: Այդ իսկ պատճառով բառարանի հեղինակները միտումով չեն խուսափել որպես բառաձևային տարբերակներ նշելու նաև անհնչյունափոխ հիմքով այն տարբերակները, որոնց գործածականությունը առայժմ էապես կամ մասամբ զիջում է հնչյունափոխված հիմքով կամ հերթագայությամբ կազմվող տարբերակներին: Այսպես՝ **թումբ-թմբեր/թումբեր, թմբի/թումբի, ծուխ-ծխեր/ծուխեր, ծխի/ծուխի, ծաղկեփունջ-ծաղկեփնջեր/ծաղկեփունջեր, սունկ-սնկեր/սունկեր, խուց-խցեր/խուցեր, բու-բվեր/ բուեր, արծիվ-արծվի/արծիվի, կամուրջ-կամրջի/կամուրջի, կամրջից/կամուրջից, կորուստ-կորստի/կորուստի, կռիվ-կռվի/կռիվի; լուցկի-լուցկու/լուցկիի, թթենի-թթենու/թթենիի, դեղձենի-դեղձենու/դեղձենիի, բանալի-բանաու/բանալիի, բանալուց/բանալիից, նոճի-նոճու/նոճիի, նոճուց/նոճիից, շաշկի-շաշկու/շաշկիի, շաշկուց/շաշկիից, նարդի-նարդու/նարդիի, նարդուց/նարդիից, բարդի-բարդու/բարդիի, մեղու-մեղվից/մեղուից, մեջ-միջի/մեջի, միջով/մեջով, շարժում-շարժան/շարժումի, հարցում-հարցման/հարցումի, Սարգիս-Սարգսի/Սարգիսի, Սարգից/Սարգիսից** ևն:

<sup>9</sup> [https://hy.wikipedia.org/wiki/%D5%8F%D5%A1%D6%80%D5%AB%D6%84%D5%A1%D5%B5-%D5%AB%D5%B6\\_%D5%BE%D5%A1%D5%AD%D5%A5%D6%80](https://hy.wikipedia.org/wiki/%D5%8F%D5%A1%D6%80%D5%AB%D6%84%D5%A1%D5%B5-%D5%AB%D5%B6_%D5%BE%D5%A1%D5%AD%D5%A5%D6%80)



Նմանատիպ բառարաններում բառաձևին հատուկ **ընդհանրական հատկանիշները**, օրինակ՝ գոյականի հոլովական հարացույցը, հոգնակի թվի հոլովումը, անորոշ դերբայի հոլովական ձևերը, բայի խոնարհման հարացույցը, սովորաբար տրվում են **տիպար օրինակներով**՝ բառարանի ներածական մասում: Բացատրվում են խորհրդանիշներն ու պայմանական նշանները: Ծավալուն տպագիր բառարանների դեպքում դա միակ ընդունելի տարբերակն է: Այդպիսին է պատկերը, օրինակ, ռուսերենի ամենահայտնի քերականական բառարաններից մեկում. բառարանի ներածական մասում տասնյակ էջերով բացատրվում են գործածված «սիմվոլներն» ու բառարանից օգտվելու կանոնները<sup>10</sup>: Այս դեպքում դժվարությունն այն է, որ օգտագործողը ստիպված պիտի լինի յուրացնելու տասնյակ պայմանական նշաններ: Իսկ դա բառարանը գործնականում դարձնում է դժվարօգտագործելի: Բայց բառարանի այս տեսակը ունի մի շատ կարևոր առավելություն. հոլովման ու խոնարհման տիպար հարացույցների շնորհիվ ընթերցողը հնարավորություն է ունենում համակարգված պատկերացում կազմելու բառախմբերի ընդհանուր քերականական հատկանիշների մասին, հասկանալու, օրինակ, թե ինչ ընդհանուր գծեր ունեն գոյական համարվող բառերը, կամ ինչպիսին է, օրինակ, այս կամ այն լծորդության բայերի խոնարհման տիպական հարացույցը: Դա ոչ միայն սովորական ընթերցողին վարժեցնում է իր մայրենի լեզվի քերականությանը, այլև մասնագետին մատուցում է գիտականորեն բավարար չափով մշակված ու համակարգված փաստական նյութ: Դա էապես բարձրացնում է բառարանի գիտական արժեքը:

Մեկ այլ մոտեցմամբ՝ հենց բառահոդվածում ներկայացվում է յուրաքանչյուր թեքվող բառային միավորի ամբողջ հարացույցը: Կիրառական տեսակետից շատ ավելի արդյունավետ է այս երկրորդ տարբերակը, մանավանդ եթե բառարանի տեսակը ընձեռում է այդ հնարավորությունը. բառարանի էլեկտրոնային տարբերակի դեպքում այս առումով որևէ դժվարություն չի ստեղծվում (այն չունի ծավալային սահմանափակություն), մինչդեռ տպագիր գրքային տարբերակի դեպքում, հասկանալի է, լեզվական նյութը զբաղեցնում է ահռելի ծավալ՝ հազարավոր էջեր: Մենք ընտրել ենք, այսպես կոչված, միջին տարբերակը. տիպար օրինակներով ներկայացվում է միայն կանոնավոր բայերի խոնարհման հարացույցը՝ ըստ բայակազմական կաղապարների, մյուս ընդհանրական հատկանիշները (գոյականի հոլովումը, թվակազմու-

<sup>10</sup> Տե՛ս **Зализняк А.**, Грамматический словарь русского языка, М., 2004:

թյունը, ածականի համեմատության աստիճանները ևն) տրվում են բառահոդվածում: Առանձին բառաձևերի վերաբերյալ բառարանում գործածված են խորհրդանիշներ:

Բառարանի **ուսումնական** անվանումը բնավ չի նշանակում, թե դրանում նյութի մատուցումը խորությամբ զիջում է ոչ ուսումնական բառարաններին կամ ունի պակաս գիտականություն: Ուսումնական բառարանը պարզապես ընդգրկում է սահմանափակ քանակով բառեր: Բայց միևնույն ժամանակ այդ բառերը սովորաբար ընտրվում են տվյալ լեզվի առավել գործածական բառաշերտից, ինչպես և մեր բառարանի պարագայում է: Դա իր հերթին ենթադրում է նյութի մատուցման որոշ յուրահատկություններ, որոնցից մեկն էլ, օրինակ, բառաձևի նկարագրության՝ վերը նշված տարբերակի նախընտրությունն է, այն է՝ բառահոդվածներում ներկայացված են թեքվող գրեթե բոլոր միավորների հարացույցները:

Բառարանը ունի առանձին հավելված՝ նվիրված **հատուկ անուններին**: Հայերենում մի շարք տեղանունների և անձնանունների հոլովաձևերի կազմությունը ունի որոշակի դժվարություններ: Ավելին՝ գործածական հաճախակա-նությամբ պայմանավորված՝ այդ անունների ձևակազմության սկզբունքները հաճախ են ենթարկվում փոփոխությունների: Բերենք ընդամենը մեկ օրինակ. **Գյումրի** և **Լոռի** հատուկ անունների վերաբերյալ տերմինաբանական կոմիտեի հայտնի որոշումը գրական լեզվում գործածական միակ տարբերակ սահմանեց դրանց –**ու** հոլովմամբ ձևերը՝ **Գյումրու, -ուց, -ով, -ում; Լոռու, -ուց, -ով, -ում**<sup>11</sup>: Մինչդեռ պարզ վիճակագրությունը և կենդանի լեզվագործածության օրինակները վկայում են, որ բացի **Լոռու** և **Լոռուց** ձևերից՝ առավել գործածական են այդ երկու անվանումների հոլովական մյուս ձևերը՝ զուգաձևերը, որոնք կազմվում են այդ բառերի ուղիղ ձևերով՝ **Գյումրի՝ -ի, -ից, -ով, -ում; Լոռի՝ -ով, -ում**:

Հավելվածում տրվում են միայն այն հատուկ անունները, որոնք ունեն ձևակազմության դժվարություններ և կամ զուգաձևեր, օրինակ՝ **Լոռի, Էրեբունի, Բջնի, Փարպի, Վեդի, Գյումրի, Շուշի; Գորկի, Գորի, Նազասակի; Նազովրեցի, Արգիշտի, Րաֆֆի, Աղասի, Պազանիսի, Խոմեյնի, Նավալնի, Ջելենսկի** ևն:

<sup>11</sup> Տե՛ս «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», Եր., 2006, էջ 229, 280:

Բառարանը, բնականաբար, պահպանում է քերականական բառարաններում ընդունված սկզբունքը. **անկանոնությունները** (հոգնակիի անկանոն կազմություն, անկանոն հոլովումներ, դերանվանական հոլովում, խոնարհման անկանոն ձևեր ևն) տրվում են բառահոդվածում, որովհետև օգտատերը միայն այդ կերպ կարող է ծանոթանալ անկանոնության բոլոր դրսևորումներին:

Բառարանը մասամբ ունի նաև **ոճաբանական արժեք**, քանի որ բառաձևերի դիմաց ըստ անհրաժեշտության կատարվում են ոճական նշումներ՝ *հնացած, խոսակցական, հազվադեպ, անհանձնարարելի* ևն:

Օրինակները հիմնականում ինքնաստեղծ են՝ քաղված կենդանի խոսքից: Երբեմն վերցված են հեղինակային խոսքից՝ անփոփոխ կամ մասնակի փոփոխությամբ. հեղինակի անունը չի նշվում:

### 3. ԲԱՌԱՁԵՎԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

#### Ընդհանուր նկարագրություն

1. Բոլոր գլխաբառերի համար նշվում է դրանց խոսքիմասային պատկանելությունը, այսպես՝ **գոյ.** - գոյական, **ած.** - ածական, **թվ.** - թվական, **դեր.** - դերանուն, **բայ** - բայ, **մկբ.** - մակբայ, **կապ** - կապ, **շղկ.** - շաղկապ, **վրբ.** - վերաբերական, **ձյնրկ.** - ձայնարկություն:

2. **Բառարանում հիմնականում չեն տրվում՝**

ա) **հնացած և գործածությունից դուրս եկած և կամ սխալ կազմությունները**, օրինակ՝

- արգելական հրամայականի՝ անորոշի հիմքով ձևերը՝ *մի՛ կարդար, մի՛ կարդաք; մի՛ մոտենար, մոտենաք; մի՛ մոտեցնիր, մի՛ մոտեցնեք; մի՛ բարձրանար, մի՛ բարձրանաք; մի՛ ելնիր, մի՛ ելնեք; մի՛ թողնիր, մի՛ թողնեք; մի՛ հագնիր, մի՛ կորչի՛ր, մի՛ փախչիր* ևն,
- հոգնակիի կազմության, հոլովման և խոնարհման ընդգծված խոսակցական կամ բարբառային երանգ ունեցող կազմությունները՝ *գյուղացիք, երևանցիք; պապոնք, փափոնք, Բադունք, Մեժունք; իմոնք, քոնոնք; ճղներ, շրթներ, ծառներ; բեռ-բեռնից, բեռնով, լեռ-լեռնից, լեռնով, կաշի-*

կաշու, կաշուց, աներ-անոր/աների, սկեսուր-սկեսոր/կեսոր, աղջիկ-աղջիկի, դուստր-դստրի/դստերի, պապի-պապու, տատի-տատու; գրի'-մի' գրի, երգի'-մի' երգի, մի'ք խոսի, մի'ք գնա; բացեցե՛ք, ասեցե՛ք, բերեցե՛ք; լալու եմ-լալու ես-լալու է, (չ)լամ, (չ)լանք, (չ)պիտի լամ, կլամ-կլաս-կլա, չեմ լա-չես լա-չի լա, չէի լա; կեցա-կեցար-կեցավ, կենամ, կենանք, կկենամ են,

- **ե** լծորդության պարզ և **-ան-** սոսկածանց ունեցող բայերի պատճառական սկզբնածևային խոսակցական տարբերակները՝ *հիշել – հիշացնել* (փոխ.՝ *հիշեցնել*), *երգել – երգացնել* (փոխ.՝ *երգեցնել*), *ծաղկել – ծաղկացնել* (փոխ.՝ *ծաղկեցնել*), *խոսել – խոսացնել* (փոխ.՝ *խոսեցնել*), *մգանալ – մգեցնել* (փոխ.՝ *մգացնել*), *հնանալ – հնեցնել* (փոխ.՝ *հնացնել*) են,

բ) **հարադրությունները**, այդ թվում՝ **տալ** բայի հարադրությամբ պատճառական կազմությունները, քանի որ դրանք հիմնականում բնութագրվում են թեքվող բաղադրիչ(ներ)ի քերականական փոփոխություններով՝ *ասել-խոսել—ասացինք-խոսեցինք*, *բերել տալ—բերել տվեցի, տուն-թանգարան—տուն թանգարանի*; *սար ու ձոր—սար ու ձորի, հայր ու որդի—հոր ու որդու, մեր ու մանուկ—մոր ու մանկան, տատ ու պապ—տատ ու պապի*; *միտք տալ—միտք տվեցի, խոսք տալ—խոսք ենք տալու, հույս ունենալ—հույս ունեցանք, մեջ բերել—մեջ են բերում, ելնել-գնալ—ելանք-գնացինք*, ինչպես նաև՝ *խումբ-խումբ, փունջ-փունջ, տուն-տուն, տուն առ տուն, ժամանակ առ ժամանակ* են,

գ) **բառաքերականական համանունությունը**. **ջնջում** (գոյ.՝ ջնջելը, ջնջվածք) և **ջնջում** (ջնջել-ի անկատար դերբ.), **գումարում** (գոյ.՝ գումարելը) և **գումարում** (գումարել-ի անկատար), **անցավ** (ած.՝ առանց ցավի) և **անցավ** (անցնել-ի անցյալ կատարյալ), **թող** (կամային վրբ.) և **թող** (թողնել-ի հրմ.) են. նշվելու է դերբայական ձևերի տարարժեքությունը՝ **նշանած** (գոյ.) և **նշանած** (նշանել-ի հրկտ. դերբայ), **ուտելիք** (գոյ.) և **ուտելիք** (ուտել-ի ապառնի) են:

3. Բառահոդվածը չճանրաբեռնելու համար վերջավորություններից և բառերի վերջնաբաղադրիչներից առաջ գծիկ չի դրվում, ինչպես՝

**ՇՈՂԵՆԱՎ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

4. Խոսքիմասային տարարժեքությունը տրվում է միևնույն գլխաբառի բառահոդվածում՝ առանձին համարակալումով (արաբական թվերով) և օրի-

նակներով, որոնք ըստ անհրաժեշտության տրվում են բառակապակցությանը կամ նախադասություններով, այսպես՝

### **ՄԵՆԱԿ**

1. **որ./հրբ. ած.** (*Դժվար է կյանքը մենակ մարդու համար*):
  2. **ձևի մկբ.** (*Երկար տարիներ որդին մենակ էր ապրել արտասահմանում*):
  3. **սհմնփկ. վրբ.** (*Բոլորին համոզեցին, մենակ Հակոբը չհամաձայնեց*):
  4. **հմդս. շղկ.\*** (*Ինչ ուզում ես, արա, մենակ հաղթիր*):
5. Ներխոսքիմասային տարակարգությունը տրվում է հոմեական թվանշաններով. բերվում են համապատասխան օրինակներ, այսպես՝

### **ԱՅ**

1. **ցուց. վրբ.** (*Այ սա եմ ուզում*):
2. **Ի. զգցկ. ձյնրկ.** (— *Ա՛յ, արամս ցավում է, — այտը բռնած՝ հառաչեց նա*):
- II. **կչկ. ձյնրկ.** (— *Ա՛յ մարդ, ի՞նչ է պատահել, — հարցրեց կինը*):

### **ԲԵՐՆԵԲԵՐԱՆ**

- I. **ձևի մկբ.** (*Լուրը բերնեբերան տարածվեց ամբողջ գյուղով*):
  - II. **չափի մկբ.** (*Տակառը բերնեբերան լցված էր ջրով*):
6. Համանուն բառերը տրվում են առանձին բառահոդվածներով՝ բառական իմաստի համապատասխան բացատրություններով, ինչպես՝
- ՇՈՂԱԿՆ՝** (*աղամանդ*), **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում (*Մարտնու վրա փայլփլում էր մի մեծ շողակն*):**
- ՇՈՂԱԿՆ՝** (*փայլող աչքերով*), **հրբ. ած.** (*Ներս մտավ մի շողակն գեղեցկուհի*):
7. Գործածական որոշ օտար բառերի կամ նորագույն փոխառությունների նկարագրությունը տրվում է, եթե դրանք քերականական արտահայտության այս կամ այն ձևում կազմության դժվարություն ունեն կամ սխալկազմությամբ տարածվելու միտում են դրսևորում, ինչպես՝
- ԲՐԵՆԴ, գոյ., ներ/եր՞, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում**:
8. Խոսակցական լեզվից գրականին անցնող/անցած տարբերակային ձևերը տրվում են ~ նշանով, ինչպես՝ ~**ՍԱՌԵԼ**:
9. Խնդրառությունից տրվում են միայն բայական և կապական խնդրառությունները, քանի որ դժվարություններ ծագում են հիմնականում այդ խոս-

քի մասերի խնդրառական կառույցներում: Կապերով ձևավորվող խնդիրները չեն ներկայացվում (բացառությամբ *կողմից* կապով ձևավորվող ներգործող անուղղակի խնդրի՝ *Հարցը լուծվեց ղեկավարի կողմից*): Խնդրառությամբ կապակցվող պարագաները չեն տրվում:

10. **Տե՛ս** նշումը տրվում է այն դեպքերում, երբ բառի կամ բառաձևի գործածությունը արդի հայերենում նպատակահարմար չի համարվում. հղում է արվում գրական կանոնական ձևին, այսպես՝

**ՓԱԽՆԵԼ\***, տե՛ս **ՓԱԽՉԵԼ**:

11. Զուգաձևերը տրվում են // նշանով (գրե՛ք//գրեցե՛ք, տվեցի//տվի, արի՛//ե՛կ, մի՛ բաց//մի՛ բացիր), հոմանիշ քերականական մասնիկները՝ / նշանով (թյամբ/ով; պիտի/պետք է գնա, չպիտի/չպետք է գնա; գրդ.՝ **ամենա- / ամենից/- (ա)գույն**). զուգաձևերից առաջինը սովորաբար նախընտրելի, հանձնարարելի և կամ ավելի գործածական տարբերակն է, ինչպես՝

**ԿԱՇԻ**, գոյ., ներ, շվի/ի\*, բաց.՝ **շվից/ից\***, գործ.՝ **շվով/ով**, ներգ.՝ **շվում/ում**:  
**ԱՆՁ**, գոյ., ինք/եր, ի (*հոգն.՝ անց/երի*), բաց.՝ **ից** (*հոգն.՝ անցից/երից*),  
 գործ.՝ **ով** (*հոգն.՝ անցով/երով*):

Նմանապես՝ խոսքիմասային տարարժեքությունը նշելիս նշումի հաջորդականությունը պայմանավորել ենք ոչ թե խոսքի մասերի փոխանցման հաջորդականությամբ (ինչպես ասենք՝ ածական (դպրոցական) > գոյական (դպրոցական), այլ դրանց գործածության հաճախականությամբ: Այսպես՝ **կատարողական** բառը սկզբնապես ունեցել է ածականական նշանակություն («Կատարելուն վերաբերող, որևէ բան կատարելու ընթացքը՝ վիճակը ցույց տվող»), հետագայում նշանակել է «Որևէ բան կատարելու վիճակը՝ ընթացքը ներկայացնող տվյալների ամբողջությունը՝ հաշվետվությունը», այսինքն՝ ձեռք է բերել նաև գոյականի խոսքիմասային հատկանիշներ, և այսօր առավելապես գործածվում է այդ նշանակությամբ: Ուստի բառարանում նշվում է նրա նախ գոյական խոսքի մաս լինելը և ապա՝ ածական: Նմանապես՝

### **ՄԱՀԿԱՆԱՑՈՒ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (Նա սովորական մահկանացու է):
2. հրբ. ած. (Մենք բոլորս մահկանացու արարածներ ենք):

## ՄԱՀԱՊԱՐՏ

1. գոյ., ներ, ի, բաց.' **ից**, գործ.' **ով** (Հաղթանակը նվաճեցին **մահապարտները**):

2. հրբ. ած. (**Մահապարտ** զինվորների առջև գլուխ պիտի խոնարհել):

## 4. ՆԵՐԻՆՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

1. Բոլոր գոյականների մոտ տրվում է հոգնակիի ձևը, եզակի սեռական-տրականի հոլովածևը, հոլովական ամբողջ հարացույցը, այսպես՝

**ՕՐ**, գոյ., եր, օրվա/օրի, բաց.' **օրվանից/օրից**, գործ.' **օրով**, ներգ.' **օրում**:

**Ծանոթություն:** Ժամանականիշ բառերի հոլովական ձևերի հիմքակազմության մեջ հանդես եկող **ն**-ն (վաղը-վաղվա-վաղվա-**ն**-ից) տակավին գրաբարում գործածվող և միջին հայերենում լայն տարածում գտած **-ուան** (-վան) հոլովման վերջամասնիկն է: Գրաբարում հազվադեպ է հանդիպում, ինչպես՝ **մահուան – ի մահուանէ – մահուամբ** (նան՝ *մահու, մահուց*): Արևմտահայերենում մեծ թվով ժամանականիշ բառեր (ամիս, այսօր, առաջ, ժամանակ, ատեն, կէսօր, տարի, ցերեկ, օր ևն) ենթարկվում են **-ուան** (-վան) հոլովման, մանավանդ երբ հանդես են գալիս սեռական-հատկացուցիչի պաշտոնում՝ *ամսուան վերջը, այսօրուան դէպքերը, վաղուան գործը, Ջարտուան հակիթները* ևն (բայց՝ *նոյն ժամուն, օրուայ մէջ/օրուան մէջ, շաբթու կէսին*): Արևելահայերենում այդ **ն** մասնիկի անկումը գրական լեզվի ձևավորման ավելի վաղ շրջանի արտահայտություն է: Ժամանակակից հայերենի հոլովակազմական հիմքերում այն պարզապես վերականգնվում է:

Համապատասխան բառահոդվածներում հղում է արվում այս բացատրությանը:

2. **Սեռական**-ը և **տրական**-ը առանձին գործածում ենք՝ անվանելու համար սեռական-տրականի տարբերակները ութ դերանունների (ես-**իմ-ինձ**, դու-**քո-քեզ**, մենք-**մեր-մեզ**, դուք-**ձեր-ձեզ**, ինքը-**իր-իրեն**, սա-**սրա-սրան**, դա-**դրա-դրան**, նա-**նրա-նրան**) հետ կապված գործածություններում, մասնավորապես՝ դրանց կապային խնդրառությունը նշելիս, ինչպես՝

**Ի ՀԵՃՈՒԿՍ, իսկ. կապ, նխդ.,** խնդրո՞ւ՝ **սեռ.-տրկ.** (ի հեճուկս թշնամու), **տրկ.** (ի հեճուկս քեզ):

**ՄԱՍԻՆ, իսկ. կապ, հտդ.,** խնդրո՞ւ՝ **սեռ.-տրկ.** (ընկերների մասին), **սեռ.** (մեր մասին):

3. Չեն ներկայացվում գոյականների իմաստային-քերականական խմբերի անվանումները (հատուկ և հասարակ, վերացական և թանձրացական, շնչավոր և անշունչ), քանի որ դրանք ընդգծված քերականական հատկանիշներով գրեթե չեն առանձնանում. եղած մասնական հատկանիշները (ներգոյական հոլովի և հոգնակի թվի չգոյություն կամ չգործածություն, խնդրառական յուրահատկություններ ևն) տրվում են համապատասխան բառահոդվածներում:

4. Հոգնակի թվի հոլովումը չի նշվում, քանի որ գոյականների գերակշիռ մասը հոգնակի թվում ենթարկվում է ընդհանրական **ի** հոլովման (**ԸՆԿԵՐ, ներ** (ընկերներ), **ընկերների, բաց.՝ ընկերներից, գործ.՝ ընկերներով; ԴՈՒՌ, ներ** (դռներ) **դռների; ՁՄԵՌ, ներ** (ծմեռներ), **ծմեռների**): Քերականական այս իրողությունից շեղումները նշվում են համապատասխան բառահոդվածներում, այսպես՝

**ԿԻՆ, գոյ., կանայք, կնոջ, բաց.՝ կնոջից, գործ.՝ կնոջով, հոգն.՝ ց** հոլ.՝ **կանանց, բաց.՝ կանանցից, գործ.՝ կանանցով:**

Եզակի ներգոյական հոլովածևը սովորաբար չի տրվում բոլոր այն բառերի դեպքում, որոնք այդ հոլովածևը չունեն, կամ հոլովածևը գործածական չէ.

- անձնանիշ գոյականներ՝ *Վահան, Պեպրոս, նախարար, նկարիչ, հանդիսատես,*
- շնչավոր առարկա անվանող գոյականներ՝ *ծուկ, էակ, մանրէ, անձրևորդ, ագռավ,*
- **-ություն**-ով վերացական գոյականներ՝ *պարտավորություն, պարտություն, հմտություն, հարություն, թուլություն, ընդունելություն,*
- **-ում** վերջնամասնիկով գոյականներ՝ *գործուղում, ընթերցում, երդում, գնում, որոնում, առաքում, հակում, մասնագիտացում, կազմավորում, մտորում,*
- **-եղեն** ածանց ունեցող գոյականներ՝ *կանաչեղեն, խեցեղեն, ոսկեղեն, խմորեղեն,*



- այսպես կոչված՝ պարունակության իմաստ չունեցող գոյականներ՝ *բանալի, զուգահեռ, լրատու, ծիլ, ծղոտ, ծամկալ, ծաղիկ, ծակոտի, ծվեն, ծունկ, կուռ, կնճիռ, հարյուրանոց, հանդերձ, մակարոն* ևն:

Սրանով հանդերձ, սակայն, ինչպես արդեն ասվել է, գործնականում մենք սկզբունքորեն չենք բացառում նույն այս գոյականների՝ **-ում**-ով ներգոյականների կազմությունը և գործածությունը:

Գոյականի հոգնակի ներգոյականը գործածական լինելու դեպքում հոլովածնը նշվում է, այսպես՝

**ՇԱՀԱՐԿՈՒՄ, գոյ., ներ,** կման/ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով/կմամբ, հոգն. ներգ.՝ ներում:**

5. Միավանկ և ձայնավոր սկզբնավանկով երկվանկ գոյականների՝ հնչյունափոխված հիմքով հոգնակին կամ հոլովածնը նշելիս բառը երբեմն, ըստ անհրաժեշտության, տրվում է ամբողջությամբ, այսպես՝

**ՋՈՒՐ, գոյ., ջրեր, ջրի, բաց.՝ ջրից, գործ.՝ ջրով, ներգ.՝ ջրում:**

**ԱԾՈՒԽ, գոյ., ներ,** ածխի/ի, բաց.՝ **ածխից/ից, գործ.՝ ածխով/ով, ներգ.՝ ածխում/ում:**

6. Որոշիչ հոդերը չեն նշվում, քանի որ ձայնավորահանգ բառերը միշտ ստանում են **ն**, իսկ բաղաձայնահանգ բառերը՝ **ը/ն** հոդերը:

7. Քանի որ գործնականում հոգնակի թվի կազմությունը ժամանակակից հայերենում որոշակի դժվարություններ ունի, ուստի ավելորդ չենք համարում դրա վերաբերյալ ստորև տալ որոշ բացատրություններ, որոնք հիմնականում արձանագրված են համապատասխան բառահոգվածներում:

Միավանկ (ինչպես նաև գաղտնավանկով վերջացող երկվանկ) վերջնաբաղադրիչով բազմավանկ (բարդ, ածանցավոր կամ բարդ ածանցավոր) գոյականների մի մասի հոգնակին կազմվում է **-եր** վերջավորությամբ՝ *ծնագրեր, իրիկնապահեր, դեղատններ, դասագրքեր, գաղթավայրեր, գիսաստղեր, այգուկներ, բուժքույրեր, ծակուծուկեր*: Դրանք այն բառերն են, որոնցում այդ վերջնաբաղադրիչը՝ որպես գոյական, պահպանում է իր բուն իմաստը, իր նախորդ բաղադրիչին համադաս է (*սարուծորեր, հարցուփործեր, չեմուչումեր, ասյուպասպեր, թերուղեմեր, նազուկուզեր*) կամ նրա լրացյալն է և նրա հետ միասին ցույց է տալիս այդ բուն իմաստի տարատեսակը՝

**գիր** – ձեռագիր, հեռագիր, լրագիր, ծրագիր, խորագիր, սևագիր, ճակատագիր, **պահ** – իրիկնապահ, **ցույց** – նստացույց, զորացույց, **շերտ** – հանքաշերտ, ենթաշերտ են:

Սա նշանակում է, որ **ձեռագիր**-ը, **հեռագիր**-ը, **ծրագիր**-ը գրի տեսակներ են, **առանձնատուն**-ը, **թոնրատուն**-ը, **իջևանատուն**-ը տան տեսակներ են, **միջակետ**-ը, **ծայրակետ**-ը, **ստորակետ**-ը կետի տեսակներ են են: Այլ դեպքերում միավանկ վերջնաբաղադրիչով բառն ստանում է **-ներ** վերջավորությունը, ընդ որում՝ այդ վերջնաբաղադրիչը չի ենթարկվում հնչյունափոխության՝ *ակնարկագիր-ներ, կենսագիր-ներ, վիպագիր-ներ, բառարանագիր-ներ, հերթապահ-ներ, հաշվապահ-ներ, մեծատուն-ներ, վաչկատուն-ներ, ժամացույց-ներ, կողմնացույց-ներ* են: Պատճառն այն է, որ այս դեպքում բաղադրյալ բառը իր միավանկ վերջնաբաղադրիչի նշանակած երևույթի տարատեսակ ցույց չի տալիս, օրինակ՝ **վիպագիր** նշանակում է ոչ թե «վեպի գիր», այլ «վեպ գրող (անձ)», **հաշվապահ** նշանակում է ոչ թե «հաշվի պահ», այլ «հաշիվ պահող (անձ)», **մեծատուն** նշանակում է ոչ թե «մեծ տուն», այլ «մեծ տուն ունեցող, հարուստ (մարդ)» են: Այսինքն՝ այս դեպքերում միավանկ բառը բաղադրյալ բառի կազմում իր գոյականական բուն իմաստով չէ, որ հանդես է գալիս, այլ մի նոր, մեծ մասամբ՝ բայական, երբեմն էլ՝ փոխաբերական իմաստով:

Այնուամենայնիվ, կան միավանկ վերջնաբաղադրիչով բառեր, որոնք շեղվում են կանոնից (*սարահարթեր, մանրէներ, միրհավներ, ծովահեններ*) կամ ունեն երկձևություն՝ *երկրաշարժ-(ն)եր, կայագոր-(ն)եր, ծխամորճ-(ն)եր, աներձագ-(ն)եր, լեռնանցք-(ն)եր* են, ինչպես նաև **-պետ** կամ **-նիշ** գոյական վերջնաբաղադրիչով բառերը՝ *խմբապետ-(ն)եր, մարզպետ-(ն)եր, քաղաքապետ-(ն)եր, չափանիշ-(ն)եր, դրամանիշ-(ն)եր, նամականիշ-(ն)եր*:

**-նիշ** և **-պետ** վերջնաբաղադրիչով գոյականների հոգնակիակազմության վերաբերյալ կարևոր է իմանալ հետևյալը.

Երկձևություն չկա **-նիշ** վերջնաբաղադրիչով այն բառերի դեպքում, որոնք ածական են (*միանիշ, երկնիշ, բազմանիշ, փարանիշ*) կամ գոյական են դարձել փոխանվանական կիրառությունների հիման վրա (*հոմանիշ, համանիշ, նոյնանիշ, հականիշ, ժխտանիշ*), և դրանցում **-նիշ**-ը ունի բայական իմաստ: Դրանք պարտադիր ստանում են **-ներ** հոգնակերտ՝ *հոմանիշներ, հականիշներ* են: Մինչդեռ նիշի (նշանի) տարատեսակ ցույց տվող գոյական-

ները (*խորհրդանիշ, նամականիշ, վարկանիշ, հատկանիշ, հայրանիշ, աստղանիշ, դրոշմանիշ, փոստանիշ, ձայնանիշ, էջանիշ, ախտանիշ, պարբերանիշ, համարանիշ, գրանիշ, ջրանիշ, մրցանիշ, ցուցանիշ, չափանիշ, ուղենիշ, մականիշ*), կանոնի համաձայն, պետք է ստանան **-եր** հոգնակերտ (*խորհրդանիշեր, հատկանիշեր, հայրանիշեր, աստղանիշեր, համարանիշեր, մականիշեր, ուղենիշեր* ևն), սակայն սխալ ձևերի խիստ տարածվածության պատճառով թույլատրվում է զուգաձևություն՝ *խորհրդանիշեր//խորհրդանիշներ, համարանիշեր//համարանիշներ, ցուցանիշեր//ցուցանիշներ, չափանիշեր//չափանիշներ* ևն:

Ինչ վերաբերում է **-պետ** վերջնաբաղադրիչով գոյականներին, ապա դրանցում ըստ հոգնակիակազմության առանձնանում է երկու խումբ՝

**Առաջին.** եթե **-պետ** վերջնաբաղադրիչով գոյականներում պահպանվում է բաղադրիչի գոյականական իմաստը, ապա հոգնակին կազմվում է **-եր**-ով՝ *ալբենապետ-եր, գյուղապետ-եր, թաղապետ-եր, կայարանապետ-եր, համայնքապետ-եր, մարզպետ-եր, նահանգապետ-եր, նավապետ-եր, ոստիկանապետ-եր, պահակապետ-եր, վարչապետ-եր, քաղաքապետ-եր* ևն:

Սխալ կազմությունների տարածվածության պատճառով սրանց համար թույլատրվում են նաև **-ներ**-ով զուգաձևերը՝ *ալբենապետ-ներ, վարչապետ-ներ, քաղաքապետ-ներ, մարզպետ-ներ, պահակապետ-ներ, թաղապետ-ներ* ևն:

**Երկրորդ.** եթե **-պետ** վերջնաբաղադրիչը կորցնում է իր գոյականական նշանակությունը, իմաստով մի տեսակ ձուլվում է բառահիմքին, և առաջին պլան է մղվում բաղադրության ընդհանուր իմաստը, ապա հոգնակին կազմվում է **-ներ**-ով՝ *դահճապետ-ներ, բժշկապետ-ներ, բռնապետ-ներ, գնդապետ-ներ, հազարապետ-ներ, հայրապետ-ներ, ճարտարապետ-ներ, միապետ-ներ, մոզպետ-ներ, մարդպետ-ներ* (մարդ՝ իրանական *ցեղ + պետ*), *ներքինապետ-ներ, սենեկապետ-ներ, սեղանապետ-ներ, վարժապետ-ներ, ցեղապետ-ներ* ևն: (Չպետք է շփոթել *վարդապետ-ներ, նահապետ-ներ, վարպետ-ներ* բառերի հետ. սրանցում չկան գոյականական վերջնաբաղադրիչներ. **-ներ** են ստանում պարզապես բազմական կիներու բառառով):

Կան միավանկ վերջնաբաղադրիչով համանուններ, որոնցից մեկի հոգնակին կազմվում է **-եր**, մյուսինը՝ **-ներ** վերջավորությամբ՝ կախված իմաստից: Օրինակ՝ *մալբենագր-եր* «ձեռագիր մատյաններ, գրքեր» – *մալբենագիր-ներ* «մատյան գրող հեղինակներ» ևն:

Լինում են և հոգնակիի ձևերի՝ հիմքի տարբերության հետևանքով առաջացած հարանուններ, օրինակ՝ *մանրամասն-եր* «մանրամասնություններ» և *մանրամաս-եր* «մանրակներ, դետալներ»:

Հանձնարարելի չեն *դինոզավր-եր*, *նոութրուք-եր* տիպի կազմությունները, քանի որ փոխառությունները հայերենում ընկալվում են որպես պարզ բառեր և բաղադրիչների չեն բաժանվում: Որպես բազմավանկ գոյականներ՝ սրանք հոգնակին կազմում են **-ներ** վերջավորությամբ՝ *դինոզավր-ներ*, *իստրիոզավր-ներ*, *նոութրուք-ներ*, *կղմինդր-ներ*, *կադաստր-ներ*, *սմարթֆոն-ներ*:

### ԲԱՅ

1. Բոլոր բայերի համար նշվում են սեռը, լծորդությունը, կանոնավոր/անկանոն լինելը, կազմությունը, խնդրառությունը, դերբայական ձևերը՝ դրական և ժխտական տարբերակներով, իսկ բառահոդվածի վերջում հղում է արվում խոնարհման տիպար օրինակին, այսպես՝

**ՆՊԱՍՏԵԼ**, չք, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (նպաստել *գործին*), **գործ.** (նպաստել *աշխատանքով*), ենթ.՝ **(ջ)նպաստող**, հմկտ.՝ **(ջ)նպաստելիս**, հրկտ.՝ **(ջ)նպաստած**, անկտ.՝ **նպաստում**, վղկտ.՝ **նպաստել**, ապկտ.՝ **նպաստելու**, ժխտ.՝ **նպաստի**: (տե՛ս V՝)

2. Կանոնավոր բայերի խոնարհման հարացույցը բառահոդվածում չի նշվում. տիպար օրինակը տրված է առաջաբանից հետո՝ ստորև՝ ըստ բայականական կաղապարների. որպես օրինակ՝ բերվում են հարացույցի միայն առաջին դեմքի եզակի և հոգնակի ձևերը: Եղանակի անվանումից առաջ դրվում է **o** նշանը:

3. Կրավորական և բազմապատկական բայերի խոնարհման հարացույցներն առանձնաբար չեն տրվում, քանի որ դրանք գրեթե առանց բացառության<sup>12</sup> նույնանում են **ե** լծորդության աններածանց բայերի խոնարհման հարացույցներին:

4. Հարակատար և ենթակայական դերբայներից ծագած խոսքիմասային տարարժեքությամբ բառերը տրվում են հետևյալ կերպ. դերբայական ձևերի

<sup>12</sup> Բացառություն են միայն **-կլտ-** ներածանցով բազմապատկական մի քանի բայեր (բոցկլտալ, հեծկլտալ, կայծկլտալ), որոնք ունեն **ա** լծորդության աններածանց բայերի քերականական հատկանիշներ:

հարացույցում տվյալ դերբայի դիմաց բերվում է բայական իմաստով գործածության օրինակը, ապա առանձին բառահոդվածով և • նշանով տրվում է խոսքիմասային տարարժեքություն ունեցող բառը, այսպես՝

**ՆԱՅԵԼ, չբ** (հայացքը հատել իմաստով), **ե** լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (սարերին նայել), **գործ.** (հեռադիտակով նայել), **նբ** (կարդալ, դիտել, խնամել իմաստներով), խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (ֆիլմ նայել), **սեռ.-տրկ.** (հիվանդանոցում նայել՝ խնամել **հորը**), **գործ.** (հեռուստացույցով նայել), ենթ.՝ **(չ)նայող**, հմկտ.՝ **(չ)նայելիս**, հրկտ.՝ **(չ)նայած**, անկտ.՝ **նայում**, վղկտ.՝ **նայել**, ապկտ.՝ **նայելու**, ժխտ.՝ **նայի**: (տե՛ս V<sup>1</sup>)

• **ՆԱՅԱԾ**

1. **կպկ. բառ, նխդ.,** խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (Բույսը պետք է ջրել՝ **նայած** եղանակային պայմաններին):
2. **ստրդ. շղկ.** (**Նայած** ինչպիսին կլինի եղանակը, արշավը կշարունակենք):

• **ՉՆԱՅԱԾ**

1. **կպկ. բառ, նխդ.,** խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (Չբոսնեցինք՝ **չնայած** մեր վաղ փրամադրությանը):
2. **ստրդ. շղկ.** (**Չնայած** հոգնել էր, բայց շարունակում էր աշխատել):

- **ՆԱՅԱԾ, ՆԱՅԵԼ**-ի հրկտ. դերբայ (Բո **նայած** կհնոնկարը ես չեմ դիտել):

Ինքնուրույն բառի վերածված հարակատար և ենթակայական դերբայները տրվում են առանձին բառահոդվածով՝ համապատասխան բայի բառահոդվածին հղումով՝ խոսքիմասային տարարժեքության նշանով, այսպես՝

**ՆՇԱՆԱԾ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով** (Նրա **նշանածը** շատ գեղեցիկ աղջիկ է):

- **ՆՇԱՆԱԾ, ՆՇԱՆԵԼ**-ի հրկտ. դերբայ (Տարածքը **նշանած** էր ցուցածողերով):

**ՆՇԱՆԵԼ, նբ, ե** լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (նշանել դստերը), **գործ.** (նշան դնել իմաստով) (ճամբարի դիրքը նշանել փշալարով) ենթ.՝ **(չ)նշանող**, հմկտ.՝ **(չ)նշանելիս**, հրկտ.՝ **(չ)նշանած**, անկտ.՝ **նշանում**, վղկտ.՝ **նշանել**, ապկտ.՝ **նշանելու**, ժխտ.՝ **նշանի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՆՇԱՆՎԵԼ, ՆՇԱՆԵԼ-ի կրվ.** (Հերթով մոտենում էր նրանց կողմից **նշանված** դռներին և բախում), **չեզ.** (Հարևանի աղջիկը վերջերս **էր նշանվել**): (տե՛ս V')

5. Դերբայական հարացույցում չի նշվում ապառնի երկրորդ (**-իք** մասնիկով) դերբայը (*գրելիք, տանելիք, բերելիք* ևն): Խոսքիմասային ակնհայտ տարարժեքության դեպքում դերբայական այդ ձևը տրվում է համապատասխան բառահոդվածում, այսպես՝

**ԽԱՂԱԼ, չք** (ժամանակ անցկացնել, զբաղվել, պարել, շարժվել իմաստներով) (*Քամին էր խաղում թփերում: Խաղում էր ծիու վրա*), **նք** (որևէ մարզածևով զբաղվել իմաստով), **ա** լծ., կանոն., պարզ՝ խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (խաղալ *ֆուտբոլ*), **գործ.** (խաղալ *գնդակով*), ենթ.՝ **(չ)խաղացող**, հմկտ.՝ **(չ)խաղալիս**, ապառնի՝ (չ)խաղալիք. հրկտ.՝ **(չ)խաղացած**, անկտ.՝ **խաղում**, վղկտ.՝ **խաղացել**, ապկտ.՝ **խաղալու**, ժխտ.՝ **խաղա:** (տե՛ս V<sup>4</sup>)

**ԽԱՂԱԼԻՔ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում** (Երեխայի համար **խաղալիք** գնեց):

• **ԽԱՂԱԼԻՔ, ԽԱՂԱԼ**-ի ապառնի դերբայ (*Նրա խաղալիք դերը շափ դժվար էր*):

6. Դերբայական հարացույցում չի նշվում ապառնի երկրորդի՝ **-ի-ով** ձևը (*տանելի, սպասելի, նկատելի, գովելի, հանձնարարելի* ևն): Ժամանակակից հայերենում սրանք ըստ էության կորցրել են իրենց բայական նշանակությունը:

7. Անորոշ դերբայների հոլովումը չի նշվում, քանի որ բոլոր բայերի անորոշ դերբայները ենթարկվում են **ու** հոլովման՝ **ասել-ու, երգել-ու, գրվել-ու, թռչել-ու, բարձրանալ-ու** ևն:

8. Սեռերը նշելու համար համառոտագրված ճշգրիտ տարբերակը հետևյալն է՝ **ն.բ.** (ներգործական սեռի բայ), **կ.բ.** (կրավորական սեռի բայ), **չ.բ.** (չեզոք սեռի բայ), սակայն բառարաններում ավանդաբար գործածվել են **նք.** կամ **նք** տարբերակները: Մենք ավանդույթը չխախտելու և շարադրանքը նշուններով չձանրաբեռնելու համար նախընտրել ենք դրանցից մեկի կիրառությունը՝ առանց կետի՝ **նք/կբ/չբ** տարբերակը:

9. Կրկնասեռ բայերի դեպքում սեռային նշումից անմիջապես հետո տրվում է համապատասխան օրինակը, այսպես՝

**ԱՊՐԵԼ, նբ** (զգալ, վայելել իմաստներով), **ե լծ.**, պարզ, կանոն., խնդրո՜ւ ուղղ.-հայց. (Երազ **օրեր** ապրեց ծերունի բանաստեղծը), **չբ** (գոյություն ունենալ, բնակվել իմաստներով) (Թող **ապրեն** երկար ու երջանիկ), ենթ.՝ **(չ)ապրող**, հմկտ.՝ **(չ)ապրելիս**, հրկտ.՝ **(չ)ապրած**, անկտ.՝ **ապրում**, վղկտ.՝ **ապրել**, ապկտ.՝ **ապրելու**, ժխտ.՝ **ապրի**: (տե՛ս V<sup>1</sup>)

10. Բազմիմաստ բայերի դեպքում, երբ տարբեր իմաստներով գործածվելիս խնդրառությունները տարբեր են, բերվում են կարճ բացատրություններ և համապատասխան օրինակներ, այսպես՝

**ՆԵՂԱՆԱԼ, չբ, ա լծ.**, կանոն., **ան** սուկած., խնդրո՜ւ **բաց.** (վիրավորվել, խոռվել) (նեղանալ **ընկերոջից**), ենթ.՝ **(չ)նեղացող**, հմկտ.՝ **(չ)նեղանալիս**, հրկտ.՝ **(չ)նեղացած**, անկտ.՝ **նեղանում**, վղկտ.՝ **նեղացել**, ապկտ.՝ **նեղանալու**, ժխտ.՝ **նեղանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ՆԵՂԱՑՆԵԼ, նբ, ե լծ.**, կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո՜ւ **ուղղ.-հայց.** (նեղ դարձնել) (նեղացնել **ճեղքը**), **սեռ.-տրկ.** (վիրավորել) (նեղացնել **մարդուն**), **գործ.** (գործիքով նեղացնել/խոսքով նեղացնել), ենթ.՝ **(չ)նեղացնող**, հմկտ.՝ **(չ)նեղացնելիս**, հրկտ.՝ **(չ)նեղացրած**, անկտ.՝ **նեղացնում**, վղկտ.՝ **նեղացրել**, ապկտ.՝ **նեղացնելու**, ժխտ.՝ **նեղացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

11. Անհրաժեշտ ենք համարում մի շարք բայերում հանդիպող **վ** մասնիկի վերաբերյալ որոշ բացատրություններ տալ: Այսպես. արդի արևելահայերենում կան բայեր, որոնք առանց **վ**-ի սկզբնաձևեր չունեն, օրինակ՝ *բնակվել, գունադրվել, զբաղվել, թաքնվել, խելագարվել, համարձակվել, հարձակվել, հնազանդվել, նմանվել, սիրահարվել, սխալվել, ուշաթափվել, փարվել, օգրվել* ևն: Որպես կրավորական սեռի ցուցիչ՝ **վ** ածանցը գրաբարի բայական համակարգում դեր չի ունեցել: Բայց որպես հայերենի լեզվական տարր՝ այն գալիս է հնից. սկզբնապես հանդես է եկել **-ուած** մասնիկ ունեցող բառերում (*դարձուած, հարուած, գործուած, սպառուած, սրեղծուած* ևն), որոնք գործածվել են գերազանցապես գոյականի, մասամբ՝ նաև ածականի նշանակությամբ: (Բայական **վ** ածանցը **-ուած** ձևից ծագած լինելու բացատրությունը տվել է դեռևս Ա. Այտընյանը): Այս **վ**-ն՝ որպես կրավորական մասնիկ, հատուկ զարգացում ունեցավ միջին հայերենում և փոխանցվեց աշխարհաբարին: Ուշ միջնադարում արդեն դուրս եկավ առանձին բառերի կազմից և որպես սեռի արտահայտիչ՝ լայն տարածում գտավ նոր գրական հայերենի

ամբողջ բայական համակարգում: Եվ արդյունքում ստացվեց այնպես, որ գրաբարի **ի** լծորդության հիմնականում չեզոք սեռի մի շարք բայեր **վ**-ի տարածման ուժեղ ազդեցությամբ կամ համաբանությամբ սկսեցին գործածվել **վ**-ով, ինչպես՝ *բնակիլ-բնակել-բնակվել, համարձակիլ-համարձակել-համարձակվել, խելագարիլ-խելագարել-խելագարվել, հիասթափիլ-հիասթափել-հիասթափվել, հարձակիլ-հարձակել-հարձակվել, փարիլ-փարել-փարվել* ևն: Այս զարգացումը տեղի ունեցավ գրական արևելահայերենում հավանաբար արևելահայ բարբառների ազդեցությամբ: Արևմտահայերենում այդ բայերը պահպանեցին **ի** լծորդությունը՝ առանց **վ** մասնիկի՝ *համարձակիլ, բնակիլ, նմանիլ, հպատակիլ, սխալիլ, սիրահարիլ, յարձակիլ*: Ստացվեց այնպես, որ արևելահայերենում գործածության մեջ մտան բայեր (*սիրահարվել, ուշաթափվել, համարձակվել* ևն), որոնք ծագումնաբանորեն ունեն կրավորական **վ** մասնիկը, որը, սակայն, կրավորականի սեռային իմաստ չի արտահայտում. այդ բայերը առանց **վ**-ի սկզբնաձևեր չունեն:

**Կրավորակերպ** կոչվող այդ բայերում **վ**-ն, ծագումնաբանորեն կապված լինելով **վ** կրավորական մասնիկի հետ, այսօր ունի սոսկ բառակազմական արժեք:

Այս բայերից պետք է տարբերել ներգործական և չեզոք սեռերի պատկանող մի շարք բայեր, որոնք ձևավորմամբ նման են կրավորակերպ բայերին, բայց սրանցում **վ**-ն **ծագումնաբանորեն բառակազմական մասնիկ է**. առաջացել է **ու>վ** կամ **իու>վ** փոփոխությամբ. *անպատվել, արտասվել, զգվել, երդվել, զգվել, թոթվել, թթվել, կռվել (մարտնչել), հաշվել, հովվել, հրճվել* և մի շարք այլ բայերի **վ**-ն ոչ թե սեռածանց է, այլ բառակազմական ածանց կամ արմատի վերջնահնչյուն. **արտասվել** (արտասու-ել), **զգվել** (զգու-ել), **երդվել** (երդուել<երդնուլ<երդունուլ. «բուն արմատն է **երդու**, ինչպէս ցոյց են տալիս **երդուայ, երդուի՛ր, երդուեալ** ձեւերը» (Հ. Աճառյան)), **թթվել** (թթու-ել), **կռվել** (<կռուել<կռիւ-ել), **հաշվել** (հաշուել<հաշիւ-ել), **պատվել** (պատուել-պատիւել): **վ**-ն սրանցում ունի բառակազմական արժեք:

Բառարանում այս և կրավորակերպ բառերի դիմաց **վ**-ի վերաբերյալ, որպես կանոն, նշում չի արվում, և հղում է տրվում *Առաջաբան*-ին:

Հայտնի է, որ **-ցն-** ածանցով մի շարք բայեր պատճառ(ական)ակերպ են. չեն արտահայտում պատճառական բայերի իմաստ, բայց ձևափոխվում են պատճառական բայերի սկզբունքով: Օրինակ՝ **հարցնել, վերցնել, լցնել, փակցնել,**



**հատկացնել, յուրացնել, եզրակացնել.** սրանք արտահայտում են սովորական ներգործական բայերի նշանակություն. ցույց չեն տալիս այնպիսի գործողություն, որը պատճառ է դառնում այլ առարկայի գործողության: Դրանք գրաբարից փոխանցված հնչյունափոխական ձևեր են: Այս բայերի ընդհանրությունն այն է, որ ձևակազմորեն պատճառական են, և դրանք բոլորն էլ չունեն անանցազուրկ ձևեր:

**Հարցնել, վերցնել, լցնել** բայերը ստացվել են **հարցանել, վերուցանել** (միջին հայերեն), **լցուցանել** ձևերից, այդ կարգին են պատկանում նաև **հրամցնել, յուրացնել** (նաև՝ *փակցնել, կասեցնել, հատկացնել, եզրակացնել, չափազանցնել*) բայերը, որոնք ունեն սովորական ներգործական սեռ:

Ընդհանուր շարքում հայտնված այդ բայերն ունեն կազմության տարբերություններ. առաջին խմբում բայեր են, որոնք բաղադրված են **ցն** անանցով՝ **վեր-ցն-ել, հրամ-ցն-ել, փակ-ցն-ել, կաս-եցն-ել, հատ-կ-ացն-ել, յուր-ացն-ել** (մի մասը՝ **-ոյց-ան->ցն** հնչյունափոխությամբ՝ *փակուցանել-փակցնել, կասեցուցանել-կասեցնել, յուրացուցանել-յուրացնել* ևն), մյուսներում **ց**-ն արմատական է՝ **լց-ն-ել, հարց-(ա)ն-ել, եզր-ա-կաց-ն(<ուցան)-ել, չափ-ա-զ-անց-ն-ել, անց-կաց-ն(<ուցան)-ել**: Հնչյունական յուրահատուկ փոփոխությամբ (**-ուցան**-ի սղումով) է ձևավորվել **դարձնել** բայը (**դառնալ**-ի պատճ, սպասելի էր՝ **դարձցնել** կամ **դարցնել**)՝ **դարձընել<դարձունել<դարձուցնել<դարձուցանել**:

Այս կարգի բայերը բառարանում նշվում են որպես **պատճառակերպ բայեր**: Դրանցից մի քանիսի կազմությունը բացատրվում է բառահոլվածում:

Դրանց հակառակ՝ կան բայեր, որոնք թեև ծագումնաբանորեն պատճառականի կազմություն ունեն, բայց ո՛չ ձևաբանորեն, ո՛չ իմաստով, ո՛չ էլ իրենց կազմության արդի ձևով չեն կարող պատճառականների մեջ դասվել. պարզ՝ աններածանց բայեր են՝ **զեկուցել, ծանուցել, կառուցել, հատուցել, հարուցել, մատուցել, ուսուց(ան)ել, սնուց(ան)ել**<sup>13</sup>:

Պատճառական սեռային առման քերականական նշանակություն չունեն նաև **ցն** անանց ունեցող բնածայնական չեզոք սեռի բայերը (բզզացնել, ֆշշացնել, խռռացնել, փնչացնել, փոթկացնել, խոմփացնել, վշշացնել), կամ

<sup>13</sup> **Աղայան Է.**, Բայակազմությունը ժամանակակից հայերենում//ԳԱ տեղեկագիր հասարակական գիտությունների, Եր., 1963, թիվ 5, էջ 27:

դրանց կրկնավոր բնածայնականները (ֆշֆշացնել, խոխոացնել, ծմծմացնել, ծլվլացնել, բլբլացնել, ճզճզացնել), որոնք սերում են սկզբնատիպ բնածայնական չեզոք սեռի բայերից (բզբզալ, ֆշշալ, փնչալ, փոթկալ, խոռալ ևն): Պետք է նկատի ունենալ, սակայն, որ բնածայնական չեզոք սեռի մի շարք բայեր պատճառական ածանցումով կրում են սեռային փոփոխություն. անանցողական սեռադասից անցնում են անցողականների՝ դրսևորելով պատճառականության յուրահատուկ իմաստ, ինչպես՝ **փոփոացնել առագաստները, շրխկացնել դուռը, թրխկթրխկացնել սեղանը, խշխշացնել թփուտները, ճպճպացնել շրթունքները, չփչփացնել ջուրը, կչկչացնել հավերին** ևն: Այս կարգի բայերի վերաբերյալ բառահոդվածներում արվում են համապատասխան նշումներ:

Հայ քերականակագիտության մեջ նկատվել է, որ ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր, որոնք արտահայտում են տեղափոխության, շարժման պարագայական ուղղվածության գաղափար: Այդպիսի բայերից են՝ **անցնել, ելնել, բարձրանալ, մագլցել, մտնել** ևն: Սրանք չեզոք սեռի են, բայց խոսքի մեջ երբեմն ներգործականի տպավորություն են թողնում՝ հանդես գալով ուղղական/հայցական հոլովի հետ, ինչպես՝ **անցնել ուղին/փողոցը/կամուրջը/գետը, մագլցել սարը/ժայռերը/լեռը/քարափը/լեռը, բարձրանալ ծառը/բլուրը/երկինք/սարը, առուն թռչել, սար ելնել, ճանապարհ գնալ, մտանք փետրվար ամիսը/գարուն, քայլի՛ր քեզ բաժին ընկած ճանապարհը**: Այս կառույցներում ուղղական/հայցական հոլովով հանդես եկած բառաձևերը իրենց բառական նշանակությամբ հիմնականում արտահայտում են տարածական կամ ժամանակային իմաստ. «...Դրանք որոշ դեպքերում խնդրի, որոշ դեպքերում՝ պարագայի մոտեցող անդամներ են, յուրահատուկ կիրառությամբ մի տեսակ խնդիր-պարագաներ են: Նման բոլոր դեպքերում մի բան պարզ է, որ մատնացույց արված բառերը չեզոք սեռի են, և նրանց մատնանշված կիրառությունները սեռային անցումներ չեն»<sup>14</sup>:

## ԱԾԱԿԱՆ

1. Նշվում է տեսակը՝ **հրբ. ած.** (հարաբերական ածական) կամ **որ. ած.** (որակական ածական) և կամ՝ **որ./հրբ. ած.**, կամ հակառակը՝ **հրբ./որ. ած.**՝ ըստ նախընտրության:

<sup>14</sup> Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Գիրք I, Եր., 1962, էջ 696:

2. Որակական ածականների համար նշվում են երկու աստիճանները (դրականը՝ որպես սկզբնաձև, տրվում է գլխաբառով)՝ համապատասխան կազմություններով (**(ա)գույն** ածանցը նշվում է ըստ գործածականության), այսպես՝

### **ՇՈՒՅԼ**

1. **որ. ած.**, բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

2. **ձևի մկբ.** (*Թեև շատ բան չուներ, բայց շոայլ հյուրասիրեց*):

**ՄԵԾ, որ. ած.**, բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից/մեծագույն**:

**ՀԱՋՈՐԴ, հրբ. ած.:**

**ՇՈՂՈՔՈՐԹ, որ./հրբ. ած.**, բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

### **ԹՎԱԿԱՆ**

1. Թվականները տրվում են քառաստիճան դասակարգմամբ՝ քանակական, բաշխական, դասական, կոտորակային: Բացի խոսքիմասային պատկանելության և տեսակի վերաբերյալ նշումներից՝ թվականի վերաբերյալ այլ նշում չի արվում, եթե այն չունի գործածության դժվարություններ, այսպես՝

**ՀԻՆԳ, քնկ. թվ.:**

**ԻՆԸ/ԻՆՆ, քնկ. թվ.**, բառամիջում՝ **ինն՝ հինսուն, հինական** ևն, երբեմն՝ **ինը՝ հնըհարկանի, հնըհատրոյակ**, առանձին կամ բառավերջում՝ բաղաձայնից առաջ՝ **ինը՝ հնը գիրք, տասնինը գիրք**, ձայնավորից առաջ՝ **ինն/ինը՝ հին անգամ/ինը անգամ, տասնինն անգամ/տասնինը անգամ**:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ, դսկ. թվ.:**

**ՀԻՆԳԱԿԱՆ/ՀՆԳԱԿԱՆ, բաշխ. թվ.:**

**ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ, կտրկ. թվ.:**

2. Քանակական թվականներից ներկայացվում են՝ **զրո (0)** -ից **տասը, հարյուր, հազար, միլիոն, միլիարդ** թվականները, դասականներից՝ **առաջին**-ից **տասներորդ**-ը, բաշխականներից՝ **մեկական**-ից **տասական**-ը (թվականի կրկնությամբ կազմված բաշխականները (**երեք-երեք, վեց-վեց** ևն), որպես կանոն, չեն տրվում), կոտորակայիններից՝ **մեկ երկրորդ**-ից **մեկ հինգերորդ**-ը:

3. Քանակական թվականներից մի քանիսը (որպես կանոն՝ *երկու, երեք, չորս, հինգ*, թվականները) բացատրական բառարաններում բնութագրվում են որպես երկարժեք խոսքի մասեր՝ թվական և գոյական, վերջինը՝ որպես գնահատականի անվանում: Ըստ որում, նշումները խիստ անմիօրինակ են. բերենք ընդամենը մեկ օրինակ՝ մի բառարանում **100**-ը համարվում է նաև գոյական, **20**-ը՝ միայն թվական (տե՛ս ԱՀԲԲ), մեկ այլ բառարանում լրիվ հակառակն է՝ **100**-ը՝ միայն թվական, **20**-ը՝ թվական և գոյական (տե՛ս ԺՀԼԲԲ): Այսօր, երբ գնահատման սանդղակը անսահմանորեն ընդլայնվել է, այդ նույն տրամաբանությամբ գոյական կարող են համարվել նաև մյուս բոլոր քանակական թվականները՝ **դասնմեկ-ը, դասնինը-ը, դասնիննուկես-ը, քսան-ը, ութսուն-ը, հարյուր-ը** և այսպես շարունակ: Հետևաբար խոսքիմասային երկրորդ նշումը (գոյական) դառնում է ոչ նպատակահարմար և ոչ այնքան համոզիչ:

## ԴԵՐԱՆՈՒՆ

1. Նշվում են դերանունների տեսակներն ըստ իմաստային խմբերի և ըստ այլ խոսքի մասերի հետ ունեցած հարաբերության, այսպես՝

**ԱՅԴ, ցուց. դեր., ածականանիշ (Այդ գիրքը հեղաբրքիր է), գոյականանիշ (Այդ չէ իմ ասածը):**

2. Դերանվանական հոլովման ենթարկվող դերանունների հոլովական հարացույցը նշվում է ամբողջությամբ, այսպես՝

## ՆԱ

I. **անձն. դեր., գոյականանիշ**, III դ., եզ. թ., հոլ.՝ դերանվանական՝ *սեռ.*՝ **նրա**, *դրկ.*՝ **նրան**, *բաց.*՝ **նրանից**, *գործ.*՝ **նրանով**, հոգն. թ.՝ **նրանք**, հոլ.՝ **ց՝ սեռ.-դրկ.**՝ **նրանց**, *բաց.*՝ **նրանցից**, *գործ.*՝ **նրանցով**, *ներգ.*՝ **նրանցում** (*սին.*՝ **նրանց միջավայրում** իմաստով) (**Նրանցում** ընդունված չէ այդ տոնը նշելը) (**Նա** կարդում էր գիրքը):

II. **ցուց. դեր., գոյականանիշ**, եզ. թ., հոլ.՝ դերանվանական՝ *սեռ.*՝ **նրա**, *դրկ.*՝ **նրան**, *բաց.*՝ **նրանից**, *գործ.*՝ **նրանով**, *ներգ.*՝ **նրանում**, հոգն. թ.՝ **նրանք**, հոլ.՝ **ց՝ սեռ.-դրկ.**՝ **նրանց**, *բաց.*՝ **նրանցից**, *գործ.*՝ **նրանցով**, *ներգ.*՝ **նրանցում** (*Դա չէ, այ նա՛ վերցրու*):

## ՄԱԿԲԱՅ

1. Նշվում է մակբայի իմաստային տեսակը. եթե ունի հոլովական ձևեր, նշվում են նաև դրանք, այսպես՝

**ՆՐԲՈՐԵՆ**, ձևի մկբ.:

**ԼԻՈՎԻՆ**, չափի մկբ.:

**ԱՄԵՆՈՒՐԵՔ**, տեղի մկբ.:

**ԱՅՍՕՐ**, ժանկի մկբ., վա/ի<sup>օ</sup>, բաց.՝ վանից/ից<sup>օ</sup>, գործ.՝ ու/վանուվ<sup>օ</sup>, ներգ.՝ վանում<sup>օ</sup>:

2. Եթե ընդհանրական մակբայ է և բազմիմաստություն է դրսևորում նույն կիրառության մեջ, ապա ներկայացվում է նույն օրինակով, իսկ եթե բազմիմաստությունը դրսևորվում է տարբեր կիրառություններում, ապա բերվում են համապատասխան օրինակներ, այսպես՝

**ՀԱՃԱՆ**, ձևի/չափի մկբ. (Նա **հաճախ** էր գալիս մեր տուն):

## ԲԵՐՆԵՐԵՐԱՆ

I. **ձևի մկբ.** (Լուրը **բերնբերան** տարածվեց ամբողջ գյուղով):

II. **չափի մկբ.** (Տակառը **բերնբերան** լցված էր ջրով):

3. Գոյականի և մակբայի հարաբերակցության և տարբերակման հարցը հայ քերականություններում քննարկվող հարցերից է: **Մ. Աբեղյանը** գոյականով կամ գոյական+կապով արտահայտված պարագաները կոչում է **պարագայական խնդիրներ**, իսկ մակբայով արտահայտվածները՝ **բուն պարագաներ**: Վերջիններին հարաբերակից ժամանականիշ բառերը (**այսօր, երեկ, վաղը, էգուց, հիմա, առաջ, այժմ**) համարում է գոյականներ, քանի որ դրանք, ըստ նրա, հոլովվող բառեր են ու պահում են իրենց հոլովական նշանակությունը և, ինչպես գոյականները, նախադասության մեջ հանդես են գալիս որպես պարագայական խնդիրներ: Այդպիսով լեզվաբանը հավասարության նշան է դնում այդ խմբի բառերի և ժամանականիշ գոյականների (**շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն**) միջև: Ակնհայտ է, սակայն, որ այս երկու խմբերի բառերը ունեն իմաստային, ձևակազմական և կիրառական տարբերություններ. առաջինները, ի տարբերություն երկրորդների, ոչ թե առարկայական, այլ գործողության ժամանակ են ցույց տալիս. չունեն

ընդգծված առարկայական նշանակություն, ինչպես երկրորդները: Եվ դրանով պայմանավորված՝ • սովորաբար հոգնակի թվով չեն գործածվում, • որպես կանոն, ենթակայի և խնդրի պաշտոններում հանդես չեն գալիս, կատարում են առավելապես ժամանակի պարագայի պաշտոն (**այսօր մեկնեց, վաղը կգա**), • գործածվում են հիմնականում սեռական-տրական և բացառական հոլովներով (**այսօրվա, առաջվա, վաղվանից**), • սովորաբար լրացումներ չեն ընդունում. չեն կապակցվում նաև քանակական թվականների հետ: Երկրորդներն ազատ գործածվում են նաև մյուս հոլովներով և հոգնակի թվով (**տարի-տարվա, տարուց, տարով, տարում; շաբաթներ, ամիսներ, տարիներ** ևն), առնում են որոշիչ լրացումներ, այդ թվում նաև թվականով (**ուրախ տարի, հաջող շաբաթ, գեղեցիկ առավոտ; հինգ ամիս, երեք տարի**): Հարցի հետագա ուսումնասիրողները, իհարկե, նկատել են Աբեղյանի մոտեցման այս որոշ «հակասականությունը» և արել մեկնաբանություններ<sup>15</sup>: Բոլոր դեպքերում, Աբեղյանի մոտեցումը ըստ էության «տեղավորվում է» մակբայի վերաբերյալ նրա տեսության շրջանակներում. Աբեղյանը մակբայ է համարում միայն բուն պարագայի պաշտոն կատարող և չթերվող բառերը, հետևաբար այս երկու կարգի բառախմբերն էլ նրա տեսությամբ ոչ մակբայներ են. «Բուն պարագաներին, — գրում է նա, — մոտենում են ժամանակի անուններից **այսօր, վաղը, էգուց, այժմ, հիմի, առաջ**, որոնք իբրև ժամանակ ցույց տվող բառեր՝ խոսքի մեջ սովորաբար պարագայական նշանակություն ունին և համարվում են մակբայ: Բայց այդ բառերը մակբայ համարելու հիմք չկա. մակբայներն անփոփոխ մնացող բառեր են, մինչդեռ դրանք հոլովվող բառեր են և խոսքի մեջ կատարելապես պահում են իրենց հոլովական նշանակությունները, ինչպես ամեն ուրիշ ժամանակի անուն՝ **շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն** և այլն»<sup>16</sup>: Գոյականի և մակբայի հարաբերակցության և դրանց տարբերակման հարցին հետագայում անդրադարձել է նաև **Ս. Աբրահամյանը**: Մակբայը ենթարկելով հիմնավոր ուսումնասիրության՝ լեզվաբանը, սակայն, մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ, կարծես, հստակ և հակասություններից զերծ դիրքորոշում չի արտահայտում: Այսպես. տարբեր առիթներով անդրադառնալով մակբայներին հարաբերակից գոյականների հոլովական ձևերին՝ նա մի կողմից՝ *տարածական-*

<sup>15</sup> Տե՛ս **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983, էջ 362-363: **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Եր., 2004, էջ 499-500:

<sup>16</sup> **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 382-383:

պարագայական իմաստ ունեցող **դուրս** և **ներս** բառերի **դրսում** և **ներսում** բառաձևերը համարում է գոյականների<sup>17</sup>, իսկ մյուս կողմից՝ *ժամանակային-պարագայական* իմաստ ունեցող նույնպիսի բառերի հոլովաձևերը (**հետագայում**, **հիմնականում**; **կեսօրին**, **կեսգիշերին**; **գիշերով**, **ցերեկով**) համարում է մակբայներ<sup>18</sup>: Կամ՝ միանգամայն ճիշտ կերպով մակբայներ համարելով *տարածական* իմաստ ունեցող **վեր**, **վար**, **հեռու**, **մեջտեղ** բառերի ուղիղ ձևերը՝ չի անդրադառնում դրանց թեքված ձևերին (**վերի**, **վերից**, **հեռվից**, **մեջտեղից**, **մեջտեղում** ևն). նախադասությամբ բերված նրա օրինակներում նշված բառերը գործածված են միայն ուղիղ ձևով<sup>19</sup>, և տպավորություն է ստեղծվում, որ լեզվաբանը հակված չէ դրանց թեքված ձևերը մակբայ համարելու:

Հարցի այսպիսի դրվածքի հետ այլ հետազոտողներ արդարացիորեն անհամաձայնություն ունեցան: Ըստ վերջինների՝ հավասարապես մակբայներ են նաև ոչ միայն **ներսում** և **դրսում** ձևերը, այլև **վեր**, **վար**, **հեռու**, **մեջտեղ** բառերի թեքված ձևերը, քանի որ առաջինները գրեթե զուրկ են առարկայական նշանակությունից (այդ պատճառով էլ չեն կարող որոշիչներ ընդունել՝ **լավ ներսում**, **մեծ դրսում**), իսկ երկրորդների «ուղիղ և թեք ձևերի միջև խոսքիմասային տարբերություններ չկան». երկուսն էլ «մակբայներ են կամ գտնվում են մակբայացման ճանապարհին»<sup>20</sup>: «Նմանապես ժամանակակից հայոց լեզվում կան նաև տեղի իմաստ արտահայտող մի խումբ բառեր (ինչպես՝ **առաջ**, **առջև**, **դուրս**, **ներս**, **ներքև**, **ետև**/**հետև**, **վեր**, **վերև**, **վար** և այլն), որոնք ոչ թե առարկայական, այլ գործողության հատկանշային տեղի իմաստ են արտահայտում, և բնականաբար, նույնպես ոչ թե գոյականներ, այլ մակբայներ են, որոնք և գործ են ածվում ինչպես ուղիղ, այնպես էլ թեք՝ հոլովական ձևով»<sup>21</sup>:

Ամփոփելով հարցի վերաբերյալ քննարկումները՝ որպես հավելում կուզեինք ասել հետևյալը: Ձևաբանական համակարգը չափազանց հարուստ է խոսքիմասային փոխանցումներով: Եվ իհարկե, առանձին դեպքերում շատ դժվար է այդ փոփոխությունների հորձանքում խոսքիմասային պատկանելիության հստակ սահմաններ գծել այս կամ այն բառի կամ բառախմբերի

<sup>17</sup> **Աբրահամյան Ս.**, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 230:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 252, 259:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 264:

<sup>20</sup> **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 1983, էջ 365:

<sup>21</sup> **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Եր., 2004, էջ 500:

միջև: Եվ երբեմն դրա անհրաժեշտությունն էլ չկա: Բոլոր դեպքերում, գոյական-մակբայ հարաբերակցությունը այն յուրահատուկ դաշտն է, որտեղ շատ ակնառու են այդ անցումները: Հայտնի է, որ մակբայների առաջացման հիմնական աղբյուրներից մեկը գոյականի հոլովածներն են. գրաբարից փոխանցվածներում ակտիվ են բացառական և գործիական հոլովները (**ներքուստ, արտաքուստ, հնուց, վաղուց, նորից, կամաց, միանգամից; սակավ, հազիվ, բնավ, մասամբ, անձամբ, դիտմամբ** ևն), նոր ժամանակներում զգալի ակտիվություն են հանդես բերում նաև սեռական-տրականի և ներգոյականի ձևերը (**լուսադեմին, իրինամուտին, կեսօրին, կեսգիշերին, դարամուտին, տարեմուտին, ամառնամուտին, տարեսկզբին, շաբաթավերջին; ներկայում, ապագայում, գալիքում, հետագայում, առաջիկայում, սկզբներում** ևն): Հաճախակի գործածվելով պարագայական նշանակությամբ և աստիճանաբար ընդգծելով իրենց ժամանակային, տարածական և պարագայական այլևայլ իմաստները, դրանք ձեռք են բերում մակբայի խոսքիմասային արժեք կամ առնվազն հայտնվում են մակբայացման ճանապարհին. հոլովական հարացույցից դուրս՝ խոսքային միջավայրում, դրանք ազատ կարող են համարվել նաև մակբայներ: Այս բառերի խոսքիմասային պատկանելությունը նշելիս մենք առաջնորդվել ենք այս մոտեցմամբ:

Ինչ վերաբերում է դրանց հոլովական ձևերին, որոնց մի մասը ունի միայն կամ զուգահեռ փոխանուն կիրառություն (ինչպես՝ *առաջվանից* (//=*առաջվանինից*), *այսօրվանով* (//=*այսօրվանինով*), *վաղվանից* (//=*վաղվանինից*), *վաղվանում* (//=*վաղվանինում*), *այսօրվանով* (//=*այսօրվանինով*) ևն), ապա դրանք բառարանում հիմնականում տրվում են՝ որպես գոյություն ունեցող կամ հնարավոր բառաձևեր:

## ԿԱՊ

1. Նշվում է կապի տեսակը՝ ըստ կազմավորման աստիճանականության (խկական, անխկական, կապական բառ), ըստ դիրքի (հետադրություն, նախադրություն, երկդրություն) և խնդրառությունը:

**ՆԿԱՏՄԱՄԲ**, իսկ. կապ, հտդ., խնդրո.՝ սեռ.-տրկ. (*աշակերտի* նկատմամբ), սեռ. (*նրա* նկատմամբ):

**ՎՐԱ**, անխկ. կապ, հտդ., յի, բաց.՝ յից, գործ.՝ յով, խնդրո.՝ սեռ.-տրկ. (*սեղանի վրա*), տրկ. (*մեզ վրա*):



2. Կապական բառերը տրվում են գլխաբառի հոդվածի վերջում՝ • նշանով, ինչպես՝

**ԱՆՈՒՆ, գոյ., ներ,** անվան/ի, բաց.՝ *անունից, գործ.՝ անունով/անվամբ, ներգ.՝ անունում\**, հոգն. ներգ.՝ *անուններում* (Նրա թվարկած **անուններում** իմ անունը չհնչեց):

• **ԱՆՈՒՆԻՑ, կակ. բառ, հտդ.,** խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (Դիմի՛ր նրան **դեկավարության** անունից), **սեռ.** (Դիմի՛ր նրան **մեր** անունից):

3. Հայտնի է, որ գոյականներից առաջացած և տարածական հարաբերություն արտահայտող մի քանի կապեր (մոտ, վրա, տակ, մեջ, առաջ, առջև, դիմաց, դեմ ևն) ունեն նաև հոլովված, հոգնակի, հոդով ձևեր (մոտից, մոտով, մոտները, մոտդ, մոտներդ; հետս, հետներս; վրայի, վրայից, վրայով; դիմացը, դիմացի, դիմացից; առջևի, առջևից, առջևով, առջևում ևն), որոնք նույնպես կապի դեր են կատարում: Բառահոդվածներում սրանց թեքված ձևերը տրվում են:

## ՇԱՂԿԱՊ

1. Նշվում է շաղկապի տեսակը՝ ըստ արտահայտած հարաբերության բնույթի՝ համադասական և ստորադասական, այսպես՝

**ՆԱԵՎ, հմդս. շղկ.:**

**ՈՐՊԵՍՁԻ, ստրդ. շղկ.:**

2. Եթե շաղկապը և՛ համադասական է, և՛ ստորադասական, ապա համապատասխան նշումի տեղում բերվում է նախադասությամբ, օրինակ, այսպես՝

## ԹԵ

**I. ստրդ. շղկ.** (Թվաց, **թե** երերում է):

**II. հմդս. շղկ.** (Աղջիկ **թե** տղա պար էին բռնել: Այսօր մասնակցելո՞ւ ես ժողովին, **թե՞** հետո կտեղեկանաս հարցերին):

3. Քերականություններում առանձնացվում են նաև մի փոքրիկ խումբ շաղկապներ, որոնք «հանդիսանում են հիմնականում համադասական շաղկապներ, բայց և որոշ չափով ստորադասականի իմաստ ունեն»: Դրանք հետևյալներն են՝ *այսինքն, այն է, ուստի, ուրեմն, հետևաբար, հետևապես, ուստի և, ուրեմն և, և ուրեմն, այնպես որ*: Ունեն հետևանքի իմաստ: Կոչվում են

**մակաբերական շաղկապներ**<sup>22</sup>: Այլ քերականներ դրանք կոչում են **մեկնական**՝ նկատի առնելով այն փաստը, որ «այդ շաղկապները թե՛ նախադասության անդամների և թե՛ նախադասությունների միջև արտահայտում են մեկնական հարաբերություններ»<sup>23</sup>: Բառարանում դրանք ներկայացվում են **մակաբ. (մակաբերական)** նշումով:

4. Շաղկապի իմաստային տեսակը (ներհակական, միավորիչ, տրոհական ևն) չի նշվում:

## **ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ**

1. Նշվում է վերաբերականի իմաստային տեսակը, այսպես՝

**ԱՀԱ, ցուց. վրբ.:**

2. Եթե ունի խոսքիմասային տարարժեքություն, ապա, ըստ կարգի, նշվում է համապատասխան օրինակով, **այսպես՝**

## **ՀԵՆՑ**

1. սաստկ. վրբ. (**Հենց** այդ գիրքն է անհրաժեշտ):

2. ստոր. շղկ. (**Հենց** անձրև սկսվի, կվերադառնանք):

## **ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

1. Նշվում է ձայնարկության տեսակը՝ ըստ իմաստային նշանակության, այսպես՝

## **ԷՀ**

I. **զգցկ. ձյնրկ.** (**Է՛հ, եկեք** այսօր մի լավ ուրախանանք):

II. **կչկ. ձյնրկ.** (**Է՛հ, ո՞վ կա** այդպեղ):

**ԽԸՇՇ, բնծ. ձյնրկ.:**

**ՔԸՇ, կչկ. ձյնրկ.:**

2. Եթե ձայնարկությունը ունի խնդրառություն, ապա, ըստ կարգի, նշվում է համապատասխան օրինակով՝

<sup>22</sup> Տե՛ս **Աբրահամյան Ս.**, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Եր., 1965, էջ 482-497:

<sup>23</sup> Տե՛ս **Գարեգինյան Գ.**, Շաղկապները ժամանակակից հայերենում, Եր., 1963, էջ 172:

**ՎԱՅ, զգցկ. ձյնրկ.,** խնդրո.՝ սեռ.-տրկ. (Վա՛յ մեր ապրած կյանքին), տրկ. (Վա՛յ մեզ, որ հավատացինք քո նմանին):

## 5. ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ

Քանի որ բառարանում ներկայացված բառապաշարը քաղված է ժամանակակից արևելահայերենի գրական գործուն բառաշերտից, հետևապես գլխաբառի վերաբերյալ որևէ կարգի նշում (հին, պատմական, հնացած, նոր, օտարաբանություն ևն) չի արվում՝ բացառությամբ շատ տարածված առանձին խոսակցական իմաստաձևային տարբերակների: Նորմավորող/գործառական բնույթի նշումները, որոնք արվում են բառաձևերի վերաբերյալ, տրվում են խորհրդանիշներով: Դրանք հետևյալներն են.

1. \* (**խոսակցական**). նշումը նկատի ունի արդի հայերենի խոսակցական տարբերակը՝ իր առօրեական գործածությամբ.
2. \*\* (**հնացած**). նշումը վերաբերում է այն բառաձևերին և բառիմաստներին, որոնք գրական հայերենում գործածական են եղել նախորդ դարի կեսերին կամ խորհրդային շրջանում և այժմ գործածությունից դուրս են եկել կամ, գոնե, ակտիվ գործածություն չունեն և աստիճանաբար դուրս են մղվում գրական լեզվից.
3. ◊ (**հազվադեպ**). վերաբերում է քիչ գործածական ձևերին. դրանք կանոնական կազմություններ են, սակայն սակավ գործածական,
4. ♦ (**անհանձնարարելի**). վերաբերում է լեզվում տակավին գործածվող, բայց քերականական-գործառական ինչ-ինչ հատկանիշներ չբավարարող (կանոնականություն, բարեհնչունություն, տարածվածություն ևն) ոչ նախընտրելի բառաձևերին:

Խորհրդանիշները դրվում են անմիջաբար բառաձևի վրա կամ քերականական նշումից անմիջապես հետո, այսպես՝

**ԱՄԵԼԻ, գոյ., ներ, ի/լու♦, բաց.՝ ից/լուց♦, գործ.՝ ով:**

### ԱՅԼԱՊԵՍ

1. հմդս. շղկ. (Գնա՛ այնտեղ, **այլապես** կկարծեն, թե վախենում ես):

2. ձևի մկբ.\*\* (Նա **այլապես** էր մտածում):

**ԱՍԵԼ, ...**

անց. կատ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ասացի//ասի\*/ասացինք//ասինք\*/ասեցի\*/ասեցինք\***, ժխտ.՝ **չասացի//չասի\*/չասացինք//չասինք\*/չասեցի\*/չասեցինք\***

**ԸՆՏՐԱՆԻ**

1. գոյ., ներ, նու/ի, բաց.' նուց/ից, գործ.' ուլ, ներգ.' ում (Ձեր առջև հայկական շոկոլադների համեղ ընտրանի է):
2. հրբ. ած.\*\* (Մեր ընտրանի խումբը կարողացավ հաղթել):

**ԱԶԳԱՅԻՆ**

1. հրբ. ած. (Ազգային պարը բոլորին դուր եկավ):
2. գոյ.\*\* (ազգական), ներ, ի, բաց.' ից, գործ.' ուլ (Իր մոտիկ ազգայիններին էլ չէր բարևում):

Բառարանը՝ որպես իր տեսակի մեջ առաջինը, կարծում ենք, կարևոր ներդրում կլինի հայ բառարանագրության մեջ: Այն կարող է հիմք դառնալ արդի հայերենի ամբողջական և ընդհանուր (արևելահայերեն և արևմտահայերեն) քերականական բառարանի կառուցման համար:

**ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ**

## ՏԻՊԱՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Վ՛

(ե լծորդության պարզ, բազմապատկական, կրավորակերպ  
և կրավորական բայեր)

**ԱՂՍՏԵԼ, նբ, ե լծ.**, կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (*ծեռքն* ազատել),  
**սեռ.-տրկ.** (*գերուն* ազատել), **բաց.** (*աշխատանքից* ազատել), **գործ.**  
(*պայքարով* ազատել), ենթ.՝ **(չ)ազատող**, հմկտ.՝ **(չ)ազատելիս**, հրկտ.՝  
**(չ)ազատած**, անկտ.՝ **ազատում**, վղկտ.՝ **ազատել**, ապկտ.՝ **ազատելու**,  
ժխտ.՝ **ազատի**

### □ Սահմանական եղանակ

անկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազատում եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք**  
**ազատում**

անկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազատում էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք**  
**ազատում**

վղկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազատել եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք** **ազատել**

վղկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազատել էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք** **ազատել**

ապկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազատելու եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք**  
**ազատելու**

ապկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազատելու էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք**  
**ազատելու**

անց. կատ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազատեցի/ազատեցինք**, ժխտ.՝ **չազա-**  
**տեցի/չազատեցինք**

### □ Ըղծական եղանակ

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազատեմ/ազատենք**, ժխտ.՝ **չազատեմ/չազա-**  
**տենք**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազատեի/ազատեինք**, ժխտ.՝ **չազատեի/չազա-**  
**տեինք**

### □ Ենթադրական (պայմանական) եղանակ

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **կազատեմ/կազատենք**, ժխտ.՝ **չեմ** **ազատի/չենք**  
**ազատի**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **կազատեի/կազատեինք**, ժխտ.՝ **չէի** **ազատի/**  
**չէինք** **ազատի**

□ **Հարկադրական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **պիտի/պետք է ազատեմ/ազատենք**, ժխտ.՝ **չպիտի/չպետք է ազատեմ/ազատենք** կամ՝ **պիտի/պետք է չազատեմ/չազատենք**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **պիտի/պետք է ազատեի/ազատեինք**, ժխտ.՝ **չպիտի/չպետք է ազատեի/ազատեինք** կամ՝ **պիտի/պետք է չազատեի/չազատեինք**

□ **Հրամայական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազատի՛ր/ազատե՛ք//ազատեցե՛ք**, արգ.՝ **մի՛ ազատիր/մի՛ ազատեք**

Կ<sup>2</sup>

(ե լծորդության -ն- և -չ- սուկածանցներով բայեր)

**ՓԱԽԶԵԼ**, չբ, ե լծ., կանոն., չ սուկած., խնդրո.՝ բաց. (փախչել *հեղապնդորդից*), գործ. (մեքենայով փախչել), ենթ.՝ (չ)փախչող, հմկտ.՝ (չ)փախչելիս, հրկտ.՝ (չ)փախած, անկտ.՝ փախչում, վղկտ.՝ փախել, ապկտ.՝ փախչելու, ժխտ.՝ փախչի

□ **Սահմանական եղանակ**

անկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **փախչում եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք փախչում**

անկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **փախչում էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք փախչում**

վղկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **փախել եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք փախել**

վղկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **փախել էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք փախել**

ապկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **փախչելու եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք փախչելու**

**փախչելու**

ապկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **փախչելու էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք փախչելու**

**փախչելու**

անց. կատ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **փախա/փախանք**, ժխտ.՝ **չփախա/չփախանք**

**խանք**

□ **Ըղծական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **փախչեմ/փախչենք**, ժխտ.՝ **չփախչեմ/չփախչենք**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **փախչեի/փախչեինք**, ժխտ.՝ **չփախչեի/չփախչեինք**

□ **Ենթադրական (պայմանական) եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **կփախչեմ/կփախչենք**, ժխտ.՝ **չեմ փախչի/չենք փախչի**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **կփախչեի/կփախչեինք**, ժխտ.՝ **չէի փախչի/չէինք փախչի**

□ **Հարկադրական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **պիտի/պետք է փախչեմ/փախչենք**, ժխտ.՝ **չպիտի /չպետք է փախչեմ/փախչենք** կամ՝ **պիտի/պետք է չփախչեմ/չփախչենք**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **պիտի/պետք է փախչեի/փախչեինք**, ժխտ.՝ **չպիտի/չպետք է փախչեի/փախչեինք** կամ՝ **պիտի/պետք է չփախչեի/չփախչեինք**

□ **Հրամայական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **փախի՛ր/փախե՛ք**, արգ.՝ **մի՛ փախիր/մի՛ փախեք**

Վ<sup>3</sup>

(ե լծորդության **-ացն, -եցն, -ցն** պատճառական ածանցներով, ինչպես նաև պատճառակերպ բայեր)

**ԱՃԵՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **եցն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (*բույսը աճեցնել*), **սեռ.-տրկ**. (*սերնդին աճեցնել*), **գործ**. (*պարարտանյութով աճեցնել*), ենթ.՝ **(չ)աճեցնող**, հմկտ.՝ **(չ)աճեցնելիս**, հրկտ.՝ **(չ) աճեցրած**, անկտ.՝ **աճեցնում**, վղկտ.՝ **աճեցրել**, ապկտ.՝ **աճեցնելու**, ժխտ.՝ **աճեցնի**

□ **Սահմանական եղանակ**

անկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աճեցնում եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք աճեցնում**

անկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աճեցնում էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք աճեցնում**

վղկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աճեցրել եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք աճեցրել**

վղկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աճեցրել էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք**  
**աճեցրել**

ապկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աճեցնելու եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք**  
**աճեցնելու**

ապկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աճեցնելու էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք**  
**աճեցնելու**

անց. կատ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աճեցրի/աճեցրինք**, ժխտ.՝ **չաճեցրի/  
չաճեցրինք**

□ **Ըղծական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աճեցնեմ/աճեցնենք**, ժխտ.՝ **չաճեցնեմ/չաճեց-  
նենք**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աճեցնեի/աճեցնեինք**, ժխտ.՝ **չաճեցնեի/չաճեց-  
նեինք**

□ **Ենթադրական (պայմանական) եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **կաճեցնեմ/կաճեցնենք**, ժխտ.՝ **չեմ աճեցնի/չենք  
աճեցնի**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **կաճեցնեի/կաճեցնեինք**, ժխտ.՝ **չէի աճեցնի/  
չէինք աճեցնի**

□ **Հարկադրական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **պիտի/պետք է աճեցնեմ/աճեցնենք**, ժխտ.՝  
**չպիտի/չպետք է աճեցնեմ/աճեցնենք** կամ՝ **պիտի/պետք է չաճեց-  
նեմ/չաճեցնենք**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **պիտի/պետք է աճեցնեի/աճեցնեինք**, ժխտ.՝  
**չպիտի/չպետք է աճեցնեի/աճեցնեինք** կամ՝ **պիտի/պետք է չաճեց-  
նեի/չաճեցնեինք**

□ **Հրամայական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աճեցրո՛ւ/աճեցրե՛ք**, արգ.՝ **մի՛ աճեցրու/  
մի՛ աճեցրեք**



(ա լծորդության պարզ բայեր)

**ԱՂԱԼ, նբ, ա լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց. (աղալ *ցորենը*), գործ. (աղացով աղալ), ենթ.՝ (չ)աղացող, հմկտ.՝ (չ)աղալիս, հրկտ.՝ (չ)աղացած, անկտ.՝ աղում, վղկտ.՝ աղացել, ապկտ.՝ աղալու, ժխտ.՝ աղա**

□ **Սահմանական եղանակ**

անկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աղում եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք աղում**  
անկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աղում էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք աղում**  
վղկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աղացել եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք աղացել**  
վղկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աղացել էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք աղացել**  
ապկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աղալու եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք աղալու**  
ապկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աղալու էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք աղալու**  
անց. կատ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աղացի/աղացինք**, ժխտ.՝ **չաղացի/չաղացինք**

□ **Ըղծական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աղամ/աղանք**, ժխտ.՝ **չաղամ/չաղանք**  
անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աղայի/աղայինք**, ժխտ.՝ **չաղայի/չաղայինք**

□ **Ենթադրական (պայմանական) եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **կաղամ/կաղանք**, ժխտ.՝ **չեմ աղա/չենք աղա**  
անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **կաղայի/կաղայինք**, ժխտ.՝ **չէի աղա/չէինք աղա**

□ **Հարկադրական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **պիտի/պետք է աղամ/աղանք**, ժխտ.՝ **չպիտի/չպետք է աղամ/աղանք** կամ՝ **պիտի/պետք է չաղամ/չաղանք**  
անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **պիտի/պետք է աղայի/աղայինք**, ժխտ.՝ **չպիտի/չպետք է աղայի/աղայինք** կամ՝ **պիտի/պետք է չաղայի/չաղայինք**

□ **Հրամայական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **աղա՛/աղացե՛ք**, արգ.՝ **մի՛ աղա/մի՛ աղացեք**

V<sup>5</sup>

(ա լծորդության **-ան-, -են-** սոսկածանցներով բայեր)

**ԱՋՆՎԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., խնդրո.՝ **գործ.** (գործով ազնվանալ), ենթ.՝ **(չ)ազնվացող**, հմկտ.՝ **(չ)ազնվանալիս**, հրկտ.՝ **(չ)ազնվացած**, անկտ.՝ **ազնվանում**, վղկտ.՝ **ազնվացել**, ապկտ.՝ **ազնվանալու**, ժխտ.՝ **ազնվանա**

□ **Սահմանական եղանակ**

անկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազնվանում եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք ազնվանում**

անկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազնվանում էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք ազնվանում**

վղկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազնվացել եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք ազնվացել**

վղկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազնվացել էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք ազնվացել**

ապկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազնվանալու եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք ազնվանալու**

ապկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազնվանալու էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք ազնվանալու**

անց. կատ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազնվացա/ազնվացանք**, ժխտ.՝ **չազնվացա/չազնվացանք**

□ **Ըղծական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազնվանամ/ազնվանանք**, ժխտ.՝ **չազնվանամ/չազնվանանք**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազնվանայի/ազնվանայինք**, ժխտ.՝ **չազնվանայի/չազնվանայինք**

□ **Ենթադրական (պայմանական) եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **կազնվանամ/կազնվանանք**, ժխտ.՝ **չեմ ազնվանա/չենք ազնվանա**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **կազնվանայի/կազնվանայինք**, ժխտ.՝ **չէի ազնվանա/չէինք ազնվանա**

□ **Հարկադրական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **պիտի/պետք է ազնվանամ/ազնվանանք**, ժխտ.՝ **չպիտի/չպետք է ազնվանամ/ազնվանանք** կամ՝ **պիտի/պետք է չազնվանամ/չազնվանանք**

անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **պիտի/պետք է ազնվանայի/ազնվանայինք**,  
 ժխտ.՝ **չպիտի/չպետք է ազնվանայի/ազնվանայինք** կամ՝ **պիտի/  
 պետք է չազնվանայի/չազնվանայինք**

□ **Հրամայական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **ազնվացի՛ր/ազնվացե՛ք**, արգ.՝ **մի՛ ազնվա-  
 ցիր/մի՛ ազնվացեք**

Բուն անկանոն և պակասավոր անկանոն բայերի խոնարհման հարացույց-  
 ները տրվում են բառահոդվածում. որպես օրինակ՝ բերվում են հարացույցի  
 միայն առաջին դեմքի եզակի և հոգնակի ձևերը՝ բացառությամբ **եմ, կամ,  
 գիրքեմ, ունեմ, արժեմ** պակասավոր անկանոն բայերի, որոնց հարացույց-  
 ները բերվում են ամբողջությամբ:

Անկանոնությունները դերբայական ձևերում և խոնարհման հարացույցում  
 ընդգծվում են: Այսպես՝

**ԴՆԵԼ, նք, ե լծ.**, անկանոն, ն սոսկած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (դնել *գիրքը*),  
**սեռ.-տրկ.** (*վիրավորին* դնել պատգարակին), **գործ.** (դնել *համակարգչով*),  
 ենթ.՝ (*չդնող*, հմկտ.՝ (*չդնելիս*, հրկտ.՝ (*չդրած*, անկտ.՝ **դնում**, վղկտ.՝  
**դրել**, ապկտ.՝ **դնելու**, ժխտ.՝ **դնի**

□ **Սահմանական եղանակ**

անկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **դնում եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք դնում**  
 անկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **դնում էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք դնում**  
 վղկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **դրել եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք դրել**  
 վղկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **դրել էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք դրել**  
 ապկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **դնելու եմ/ենք**, ժխտ.՝ **չեմ/չենք դնելու**  
 ապկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **դնելու էի/էինք**, ժխտ.՝ **չէի/չէինք դնելու**  
 անց. կատ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **դրեցի/դրի\*/դրեցինք/դրինք\***, ժխտ.՝  
**չդրեցի/չդրի\*/չդրեցինք/չդրինք\* ....**

□ **Հրամայական եղանակ**

ապ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ **դի՛ր/դրե՛ք**, արգ.՝ **մի՛ դիր/մի՛ դրեք:**

## ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐ

- \* — խոսակցական
- \*\* — հնացած
- ◊ — հազվադեպ
- ◆ — անհանձնարարելի
- ~ — նոր ձևավորվող և զուգահեռ գործող բառաձև
- — խոսքիմասային տարարժեքություն
- — խոնարհման հարացույց
- V<sup>1</sup> — ե լծորդության պարզ, բազմապատկական, կրավորակերպ և կրավորական բայեր
- V<sup>2</sup> — ե լծորդության **-ն-** և **-չ-** սուկաձանցներով բայեր
- V<sup>3</sup> — ե լծորդության **-ացն-**, **-եցն-**, **-ցն-** պատճառական աձանցներով, ինչպես նաև պատճառակերպ բայեր
- V<sup>4</sup> — ա լծորդության պարզ բայեր
- V<sup>5</sup> — ա լծորդության **-ան-**, **-են-** սուկաձանցներով բայեր

## Ա

**ԱԳԱՀ**, որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

### ԱՁԱՏ

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (*Ապրում էր ազապ կյանքով*):

2. ձևի մկբ. (*Այդ միջավայրում նա իրեն շապ ազապ էր զգում*):

**ԱՁԱՏԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (*ձեռքն ազատել*), **սեռ.-տրկ**. (*գերուն ազատել*), **բաց**. (*աշխատանքից ազատել*), **գործ**. (*զենքով ազատել*), ենթ.՝ **(չ)ազատող**, հմկտ.՝ **(չ)ազատելիս**, հրկտ.՝ **(չ)ազատած**, անկտ.՝ **ազատում**, վղկտ.՝ **ազատել**, ապկտ.՝ **ազատելու**, ժխտ.՝ **ազատի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱՁԱՏՎԵԼ**, **ԱՁԱՏԵԼ**-ի կրվ. (*Տարածքն ազատվեց բանվորների կողմից*), **չեզ**. (*Նա մի կերպ ազատվեց այդ համառ մարդուց*): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱՁԳ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԱՁԳԱԳՐԱԳԵՏ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

### ԱՁԳԱԿԱՆ

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Ազգականը** եկել էր այցելության):

2. հրբ. ած. (**Ազգական** մարդիկ շնորհավորեցին նրան):

### ԱՁԳԱՅԻՆ

1. հրբ. ած. (**Ազգային** պարը բոլորին դուր եկավ):

2. գոյ.\*\* (*ազգական*), ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (*Իր մոտիկ ազգայիններին էլ չէր բարևում*):

### ԱՁԳԱՅԻՆԱԿԱՆ

1. հրբ. ած. (**Ազգայնական** կոչեր էին գրված):

2. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Ազգայնականները** հավաքվել էին շենքի առջև):

**ԱՁԴԱԳԻՐ**, գոյ., գրեր, գրի, բաց.՝ **գրից**, գործ.՝ **գրով**, ներգ.՝ **գրում**:

**ԱՁԴԱՆՇԱՆ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԱՁԴԵԼ**, չբ (*ազդեցության ենթարկել իմաստով*) (*Եղանակը ազդում է բոլորի պրամադրության վրա*), Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **գործ**. (*միջոցներով ազդել*), նբ\*\* (*հուզել, որևէ զգացմունք առաջացնել իմաստով*) (*Ընկերոջ մահը մեծապես ազդել էր նրան*), ենթ.՝ **(չ)ազդող**, հմկտ.՝ **(չ)ազդելիս**,

հրկտ.՝ **(ջ)ազդած**, անկտ.՝ **ազդում**, վղկտ.՝ **ազդել**, ապկտ.՝ **ազդելու**,  
 Ժխտ.՝ **ազդի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱՂԴՎԵԼ, ԱՂԴԵԼ**\*\*-ի կրվ: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱՂԴՐ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԱՂՆԻՎ**

1. որ. ած., բղդտ.՝ **ավելի**, առավել, գրդ.՝ **ամենա-/ամենից/ազնվագույն**  
 (Ունեք **ազնիվ** բնավորություն):

2. ձևի մկբ. (**Ազնիվ** վարվեց ընկերոջ նկատմամբ):

**ԱՂՆՎԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., խնդրո.՝ **գործ**. (գործով  
 ազնվանալ), ենթ.՝ **(ջ)ազնվացող**, հմկտ.՝ **(ջ)ազնվանալիս**, հրկտ.՝ **(ջ)**  
**ազնվացած**, անկտ.՝ **ազնվանում**, վղկտ.՝ **ազնվացել**, ապկտ.՝ **ազնվա-**  
**նալու**, Ժխտ.՝ **ազնվանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԱՂՆՎԱՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց**.  
 (տեսակը ազնվացնել), **սեռ.-տրկ**. (մարդուն ազնվացնել), **գործ**. (դաս-  
 տիարակությանը ազնվացնել), ենթ.՝ **(ջ)ազնվացնող**, հմկտ.՝ **(ջ)ազնվաց-**  
**նելիս**, հրկտ.՝ **(ջ)ազնվացրած**, անկտ.՝ **ազնվացնում**, վղկտ.՝ **ազնվաց-**  
**րել**, ապկտ.՝ **ազնվացնելու**, Ժխտ.՝ **ազնվացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԱՂՆՎԱՑՎԵԼ, ԱՂՆՎԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱԼԵԿՈՑԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (ալեկոծել ջուրը),  
**սեռ.-տրկ**. (փխբ.) (ալեկոծել մարդուն), **գործ**. (փխբ.) (խոսքերով ալեկո-  
 ծել հոգին), ենթ.՝ **(ջ)ալեկոծող**, հմկտ.՝ **(ջ)ալեկոծելիս**, հրկտ.՝ **(ջ)ալեկո-**  
**ծած**, անկտ.՝ **ալեկոծում**, վղկտ.՝ **ալեկոծել**, ապկտ.՝ **ալեկոծելու**, Ժխտ.՝  
**ալեկոծի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱԼԵԿՈՑՎԵԼ, ԱԼԵԿՈՑԵԼ**-ի կրվ. (Ծովն **ալեկոծվում էր** ուժեղ քամուց), **չեզ**.  
 (Այդ պահին արքայի հոգին սաստիկ **ալեկոծված էր**): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱԼԵՎՈՐ**

1. հրբ. ած. (**Ալևոր** գլուխը դրել էր բարձին):

2. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Ալևորը** իմաստուն խորհուրդ փվեց):

**ԱԼԿՈՂՈՒԼ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԱԽՏԱԲԱՆ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԱԾԵԼԻ**, գոյ., ներ, ի/լու<sup>♦</sup>, բաց.՝ **ից/լուց<sup>♦</sup>**, գործ.՝ **ով**:

**ԱԾԽԱՂՈՐ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԱԾԽԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սուկած., ենթ.՝ **(ջ)ածխացող**, հմկտ.՝ **(ջ)ածխանալիս**, հրկտ.՝ **(ջ)ածխացած**, անկտ.՝ **ածխանում**, վղկտ.՝ **ածխացել**, ապկտ.՝ **ածխանալու**, ժխտ.՝ **ածխանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԱԾԽԱՑՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (*փայտը* ածխացնել), **սեռ.-տրկ.** (ածխացնել *մարդուն*), **գործ.** (*կրակով* ածխացնել), ենթ.՝ **(ջ)ածխացնող**, հմկտ.՝ **(ջ)ածխացնելիս**, հրկտ.՝ **(ջ)ածխացրած**, անկտ.՝ **ածխացնում**, վղկտ.՝ **ածխացրել**, ապկտ.՝ **ածխացնելու**, ժխտ.՝ **ածխացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԱԾԽԱՑՎԵԼ**, **ԱԾԽԱՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱԾՈՒԽ**, գոյ., ներ, ածխի//ի, բաց.՝ **ածխից//ից**, գործ.՝ **ածխով//ով**, ներգ.՝ **ածխում//ում**:

## ԱԿԱՄԱ

1. **ձևի մկբ.** (**Ակամա** մասնակցեց հավաքին):

2. **հրբ. ած.** (**Քեզ համաձայնելը նշանակում է լինել ակամա խաբերա**):

**ԱԿԱՆԱՋԵՐԾԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (ականազերծել *տարածքը*), **գործ.** (*սարքերով* ականազերծել), ենթ.՝ **(ջ)ականազերծող**, հմկտ.՝ **(ջ)ականազերծելիս**, հրկտ.՝ **(ջ)ականազերծած**, անկտ.՝ **ականազերծում**, վղկտ.՝ **ականազերծել**, ապկտ.՝ **ականազերծելու**, ժխտ.՝ **ականազերծի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱԿԱՆԱՋԵՐԾՎԵԼ**, **ԱԿԱՆԱՋԵՐԾԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱԿԱՆՋԱԿԱԼ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԱԿՆԱՐԿ՝** (*հայացքով կամ անուղղակի խոսքով նշան, թոռուցիկ հայացք*), **գոյ.**, ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (**Նա ակնարկ արեց, որ լռեմ**):

**ԱԿՆԱՐԿ՝** (*լրագրային ժանր*) **գոյ.**, ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (**Հմուտ վարպետի մասին մի ակնարկ էր տպվել ամսագրում**):

**ԱԿՆԹԱՐԹ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԱԿՆԿԱԼԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (ակնկալել *մեծ եկամուտ*), **բաց.** (ակնկալել *գործընկերներից*), ենթ.՝ **(ջ)ակնկալող**, հմկտ.՝ **(ջ)ակնկալելիս**, հրկտ.՝ **(ջ)ակնկալած**, ապառնի՝ **(ջ)ակնկալիք**, անկտ.՝ **ակնկալում**, վղկտ.՝ **ակնկալել**, ապկտ.՝ **ակնկալելու**, ժխտ.՝ **ակնկալի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱԿՆԿԱԼՎԵԼ**, **ԱԿՆԿԱԼԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱԿՆԿԱԼԻՔ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԱԿՆՈՑ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

### **ԱԿԱԳԻՆ**

1. որ./հրբ. ած. (Մի **ահագին** ժայռաբեկոր պոկվել, ընկել էր ճամփին):

2. չափի մկբ.\* (Ահագին սպասել եմ նրան):

**ԱԿԱԶԱՆԳ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

### **ԱԿԱԼԻՑ**

1. հրբ. ած. (Մտան մութ ու **ահալից** քարանձավը):

2. ձևի մկբ. (Ներսից մի ձայն կանչեց **ահալից**):

### **ԱԿԵՂ**

1. որ./հրբ. ած., բղղտ.՝ **ավելի**, **առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից/ահեղա-**  
**գույն** (Ահեղ փեսք ուներ):

2. ձևի մկբ. (Ահեղ գոչեց):

**ԱՂԱԼ**, նբ, ա լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (աղալ *ցորենը*), **գործ**.  
(աղացով աղալ), ենթ.՝ (**չ**)աղացող, հմկտ.՝ (**չ**)աղալիս, հրկտ.՝ (**չ**)աղա-  
**ցած**, անկտ.՝ **աղում**, վղկտ.՝ **աղացել**, ապկտ.՝ **աղալու**, ժխտ.՝ **աղա**:  
(տե՛ս V<sup>4</sup>)

**ԱՂԱՑՎԵԼ**, **ԱՂԱԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

### **ԱՂԱՆՂԱՎՈՐԱԿԱՆ**

1. հրբ. ած. (Աղանդավորական խումբն ուներ իր կանոնները):

2. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (Մի **աղանդավորական** մտավ սեն-  
յակ):

**ԱՂԱՆԴԵՐ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԱՂԱՎՆԻ**, գոյ., ներ, նու/ի, բաց.՝ **նուց/ից**, գործ.՝ **ով**:

**ԱՂՔՅՈՒՐԱԳԵՏ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԱՂԵՐՄ** (աղաչանք), **գոյ.**, ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Արքան  
լսեց աղբափի **աղերսը** և օգնեց նրան):

**ԱՂԵՐՄ**<sup>2</sup> (առնչություն, կապ), **գոյ.**, ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**  
(Այդ երկու ստեղծագործությունները որոշ **աղերսներ** ունեն):

### **ԱՂԵՐՍԱԳԻՆ**

1. ձևի մկբ. (Ձեռքն **աղերսագին** մեկնեց):

2. հրբ. ած. (Աղերսագին հայացքով նայում էր նրան):



**ԱՂԻ**, որ./հրբ. **ած.**, բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

**ԱՂՄԿԵԼ**, չբ, ե լծ., կանոն., պարզ, ենթ.՝ **(ջ)աղմկող**, հմկտ.՝ **(ջ)աղմկելիս**, հրկտ.՝ **(ջ)աղմկած**, անկտ.՝ **աղմկում**, վղկտ.՝ **աղմկել**, ապկտ.՝ **աղմկելու**, ժխտ.՝ **աղմկի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱՂՄՈՒԿ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում**:

**ԱՂՈԹԵԼ**, չբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (աղոթել *Աստծուն*), նբ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (աղոթել *որդուն*), ենթ.՝ **(ջ)աղոթող**, հմկտ.՝ **(ջ)աղոթելիս**, հրկտ.՝ **(ջ)աղոթած**, անկտ.՝ **աղոթում**, վղկտ.՝ **աղոթել**, ապկտ.՝ **աղոթելու**, ժխտ.՝ **աղոթի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱՂՈՏ՝**

1. (ոչ պայծառ), **հրբ. ած.** (*Հեռվում մի աղոտ լույս երևաց*):

2. (տարտամ, անորոշ), **ձևի մկբ.** (*Այդ ամենը հիմա աղոտ էր հիշում*):

**ԱՂՈՏ<sup>2</sup>** (վրան աղ քսած), **հրբ. ած.** (*Հացի աղոտ կտորը դրեց սեղանին*):

**ԱՂԶԻԿ**, գոյ., ներ, ջկա, բաց.՝ **ջկանից, գործ.՝ ջկանով**:

**ԱՂՎԵՍ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով**:

**ԱՂՔԱՍ**

1. **որ. ած.**, բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (*Մի աղքատ մարդ նստել էր բակում*):

2. **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով** (*Աղքատը պատուված հագուստով էր*):

3. **ձևի մկբ.** (*Ներս մտավ աղքատ հագնված մի մարդ*):

**ԱՂՔԱՍՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., ենթ.՝ **(ջ)աղքատացող**, հմկտ.՝ **(ջ)աղքատանալիս**, հրկտ.՝ **(ջ)աղքատացած**, անկտ.՝ **աղքատանում**, վղկտ.՝ **աղքատացել**, ապկտ.՝ **աղքատանալու**, ժխտ.՝ **աղքատանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԱՂՔԱՍՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ացն** պատճ. **ած.**, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (*հողը աղքատացնել ֆոսֆորից*), **սեռ.-տրկ.** (*մարդուն աղքատացնել*), **գործ.** (*պատճամիջոցով աղքատացնել*), ենթ.՝ **(ջ)աղքատացնող**, հմկտ.՝ **(ջ)աղքատացնելիս**, հրկտ.՝ **(ջ)աղքատացրած**, անկտ.՝ **աղքատացնում**, վղկտ.՝ **աղքատացրել**, ապկտ.՝ **աղքատացնելու**, ժխտ.՝ **աղքատացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԱՂՔԱՍՑՎԵԼ**, **ԱՂՔԱՍՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱՃԵԼ**, չբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **բաց** (աճել *հողից*), ենթ.՝ **(ջ)աճող**, հմկտ.՝ **(ջ)աճելիս**, հրկտ.՝ **(ջ)աճած**, անկտ.՝ **աճում**, վղկտ.՝ **աճել**, ապկտ.՝ **աճելու**, ժխտ.՝ **աճի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱՃԵՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., եցն պատճ. ած., խնդրո.՝ ուղղ.-հայց. (բույսը աճեցնել), սեռ.-տրկ. (սերնդին աճեցնել), գործ. (պարարտանյութով աճեցնել) ենթ.՝ (չ)աճեցնող, հմկտ.՝ (չ)աճեցնելիս, հրկտ.՝ (չ)աճեցրած, անկտ.՝ աճեցնում, վղկտ.՝ աճեցրել, ապկտ.՝ աճեցնելու, ժխտ.՝ աճեցնի: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԱՃԵՑՎԵԼ**, **ԱՃԵՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱՄԱՅԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., ան սոսկած., ենթ.՝ (չ)ամայացող, հմկտ.՝ (չ)ամայանալիս, հրկտ.՝ (չ)ամայացած, անկտ.՝ ամայանում, վղկտ.՝ ամայացել, ապկտ.՝ ամայանալու, ժխտ.՝ ամայանա: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԱՄԱՅԱՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., ացն պատճ. ած., խնդրո.՝ ուղղ.-հայց. (բնակավայրը ամայացնել), գործ. (թունաքիմիկատներով ամայացնել տարածքը), ենթ.՝ (չ)ամայացնող, հմկտ.՝ (չ)ամայացնելիս, հրկտ.՝ (չ)ամայացրած, անկտ.՝ ամայացնում, վղկտ.՝ ամայացրել, ապկտ.՝ ամայացնելու, ժխտ.՝ ամայացնի: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԱՄԱՅԱՑՎԵԼ**, **ԱՄԱՅԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԱՄԱՅԻ**, որ. ած., բղղտ.՝ ավելի, առավել, գրղ.՝ ամենա-/ամենից:

**ԱՄԱՆ՝** (կերակուր և այլ նյութեր պահելու անոթ, փարա), գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում (Կերակուրը լցրեց մի ամանի մեջ):

**ԱՄԱՆ՝**<sup>2</sup> (վշտի, ցավի, վտանգի բացականչություն), զգցկ. ձյնրկ. (Ամա՛ն, մի՛ հիշեցրու դա):

**ԱՄԱՆՈՐ**, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

**ԱՄԱՌ**, գոյ., ներ, ամոան/վա/ի, բաց.՝ ամոանից/վանից/ից, գործ.՝ ամոանով/վանով/ով:

**ԱՄԲՈՒՍԱՎԱՐ**, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:

**ԱՄԲՈՂՋ**, որոշ. դեր., ածականանիշ:

**ԱՄԲՈՂՋԱԿԱՆ**

1. հրբ./որ. ած. (Վերջապես ստացվեց ամբողջական պատկեր):
2. ձևի մկբ. (Նա կարողացավ ծրագիրը համակողմանի և ամբողջական ներկայացնել):

**ԱՄԵՆ՝** (բղղր, համայն, յուրաքանչյուր), որոշ. դեր., ածականանիշ (Ամեն քայլափոխի ծաղիկներ էր փեսնում) (փոխանուն ամենից ձևը կազմում է ածականի համեմատության աստիճան (ամենից լավ/զեղեցիկ):

**ԱՄԵՆ<sup>2</sup>** (եղիցի, թող լինի, ճշմարիտ է), **հստպ. վրբ.** (Հավիտյանս հավիտենից, **ամեն՛ն**):

**ԱՄԵՆԱՄՅԱ**, հրբ. **ած.**:

**ԱՄԵՆՔԸ/Ս/Դ**, որոշ. դեր., **գոյականանիշ**, **ամենքի**, բաց.՝ **ամենքից**, գործ.՝ **ամենքով**, ներգ.՝ **ամենքում**<sup>Ք</sup>:

**ԱՄԵՆՕՐՅԱ**, հրբ. **ած.**:

**ԱՄԻՍ**, գոյ., **ներ**, **ամսի/ամսվա**, բաց.՝ **ամսից/ամսվանից**, գործ.՝ **ամսով/ամսվանով**, ներգ.՝ **ամսում**:

**ԱՄՈՒՍԻՆ**, գոյ., **ներ**, **սնու**, բաց.՝ **սնուց**, գործ.՝ **սնով/ով**:

**ԱՄՈՒՄՆԱՆԱԼ**, չբ, **ա լծ.**, կանոն., **ան** սուկած., ենթ.՝ **(չ)ամուսնացող**, հմկտ.՝ **(չ)ամուսնանալիս**, հրկտ.՝ **(չ)ամուսնացած**, անկտ.՝ **ամուսնանում**, վղկտ.՝ **ամուսնացել**, ապկտ.՝ **ամուսնանալու**, ժխտ.՝ **ամուսնանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԽԵՂՃԱՑՆԵԼ, նբ, ե լծ.,** կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (խեղճացնել *միջավայրը*), **սեռ.-տրկ.** (խեղճացնել *մարդուն*), **գործ.** (խեղճացնել *ճնշմամբ*), ենթ.՝ **(չ)խեղճացնող,** հմկտ.՝ **(չ)խեղճացնելիս,** հրկտ.՝ **(չ)խեղճացրած,** անկտ.՝ **խեղճացնում,** վղկտ.՝ **խեղճացրել,** ապկտ.՝ **խեղճացնելու,** ժխտ.՝ **խեղճացնի:** (տե՛ս V<sup>3</sup>)

**ԽԵՂՃԱՑՎԵԼ, ԽԵՂՃԱՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽԵՂՃՈՒԹՅՈՒՆ, գոյ., ներ, թյան, բաց.՝ ից, գործ.՝ թյամբ/ով, ներգ.՝ ում:**  
**ԽԵՆԹ**

1. **գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով** (**խենթի** հետ պետք չէ վիճել):

2. **որ. ած., բղղտ.՝ ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից** (Այդ **խենթ** պղան չի գիտակցում իր արարքների հետևանքները):

**ԽԵՑԳԵՏԻՆ, գոյ., ներ, գետնի, բաց.՝ գեպնից/ից, գործ.՝ գեպնով/ով:**

**ԽԵՑԵՂԵՆ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԽԵՑԻ, գոյ., ներ, ցու/ի, բաց.՝ ից/ցուց, գործ.՝ ով, ներգ.՝ ում/ցում:**

**ԽԹԱՆ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԽԹԱՆԵԼ, նբ, ե լծ.,** կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (խթանել *աշխատանքը*), **սեռ.-տրկ.** (խթանել *մարդուն*), **գործ.** (խթանել *սարքով*), ենթ.՝ **(չ)խթանող,** հմկտ.՝ **(չ)խթանելիս,** հրկտ.՝ **(չ)խթանած,** անկտ.՝ **խթանում,** վղկտ.՝ **խթանել,** ապկտ.՝ **խթանելու,** ժխտ.՝ **խթանի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽԹԱՆՎԵԼ, ԽԹԱՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽԻՂԾ, գոյ., եր, խղճի/ի, բաց.՝ խղճից/ից, գործ.՝ խղճով/ով:**

**ԽԻՃ, գոյ., խճեր/եր, խճի/ի, բաց.՝ խճից/ից, գործ.՝ խճով/ով, ներգ.՝ խճում/ում:**

**ԽԻՆԴ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԽԻՍՏ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից/խստագույն (խիստ ու անաչառ մարդ էր):**

2. ձևի մկբ. (**խիստ մի՛ վարվեք նրա հետ):**

**ԽԼԵԼ, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց. (խլել իրը), սեռ.-տրկ. (խլել մարդուն), բաց. (խլել մեկից), գործ. (խլել ձեռքով), ենթ.՝ (չ)խլող, հմկտ.՝ (չ)խլելիս, հրկտ.՝ (չ)խլած, անկտ.՝ խլում, վղկտ.՝ խլել, ապկտ.՝ խլելու, ժխտ.՝ խլի: (տե՛ս V<sup>1</sup>)**

**ԽԼՎԵԼ, ԽԼԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՂՃՈՎ, որ./հրբ. ած., բղղտ.՝ ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից: (տե՛ս նաև ԽԻՂՃ-ի գործ. հոլով)**

**ԽՃՈՒՂԻ, գոյ., ներ, ղու/ի, բաց.՝ ղուց/ից, գործ.՝ ղով/ով, ներգ.՝ ղում/ում:**

**ԽՄԱԾ, հրբ. ած., (Ամեն օր խմած փուն էր գալիս օրորվելով):**

• **ԽՄԱԾ, ԽՄԵԼ-ի հրկտ. դերբայ (Իր խմած հյութը նրան համեղ թվաց):**

**ԽՄԲԱԳԻՐ, գոյ., ներ, գրի, բաց.՝ գրից, գործ.՝ գրով:**

**ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԽՄԵԼ, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց. (խմել ջուր), գործ. (խմել բաժակով), ենթ.՝ (չ)խմող, հմկտ.՝ (չ)խմելիս, հրկտ.՝ (չ)խմած, անկտ.՝ խմում, վղկտ.՝ խմել, ապկտ.՝ խմելու, ժխտ.՝ խմի: (տե՛ս V<sup>1</sup>)**

**ԽՄՎԵԼ, ԽՄԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՄԵՑՆԵԼ, նբ, Ե լծ., կանոն., եցն պատճ. ած., խնդրո.՝ սեռ.-տրկ. (խմեցնել մարդուն), գործ. (խմեցնել բաժակով), ենթ.՝ (չ)խմեցնող, հմկտ.՝ (չ)խմեցնելիս, հրկտ.՝ (չ)խմեցրած, անկտ.՝ խմեցնում, վղկտ.՝ խմեցրել, ապկտ.՝ խմեցնելու, ժխտ.՝ խմեցնի: (տե՛ս V<sup>3</sup>)**

**ԽՄԵՑՎԵԼ, ԽՄԵՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՄԻԶՔ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԽՄՈՐ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԽՄՈՐԵՂԵՆ**

1. գոյ., ի, բաց.՝ ից, գործ.՝ ով (**խմորեղենը շատ համեղ էր):**

2. հրբ. ած. (**Մեզ հյուրասիրեցին խմորեղեն ուտելիքներ):**

**ԽՆԱՄԱԿԱԼ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**



**ԽՆԱՄԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (խնամել *ծաղիկներ*), **սեռ.-տրկ.** (խնամել *հիվանդին*), **գործ.** (խնամել *սարքերով*), ենթ.՝ **(ջ)խնամող**, հմկտ.՝ **(ջ)խնամելիս**, հրկտ.՝ **(ջ)խնամած**, անկտ.՝ **խնամում**, վղկտ.՝ **խնամել**, ապկտ.՝ **խնամելու**, ժխտ.՝ **խնամի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՆԱՄՎԵԼ**, **ԽՆԱՄԵԼ**-ի կրվ. (Ծաղիկները **խնամվում** էին մայրիկի կողմից), **չեզ.** (Աղջիկը **խնամված** տեսք ուներ): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՆԱՄԻ**, գոյ., ներ, մու/ի, բաց.՝ **մուց/ից**, գործ.՝ **ով**:

**ԽՆԱՄՔ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԽՆԴԻՐ**, գոյ., ներ, դրի/խնդրո<sup>օ</sup>, բաց.՝ **դրից/ից**, գործ.՝ **դրով/ով**, ներգ.՝ **դրում/ում**:

**ԽՆԴՐԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (խնդրել *օգնություն*), **սեռ.-տրկ.** (խնդրել *ընկերոջը*), **բաց.** (խնդրել *մեկից*), **գործ.** (խնդրել *զանգով*), ենթ.՝ **(ջ)խնդրող**, հմկտ.՝ **(ջ)խնդրելիս**, հրկտ.՝ **(ջ)խնդրած**, անկտ.՝ **խնդրում**, վղկտ.՝ **խնդրել**, ապկտ.՝ **խնդրելու**, ժխտ.՝ **խնդրի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՆԴՐՎԵԼ**, **ԽՆԴՐԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՆԴՈՒՆ**, որ. ած., բղղտ.՝ **ավելի**, առավել, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

**Խ(Ի)ՆԿԱԼԻ**, գոյ., ներ, լու/ի, բաց.՝ **լուց/ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԽՆՁՈՐԵՆԻ**, գոյ., ներ, նու/ի, բաց.՝ **նուց/ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում/նում**:

**ԽՇՇԱԼ/ԽՇԽՇԱԼ**, չբ, ա լծ., կանոն., պարզ, ենթ.՝ **(ջ)խշշացող**, հմկտ.՝ **(ջ)խշշալիս**, հրկտ.՝ **(ջ)խշշացած**, անկտ.՝ **խշշում**, վղկտ.՝ **խշշացել**, ապկտ.՝ **խշշալու**, ժխտ.՝ **խշշա**: (տե՛ս V<sup>4</sup>)

**ԽՇՇԱՑՆԵԼ/ԽՇԽՇԱՑՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (խշշացնել *հագուստը*), **գործ.** (խշշացնել *հովհարով*), ենթ.՝ **(ջ)խշշացնող**, հմկտ.՝ **(ջ)խշշացնելիս**, հրկտ.՝ **(ջ)խշշացրած**, անկտ.՝ **խշշացնում**, վղկտ.՝ **խշշացրել**, ապկտ.՝ **խշշացնելու**, ժխտ.՝ **խշշացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԽՇՇԱՑՎԵԼ**, **ԽՇՇԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՂԱԲՈՒՅԾ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԽՈԺՈՒ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի**, առավել, գրղ.՝ **ամենա-/ամենից** (Անծանոթի **խոժոռ** հայացքը անհանգստացնող էր):

2. ձևի մկբ. (**խոժոռ** ու սևեռուն նայում էր շուրջը):

**ԽՈՆՏԵՄ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից/-(ա)գույն** (*խոհեմ ու բանիմաց մասնագետներ են*):

2. ձևի մկբ. (*խոհեմ վարվեցիք՝ ընդունելով առաջարկը*):

**ԽՈՆԱՎ**, որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** /խոնավագույն:

**ԽՈՆԱՐՀ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից/-(ա)գույն** (*խոնարհ ու գեղեցիկ աղջիկ էր Օհաննան*):

2. ձևի մկբ. (*խոնարհ ու լուռ տանում էր բոլոր հանդիմանությունները*):

**ԽՈՆԱՐՀԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (խոնարհել *գլուխը*), **սեռ.-տրկ**. (խոնարհել *կրծքին*), ենթ.՝ **(չ)խոնարհող**, հմկտ.՝ **(չ)խոնարհելիս**, հրկտ.՝ **(չ)խոնարհած**, անկտ.՝ **խոնարհում**, վղկտ.՝ **խոնարհել**, ապկտ.՝ **խոնարհելու**, ժխտ.՝ **խոնարհի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՆԱՐՀՎԵԼ**, **ԽՈՆԱՐՀԵԼ-ի կրվ.** (*Ծառերը խոնարհվում էին քամուց*), **չեզ**. (*Նա խոնարհվեց մոր առջև*): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՇՈՐ**, որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** /խոշորագույն:

**ԽՈՉԸՆԴՈՏԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (խոչընդոտել *գարգացումը*), **սեռ.-տրկ**. (խոչընդոտել *ընկերոջը*), **գործ**. (խոչընդոտել *սարքերով*), ենթ.՝ **(չ)խոչընդոտող**, հմկտ.՝ **(չ)խոչընդոտելիս**, հրկտ.՝ **(չ)խոչընդոտած**, անկտ.՝ **խոչընդոտում**, վղկտ.՝ **խոչընդոտել**, ապկտ.՝ **խոչընդոտելու**, ժխտ.՝ **խոչընդոտի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՉԸՆԴՈՏՎԵԼ**, **ԽՈՉԸՆԴՈՏԵԼ-ի կրվ.**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՍԱԿԻՑ**, գոյ., ներ, կցի, բաց.՝ **կցից**, գործ.՝ **կցով**:

**ԽՈՍԱՓՈՂ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԽՈՍԵԼ**, նբ (*ասել* իմաստով), Ե լծ., կանոն., պարզ՝ խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (խոսել *խոսք*), **բաց**. (խոսել *դասերից*), **գործ**. (խոսել *հեռախոսով*), **չբ** (*գրուցել* իմաստով) (*Նա խոսում էր ընկերոջ հետ*), ենթ.՝ **(չ)խոսող**, հմկտ.՝ **(չ)խոսելիս**, հրկտ.՝ **(չ)խոսած**, ապառնի՝ **(չ)խոսելիք**, անկտ.՝ **խոսում**, վղկտ.՝ **խոսել**, ապկտ.՝ **խոսելու**, ժխտ.՝ **խոսի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՍՎԵԼ**, **ԽՈՍԵԼ-ի կրվ.**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՍԵԼԻՔ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**խոսելիքը** մտահոգում էր նրան):

- **ԽՈՍԵԼԻՔ**, **ԽՈՍԵԼ**-ի ապառնի դերբայ (*Ձեկուցողը մտքում վերլուծում էր խոսելիք թեման*):

**ԽՈՍԵՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **եցն** պատճ. ած., խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (խոսեցնել *մարդուն*), **բաց.** (խոսեցնել *գործից*), ենթ.՝ **(չ)խոսեցնող**, հմկտ.՝ **(չ)խոսեցնելիս**, հրկտ.՝ **(չ)խոսեցրած**, անկտ.՝ **խոսեցնում**, վղկտ.՝ **խոսեցրել**, ապկտ.՝ **խոսեցնելու**, ժխտ.՝ **խոսեցնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԽՈՍԵՑՎԵԼ**, **ԽՈՍԵՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՏՀԱՐՔ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԽՈՐ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի**, **առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից/խորագույն** (**խոր** նկուղում պահում էին ձմռան պաշարը):
2. ձևի մկբ. (*Թաքստոցը շատ խոր փորեցին*):

**ԽՈՐԱՆԱՐԴ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (*Երեխայի խաղալիքը խորանարդի տեսք ուներ*):
2. հրբ. ած.՝ (**խորանարդ** բյուրեղիկներ էին թափված հատակին):

**ԽՈՐԱՊԵՍ**, ձևի մկբ.:

**ԽՈՐԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., ենթ.՝ **(չ)խորացող**, հմկտ.՝ **(չ)խորանալիս**, հրկտ.՝ **(չ)խորացած**, անկտ.՝ **խորանում**, վղկտ.՝ **խորացել**, ապկտ.՝ **խորանալու**, ժխտ.՝ **խորանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԽՈՐԱՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (խորացնել *հարաբերությունները*), **գործ.** (խորացնել *փայտով*), ենթ.՝ **(չ)խորացնող**, հմկտ.՝ **(չ)խորացնելիս**, հրկտ.՝ **(չ)խորացրած**, անկտ.՝ **խորացնում**, վղկտ.՝ **խորացրել**, ապկտ.՝ **խորացնելու**, ժխտ.՝ **խորացնի**:

**ԽՈՐԱՑՎԵԼ**, **ԽՈՐԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՐԹ**, որ. ած.:

**ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԽՈՐՀՈՒՐԴ**, գոյ., ներ, հրղի/ի, բաց.՝ **հրղից/ից**, գործ.՝ **հրղով/ով**, ներգ.՝ **հրղում/ում**:

**ԽՈՐՈՎԱԾ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Հյուրերին բանջարեղենի բերելու **խորոված** մատուցեցին):

- **ԽՈՐՈՎԱԾ**, **ԽՈՐՈՎԵԼ**-ի հրկտ. դերբայ (Նրա **խորոված** բանջարեղենը շատ համեղ էր):

**ԽՈՐՈՎԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (խորովել *միսը*), **սեռ.-տրկ**. (խորովել *կենդանուն*), **գործ**. (խորովել *թավայրով*), ենթ.՝ **(չ)խորովող**, հմկտ.՝ **(չ)խորովելիս**, հրկտ.՝ **(չ)խորոված**, անկտ.՝ **խորովում**, վղկտ.՝ **խորովել**, ապկտ.՝ **խորովելու**, ժխտ.՝ **խորովի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՐՈՎԵԼ**, **ԽՈՐՈՎԵԼ**-ի կրվ. (Բանջարեղենը **խորովվեց** խոհարարի կողմից), **չեզ**. (**խորովվեց** արևի տակ երկար մնալուց): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՐՈՒԹՅՈՒՆ**, գոյ., ներ, թյան, բաց.՝ **ից**, գործ.՝ **թյամբ/ով**, ներգ.՝ **ում**:

**ԽՈՐՔ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԽՈՅՈՏԵԼ**, նբ, ե լծ., կանոն., ոտ բազմ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (խոցոտել *սիրտը*), **սեռ.-տրկ**. (խոցոտել *կենդանուն*), **գործ**. (խոցոտել *նիզակով*), ենթ.՝ **(չ)խոցոտող**, հմկտ.՝ **(չ)խոցոտելիս**, հրկտ.՝ **(չ)խոցոտած**, անկտ.՝ **խոցոտում**, վղկտ.՝ **խոցոտել**, ապկտ.՝ **խոցոտելու**, ժխտ.՝ **խոցոտի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՅՈՏԵԼ**, **ԽՈՅՈՏԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

## **ԽՌՈՎ**

1. **որ**. ած., բղղտ.՝ **ավելի**, առավել, գրղ.՝ **ամենա-/ամենից** (Նրա **խոով** հոգին այդպես էլ չհանդարտվեց):

2. **ձևի մկբ**. (Ողջ կյանքում իրարից **խոով** ապրեցին):

**ԽՌՈՎԵԼ**, նբ (խանգարել իմաստով), ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (խոովել *անդորրը*), **գործ**. (խոովել *ներկայությամբ*), **չբ** (*ներանալ* իմաստով), խնդրո.՝ **բաց**. (խոովել *ընկերոջից*), ենթ.՝ **(չ)խոովող**, հմկտ.՝ **(չ)խոովելիս**, հրկտ.՝ **(չ)խոոված**, անկտ.՝ **խոովում**, վղկտ.՝ **խոովել**, ապկտ.՝ **խոովելու**, ժխտ.՝ **խոովի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՌՈՎԵԼ**, **ԽՌՈՎԵԼ**-ի կրվ. (Նրա *անդորրը* **խոովվեց** այցելուի կողմից), **չեզ**. (Ծովը **խոովված** էր): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՌՈՎԿԱՆ**, հրբ. ած.:

**ԽՏԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., աճ սոսկած., ենթ.՝ **(չ)խտացող**, հմկտ.՝ **(չ)խտանալիս**, հրկտ.՝ **(չ)խտացած**, անկտ.՝ **խտանում**, վղկտ.՝ **խտացել**, ապկտ.՝ **խտանալու**, ժխտ.՝ **խտանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԽՏԱՑՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., ացն պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (խտացնել *գույները*), **գործ.** (խտացնել *նյութերով*), ենթ.՝ **(ջ)խտացնող**, հմկտ.՝ **(ջ)խտացնելիս**, հրկտ.՝ **(ջ)խտացրած**, անկտ.՝ **խտացում**, վղկտ.՝ **խտացրել**, ապկտ.՝ **խտացնելու**, ժխտ.՝ **խտացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԽՏԱՑՎԵԼ**, **ԽՏԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՐԱԽՃԱՆՔ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԽՅԱՆՈՒՄ**, գոյ., ներ, նման/ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **նմամբ/ով**:

**ԽՈՒԼ**<sup>1</sup> (լսողությունից գուրկ)

1. **որ. ած.** (**խուլ** բուժատուի լսողությունը վիրահատությամբ վերականգնվեց):

2. **ձևի մկբ.** (Ձորը **խուլ** արծազանքում էր գետի շտաշյունին):

**ԽՈՒԼ**<sup>2</sup> (պալար), գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Դեմքը պատրված էր **խուլերով**):

**ԽՈՒՄՔ**, գոյ., խմբեր, խմբի, բաց.՝ **խմբից**, գործ.՝ **խմբով**, ներգ.՝ **խմբում**:

**ԽՈՒՆԿ**, գոյ., եր, խնկի/ի, բաց.՝ **խնկից/ից**, գործ.՝ **խնկով/ով**, ներգ.՝ **խնկում/ում**:

**ԽՈՒՍԱՓԵԼ**, չբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **բաց.** (խուսափել *հանդիպումից*), ենթ.՝ **(ջ)խուսափող**, հմկտ.՝ **(ջ)խուսափելիս**, հրկտ.՝ **(ջ)խուսափած**, անկտ.՝ **խուսափում**, վղկտ.՝ **խուսափել**, ապկտ.՝ **խուսափելու**, ժխտ.՝ **խուսափի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՈՒՑ**, գոյ., խցեր/եր, խցի/ի, բաց.՝ **խցից/ից**, գործ.՝ **խցով/ով**, ներգ.՝ **խցում/ում**:

**ԽՓԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (խփել *մեխը*), **սեռ.-տրկ.** (ծեռքը խփել *սեղանին*), **գործ.** (խփել *մուրճով*), ենթ.՝ **(ջ)խփող**, հմկտ.՝ **(ջ)խփելիս**, հրկտ.՝ **(ջ)խփած**, անկտ.՝ **խփում**, վղկտ.՝ **խփել**, ապկտ.՝ **խփելու**, ժխտ.՝ **խփի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԽՓՎԵԼ**, **ԽՓԵԼ**-ի կրվ. (Նկարը **խփվեց** պատին հոր կողմից), **չեզ.** (Վահանը անզգուշաբար ընկավ և որջ ուժով **խփվեց** հատակին): (տե՛ս V<sup>1</sup>)

## Ծ

**ԾԱԳԵԼ**, չբ, ե լծ., կանոն., պարզ, ենթ.՝ **(չ)ծագող**, հմկտ.՝ **(չ)ծագելիս**, հրկտ.՝ **(չ)ծագած**, անկտ.՝ **ծագում**, վղկտ.՝ **ծագել**, ապկտ.՝ **ծագելու**, ժխտ.՝ **ծագի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱԼԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (ծալել *թուղթը*), **գործ**. (ծալել *ձեռքով*), ենթ.՝ **(չ)ծալող**, հմկտ.՝ **(չ)ծալելիս**, հրկտ.՝ **(չ)ծալած**, անկտ.՝ **ծալում**, վղկտ.՝ **ծալել**, ապկտ.՝ **ծալելու**, ժխտ.՝ **ծալի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱԼՎԵԼ**, **ԾԱԼԵԼ**-ի կրվ. (Օձիքը **ծալվել էր** դերձակի հմուտ ձեռքով), **չեզ**. (Ծնկները *հանկարծ ծալվեցին*, ու նա կուչ եկավ պատի տակ):

**ԾԱԽԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (ծախել *ապրանք*), **սեռ.-տրկ**. (ծախել *ընկերոջը*), ենթ.՝ **(չ)ծախող**, հմկտ.՝ **(չ)ծախելիս**, հրկտ.՝ **(չ)ծախած**, անկտ.՝ **ծախում**, վղկտ.՝ **ծախել**, ապկտ.՝ **ծախելու**, ժխտ.՝ **ծախի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱԽՎԵԼ**, **ԾԱԽԵԼ**-ի կրվ. (Ապրանքը **ծախվեց** վաճառականի կողմից), **չեզ**. (Թուլամորթ գորականը **ծախվեց** թշնամուն): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱԾԿ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԾԱԾԿԱԳԻՐ**, գոյ., գրեր, գրի, բաց.՝ **գրից**, գործ.՝ **գրով**, ներգ.՝ **գրում**:

**ԾԱԾԿԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (ծածկել *դեմքը*), **սեռ.-տրկ**. (ծածկել *երեխային*), **բաց**. (դեմքը *ծածկել քամուց*), **գործ**. (ծածկել *վերմակով*), ենթ.՝ **(չ)ծածկող**, հմկտ.՝ **(չ)ծածկելիս**, հրկտ.՝ **(չ)ծածկած**, անկտ.՝ **ծածկում**, վղկտ.՝ **ծածկել**, ապկտ.՝ **ծածկելու**, ժխտ.՝ **ծածկի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱԾԿՎԵԼ**, **ԾԱԾԿԵԼ**-ի կրվ. (Երեխան **ծածկվեց** մոր կողմից), **չեզ**. (Նա **ծածկվեց** տաք վերմակով ու քնեց): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱԾՈՒԿ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից** (Թաքնվեց մի **ծածուկ** վայրում):

2. ձևի մկբ. (Խումբը **ծածուկ էր** գործում):

**ԾԱԿԱԶՔ**, հրբ./որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից**:

**ԾԱԿԵԼ/ԾԱԿԾԿԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (ծակել *պատը*), **սեռ.-տրկ**. (ծակել *ընկերոջը*), **գործ**. (ծակել *գործիքով*), ենթ.՝

(չ)ծակող, հմկտ.՝ (չ)ծակելիս, հրկտ.՝ (չ)ծակած, անկտ.՝ ծակում, վղկտ.՝ ծակել, ապկտ.՝ ծակելու, ժխտ.՝ ծակի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱԿՎԵԼ/ԾԱԿԾԿՎԵԼ, ԾԱԿԵԼ/ԾԱԿԾԿԵԼ-ի կրվ.** (Ականջը ծակվեց մասնագետի կողմից), **չեգ.** (Տարան ծակվել էր): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱԿՈՏԻ, գոյ., ներ, տու/ի, բաց.՝ Կրուց/ից, գործ.՝ ով, հոգն. ներգ.՝ ներում:**  
**ԾԱԿՈՏԿԵՆ, հրբ.ած.:**

**ԾԱՂԻԿ, գոյ., ներ, ղկի/ի, բաց.՝ ղկից/ից, գործ.՝ ղկով/ով, հոգն. ներգ.՝ ներում:**

**ԾԱՂԱԲՈՒՅԼ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾԱՂԱԳՈՐԾ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾԱՂԱՏՈՆ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾԱՂԿԵԼ, նբ** (նկարագարդել իմաստով), **ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց.** (ծաղկել գիրքը), **գործ.** (ծաղկել վրձինով), **չբ** (ծաղիկ տալ, ծաղիկներ բացվել իմաստով) (Պարտեզում գեղեցիկ ծաղիկներ էին ծաղկել), ենթ.՝ (չ)ծաղկող, հմկտ.՝ (չ)ծաղկելիս, հրկտ.՝ (չ)ծաղկած, անկտ.՝ ծաղկում, վղկտ.՝ ծաղկել, ապկտ.՝ ծաղկելու, ժխտ.՝ ծաղկի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՂԿԵՑՆԵԼ, նբ, ե լծ., կանոն., եցն** պատճ. ած., խնդրո.՝ ուղղ.-հայց. (ծաղկեցնել խոսքը), **սեռ.-տրկ.** (ծաղկեցնել մարդուն), **գործ.** (ծաղկեցնել խոսքով), ենթ.՝ (չ)ծաղկեցնող, հմկտ.՝ (չ)ծաղկեցնելիս, հրկտ.՝ (չ)ծաղկեցրած, անկտ.՝ ծաղկեցնում, վղկտ.՝ ծաղկեցրել, ապկտ.՝ ծաղկեցնելու, ժխտ.՝ ծաղկեցնի: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԾԱՂԿԵՑՎԵԼ, ԾԱՂԿԵՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՂԿԵՓՈՒՆՋ, գոյ., փնջեր/եր, փնջի/ի, բաց.՝ փնջից/ից, գործ.՝ փնջով/ով, ներգ.՝ փնջում/ում:**

**ԾԱՂԿՈՒՆՔ, գոյ., ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾԱՂՐ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾԱՂՐԱԾՈՒ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾԱՂՐԵԼ, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց.** (ծաղրել արտաքինը), **սեռ.-տրկ.** (ծաղրել երեխային), **գործ.** (ծաղրել վերաբերմունքով), ենթ.՝ (չ)ծաղրող, հմկտ.՝ (չ)ծաղրելիս, հրկտ.՝ (չ)ծաղրած, անկտ.՝ ծաղրում, վղկտ.՝ ծաղրել, ապկտ.՝ ծաղրելու, ժխտ.՝ ծաղրի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՂՐՎԵԼ, ԾԱՂՐԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՄԵԼ/ԾԱՄԾՄԵԼ, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց.** (ծամել ուրելիքը), **գործ.** (ծամել արամներով), ենթ.՝ **(չ)ծամող,** հմկտ.՝ **(չ)ծամելիս,** հրկտ.՝ **(չ)ծամած,** անկտ.՝ **ծամում,** վղկտ.՝ **ծամել,** ապկտ.՝ **ծամելու,** ժխտ.՝ **ծամի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՄՎԵԼ/ԾԱՄԾՄՎԵԼ, ԾԱՄԵԼ/ԾԱՄԾՄԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՄԿԱԼ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾԱՅՐԱԿԵՏ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾԱՅՐԱՀԵՂ**

1. **որ. ած., բղղտ.՝ ավելի, առավել, գրղ.՝ ամենա-/ամենից (Ծայրահեղ իրավիճակում էր գտնվում):**

2. **չափի մկբ. (Ծայրահեղ ծանր հանգամանքներում էր հայտնվել):**

**ԾԱՅՐԱՄԱՍ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾԱՆՈԹ**

1. **որ./հրբ. ած. (Ծանոթ միջավայրում հայտնվելը նրան հանգստացրեց):**

2. **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով (Ծանոթներիցս մեկը օգնեց ինձ):**

**ԾԱՆՈԹԱՆԱԼ, չբ, ա լծ., կանոն., ան սոսկած., խնդրո.՝ սեռ.-տրկ.** (ծանոթանալ պայմաններին), ենթ.՝ **(չ)ծանոթացող,** հմկտ.՝ **(չ)ծանոթանալիս,** հրկտ.՝ **(չ)ծանոթացած,** անկտ.՝ **ծանոթանում,** վղկտ.՝ **ծանոթացել,** ապկտ.՝ **ծանոթանալու,** ժխտ.՝ **ծանոթանա:** (տե՛ս V<sup>5</sup>)

**ԾԱՆՈԹԱՑՆԵԼ, նբ, Ե լծ., կանոն., ացն պատճ. ած., խնդրո.՝ ուղղ.-հայց.** (ծանոթացնել տարածքը), **սեռ.-տրկ.** (ծանոթացնել հանգամանքներին), ենթ.՝ **(չ)ծանոթացնող,** հմկտ.՝ **(չ)ծանոթացնելիս,** հրկտ.՝ **(չ)ծանոթացրած,** անկտ.՝ **ծանոթացնում,** վղկտ.՝ **ծանոթացրել,** ապկտ.՝ **ծանոթացնելու,** ժխտ.՝ **ծանոթացնի:** (տե՛ս V<sup>3</sup>)

**ԾԱՆՈԹԱՑՎԵԼ, ԾԱՆՈԹԱՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՆՐ**

1. **որ. ած., բղղտ.՝ ավելի, առավել, գրղ.՝ ամենա-/ամենից/-(ա)գույն (Ուներ ծանր բնավորություն):**

2. **ձևի մկբ. (Շատ ծանր տարավ այդ լուրը):**

**ԾԱՆՐԱՄԱՐՏ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾԱՆՐԱՆԱԼ, չբ, ա լծ., կանոն., ան սոսկած., ենթ.՝ (չ)ծանրացող,** հմկտ.՝ **(չ)ծանրանալիս,** հրկտ.՝ **(չ)ծանրացած,** անկտ.՝ **ծանրանում,** վղկտ.՝ **ծանրացել,** ապկտ.՝ **ծանրանալու,** ժխտ.՝ **ծանրանա:** (տե՛ս V<sup>5</sup>)



**ԾԱՆՐԱՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (ծանրացնել *վիճակը*), **գործ.** (ծանրացնել *վարքով*), ենթ.՝ **(չ)ծանրաց-նող**, հմկտ.՝ **(չ)ծանրացնելիս**, հրկտ.՝ **(չ)ծանրացրած**, անկտ.՝ **ծանրացում**, վղկտ.՝ **ծանրացրել**, ապկտ.՝ **ծանրացնելու**, ժխտ.՝ **ծանրացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԾԱՆՐԱՑՎԵԼ**, **ԾԱՆՐԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՆՐԱԶՈՓ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆ**, գոյ., ներ, թյան, բաց.՝ **ից**, գործ.՝ **թյամբ/ով**, ներգ.՝ **ում**:

**ԾԱՆՈՒՑԱԳԻՐ**, գոյ., գրեր, գրի, բաց.՝ **գրից**, գործ.՝ **գրով**, ներգ.՝ **գրում**:

**ԾԱՌԱՅԱԿԻՑ**, գոյ., ներ, կցի, բաց.՝ **կցից**, գործ.՝ **կցով**:

**ԾԱՌԱՅԵԼ**, չբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (ծառայել *հայրենիքին*), **գործ.** (ծառայել *գործով*), ենթ.՝ **(չ)ծառայող**, հմկտ.՝ **(չ)ծառայելիս**, հրկտ.՝ **(չ)ծառայած**, անկտ.՝ **ծառայում**, վղկտ.՝ **ծառայել**, ապկտ.՝ **ծառայելու**, ժխտ.՝ **ծառայի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՌԱՅԵՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **եցն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (ծառայեցնել *միտքը*), **սեռ.-տրկ.** (ծառայեցնել *մարդուն*), **գործ.** (ծառայեցնել *գումարով*), ենթ.՝ **(չ)ծառայեցնող**, հմկտ.՝ **(չ)ծառայեցնելիս**, հրկտ.՝ **(չ)ծառայեցրած**, անկտ.՝ **ծառայեցում**, վղկտ.՝ **ծառայեցրել**, ապկտ.՝ **ծառայեցնելու**, ժխտ.՝ **ծառայեցնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԾԱՌԱՅԵՑՎԵԼ**, **ԾԱՌԱՅԵՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՌԱՅՈՂ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (*Հանրային ծառայողների աշխատավարձը բարձրացրել են*):

- **ԾԱՌԱՅՈՂ**, **ԾԱՌԱՅԵԼ**-ի ենթ. դերբայ (*Հայրենիքին ծառայող ամեն ոք արժանի է խոնարհումի*):

**ԾԱՌԱՏՈՒՆԿ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԾԱՎԱԼԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (ծավալել *գործուներություն*), **գործ.** (ծավալել *մասնակցությամբ*), ենթ.՝ **(չ)ծավալող**, հմկտ.՝ **(չ)ծավալելիս**, հրկտ.՝ **(չ)ծավալած**, անկտ.՝ **ծավալում**, վղկտ.՝ **ծավալել**, ապկտ.՝ **ծավալելու**, ժխտ.՝ **ծավալի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՎԱԼՎԵԼ**, **ԾԱՎԱԼԵԼ**-ի կրվ. (*Պայքարը ծավալվեց մարտիկների կողմից*), **չեզ.** (*Հրդեհը ծավալվեց ողջ գյուղում*): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԱՎԱԼՈՒՆ**, որ. ած., բղղտ.՝ **ավելի**, առավել, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

**ԾԱՐԱՎ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով** (Վերջապես հազեցրեց իր **ծարավը**):
2. որ./հրբ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից** (Ծարավ հոգին հազեցրեց):

**ԾԵԾ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾԵԾԵԼ, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրոն.՝ ուղղ.-հայց.** (ծեծել *դուռը*), **սեռ.-տրկ.** (ծեծել *երեխային*), **գործ.** (ծեծել *մտրակով*), ենթ.՝ **(չ)ծեծող**, հմկտ.՝ **(չ)ծեծելիս**, հրկտ.՝ **(չ)ծեծած**, անկտ.՝ **ծեծում**, վղկտ.՝ **ծեծել**, ապկտ.՝ **ծեծելու**, ժխտ.՝ **ծեծի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԵԾՎԵԼ, ԾԵԾԵԼ** -ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԵԾՎՈՏԵԼ, նբ, Ե լծ., կանոն., կոտ** բազմ. ած., խնդրոն.՝ **սեռ.-տրկ.** (ծեծկոտել *տղային*), ենթ.՝ **(չ)ծեծկոտող**, հմկտ.՝ **(չ)ծեծկոտելիս**, հրկտ.՝ **(չ)ծեծկոտած**, անկտ.՝ **ծեծկոտում**, վղկտ.՝ **ծեծկոտել**, ապկտ.՝ **ծեծկոտելու**, ժխտ.՝ **ծեծկոտի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԵԾՎՈՏՎԵԼ, ԾԵԾՎՈՏԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԵՐ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից** (Ծեր մարդը մոտեցավ երիտասարդին):
2. գոյ., եր, ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով** (Գյուղի **ծերերը** հավաքվել էին բակում):

**ԾԵՐԱՆԱԼ, չբ, ա լծ., կանոն., ան** սուկած., ենթ.՝ **(չ)ծերացող**, հմկտ.՝ **(չ)ծերանալիս**, հրկտ.՝ **(չ)ծերացած**, անկտ.՝ **ծերանում**, վղկտ.՝ **ծերացել**, ապկտ.՝ **ծերանալու**, ժխտ.՝ **ծերանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԾԵՐԱՑՆԵԼ, նբ, Ե լծ., կանոն., ացն** պատճ. ած., խնդրոն.՝ **ուղղ.-հայց.** (ծերացնել *դեմքը*), **սեռ.-տրկ.** (ծերացնել *մարդուն*), **գործ.** (ծերացնել *նյութերով*), ենթ.՝ **(չ)ծերացնող**, հմկտ.՝ **(չ)ծերացնելիս**, հրկտ.՝ **(չ)ծերացրած**, անկտ.՝ **ծերացնում**, վղկտ.՝ **ծերացրել**, ապկտ.՝ **ծերացնելու**, ժխտ.՝ **ծերացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԾԵՐԱՑՎԵԼ, ԾԵՐԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԵՐՈՒՎ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով** (Ծերուկը հայացքը հառել էր հեռուն):
2. հրբ. ած. (Ծերուկ Սիմոնը անճանաչելի էր դարձել):

**ԾԵՐՈՒՆԻ**

1. գոյ., ներ, նու/ի, բաց.՝ **նուց/ից, գործ.՝ նով/ով** (Ծերունին ձեռքը տարավ գրպանը):

2. հրբ. ած. (Մերունի սիրտը չդիմացավ ցավին):

**Ծեֆ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾեֆԱԳՈՐԾ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**Ծեֆել, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց.** (ծեփել *հատրակը*), **սեռ.-տրկ.** (ծեփել *պատիին*), **գործ.** (ծեփել *ձեռքով*), ենթ.՝ **(չ)ծեփող**, հմկտ.՝ **(չ)ծեփելիս**, հրկտ.՝ **(չ)ծեփած**, անկտ.՝ **ծեփում**, վղկտ.՝ **ծեփել**, ապկտ.՝ **ծեփելու**, ժխտ.՝ **ծեփի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**Ծեֆվել, Ծեֆել-ի կրվ.** (Հատրակը **ծեփվեց** վերանորոգողի կողմից), **չեգ.** (Սպանված կենդանին **ծեփվեց** գետնին): (տե՛ս V<sup>1</sup>)

**Ծիւ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, հոգն. ներգ.՝ երում:**

**ԾիժԱՂ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾիժԱՂԵԼ, չբ, ե լծ., կանոն., պարզ, ենթ.՝ (չ)ծիծաղող**, հմկտ.՝ **(չ)ծիծաղելիս**, հրկտ.՝ **(չ)ծիծաղած**, անկտ.՝ **ծիծաղում**, վղկտ.՝ **ծիծաղել**, ապկտ.՝ **ծիծաղելու**, ժխտ.՝ **ծիծաղի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾիժԱՂԵՑՆԵԼ, նբ, ե լծ., կանոն., եցն** պատճ. ած., խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (ծիծաղեցնել *մարդուն*), ենթ.՝ **(չ)ծիծաղեցնող**, հմկտ.՝ **(չ)ծիծաղեցնելիս**, հրկտ.՝ **(չ)ծիծաղեցրած**, անկտ.՝ **ծիծաղեցնում**, վղկտ.՝ **ծիծաղեցրել**, ապկտ.՝ **ծիծաղեցնելու**, ժխտ.՝ **ծիծաղեցնի:** (տե՛ս V<sup>3</sup>)

**ԾիժԱՂԵՑՎԵԼ, ԾիժԱՂԵՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

### ԾԻԾԱՂԿՈՏ

1. հրբ. ած. (Նրա **ծիծաղկոտ** հայացքը գրավեց ներկաներին):

2. ձևի մկբ. (Նա **ծիծաղկոտ** նայում էր մարդկանց):

**Ծիւ, կչկ. ձյնրկ.:**

**ԾիՍԱԿԱՐԳ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾիՐԱՆԱԶԻՐ, գոյ., չրեր, չրի, բաց.՝ չրից, գործ.՝ չրով, ներգ.՝ չրում:**

**ԾիՐԱՆԵՆԻ, գոյ., ներ, նու/ի, բաց.՝ նուց/ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

### ԾԻՐԱՆԻ՝

1. (բոցագույն), **որ. ած. (Ծիրանի արշալույսը լեռների ճերմակ գագաթներին է փարվել):**

2. (ծիրանեգույն անթևք զգեստ), **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում** (Ներս մտավ արքայազնը՝ շքեղ **ծիրանին** ուսերին):

**ԾԻՐԱՆԻ՝<sup>2</sup>** (ծիրանենի), **գոյ., ներ, նու/ի, բաց.՝ նուց/ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում** (Ծիրանին զարդարված էր գեղեցիկ ծաղիկներով):

**ԾԼԵԼ**, չբ, Ե լծ., կանոն., պարզ, ենթ.՝ **(չ)ծլող**, հմկտ.՝ **(չ)ծլելիս**, հրկտ.՝ **(չ)ծլած**, անկտ.՝ **ծլում**, վղկտ.՝ **ծլել**, ապկտ.՝ **ծլելու**, ժխտ.՝ **ծլի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԽԱԼ**, չբ, ա լծ., կանոն., պարզ, ենթ.՝ **(չ)ծխացող**, հմկտ.՝ **(չ)ծխալիս**, հրկտ.՝ **(չ)ծխացած**, անկտ.՝ **ծխում**, վղկտ.՝ **ծխացել**, ապկտ.՝ **ծխալու**, ժխտ.՝ **ծխա**:

**ԾԽԱԽՈՏ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԾԽԱՄՈՐՃ**, գոյ., ներ/եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԾԽԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (ծխել *ծխախոր*), գործ. (ծխել *ծխամորճու*), ենթ.՝ **(չ)ծխող**, հմկտ.՝ **(չ)ծխելիս**, հրկտ.՝ **(չ)ծխած**, *ապառնի՝ (չ)ծխելիք*, անկտ.՝ **ծխում**, վղկտ.՝ **ծխել**, ապկտ.՝ **ծխելու**, ժխտ.՝ **ծխի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԽԵԼԻՔ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (*Տղամարդն անցորդից ծխելիք խնդրեց*):

- **ԾԽԵԼԻՔ**, **ԾԽԵԼ**-ի ապառնի դերբայ (*Ձեռքում պահել էր ծխելիք գլանակը*):

**ԾԽԵՏՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., եցն պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (ծխեց-նել *ծառերը*), ենթ.՝ **(չ)ծխեցնող**, հմկտ.՝ **(չ)ծխեցնելիս**, հրկտ.՝ **(չ)ծխեցրած**, անկտ.՝ **ծխեցնում**, վղկտ.՝ **ծխեցրել**, ապկտ.՝ **ծխեցնելու**, ժխտ.՝ **ծխեցնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԾԽԵՑՎԵԼ**, **ԾԽԵՏՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾԽՆԻ**, գոյ., ներ, նու/ի, բաց.՝ **նուց/ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԾՂՈՏ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, հոգն. ներգ.՝ **ներում**:

**ԾՂՐԻԴ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԾՄԱԿ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (*Ծմակում փեղ-փեղ ձյուն էր մնացել*):
2. հրբ. ած. (*Ծմակ անփառներում խիփ ծառեր էին աճել*):

**ԾՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (ծնել *զավակ*), սեռ.-տրկ. (ծնել *երեխային*), ենթ.՝ **(չ)ծնող**, հմկտ.՝ **(չ)ծնելիս**, հրկտ.՝ **(չ)ծնած**, անկտ.՝ **ծնում**, վղկտ.՝ **ծնել**, ապկտ.՝ **ծնելու**, ժխտ.՝ **ծնի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾՆՎԵԼ**, **ԾՆԵԼ**-ի կրվ. (*Նոր գաղափարներ ծնվեցին ղեկավարի կողմից*), **չեզ**. (*Նա ծնվել է հեռավոր մի գյուղում*): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾՆԿԱԶՈՔ**

1. ձևի մկբ. (Ծնկաչոք աղոթում էր Աստուծուն):
2. հրբ. ած. (Ծնկաչոք մարդը հուսահատ վիճակում էր):

**ԾՆՆԴԱԿԱՆ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Ծննդականում փոլայի անունը այլ էր նշված):
2. հրբ. ած.\*\* (<իշում էի նրանց **ծննդական** թվականները):

**ԾՆՆԴԱՎԱՅՐ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾՆՆԴԱՏՈՒՆ, գոյ., տներ, տան, բաց.՝ փնից, գործ.՝ փնով, հոգն. ներգ.՝ փներում:**

**ԾՆՈՂ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով** (Աշակերտների **ծնողները** եկել էին դպրոց):

- **ԾՆՈՂ, ԾՆԵԼ**-ի ենթ. դերբայ (Այդ վրանգը **ծնող** պատճառը վերացվել է):

**ԾՆՈՏ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾՆՈՒՆԴ, գոյ., ներ, ծննդի/ի/ծննդան, բաց.՝ ծննդից/ից, գործ.՝ ծննդով/ով, ներգ.՝ ծննդում/ում:**

**ԾՈՌ, գոյ., ներ, ան/ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾՈՎԱԳՆԱՑ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾՈՎԱԿԱԼ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾՈՎԱՀԵՆ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԾՈՎԱՓ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾՈՎԵՋՐ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾՈՅ՝** (կրծքի և նրան մոտիկ հագուստի միջև ընկած փարածությունը), **գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում** (Հատապտուղները լցնում էր **ծոցն** ու գրպանը և բերում երեխաներին):

**ԾՈՅՑ՝** (շարականի երաժշտական խազերից մեկը), **գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԾՊՏՅԱԼ**

1. հրբ. ած. (Ծպտյալ մարդը փվալներ էր հավաքում):
2. ձևի մկբ. (Լրտեսը **ծպտյալ** շրջում էր քաղաքում):

**ԾՊՏՎԵԼ, ջբ, ե լծ., կանոն., պարզ** (տե՛ս Առաջաբան), ենթ.՝ (ջ)ծպտվող, հմկտ.՝ (ջ)ծպտվելիս, հրկտ.՝ (ջ)ծպտված, անկտ.՝ ծպտվում, վրկտ.՝ ծպտվել, ապկտ.՝ ծպտվելու, ժխտ.՝ ծպտվի: (տե՛ս V')

**ԾՌԵԼ/ԾՌՄՌԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո՞ւ՝ **ուղղ.-հայց.** (ծնել լարը), **գործ.** (ծնել ձեռքով), ենթա՞ւ՝ **(չ)ծռող**, հմկտ.՝ **(չ)ծռելիս**, հրկտ.՝ **(չ)ծռած**, անկտ.՝ **ծռում**, վղկտ.՝ **ծռել**, ապկտ.՝ **ծռելու**, ժխտ.՝ **ծռի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾՌՎԵԼ/ԾՌՄՌՎԵԼ**, **ԾՌԵԼ/ԾՌՄՌԵԼ**-ի կրվ. (Մեդալոյա թիթեղը **ծովեց** վարպետի կողմից), **չեգ.** (Ու կամաց-կամաց հնձվորի միտքը **ծովեց**): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾՎԵՆ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, հոգն. ներգ.՝ **ներում**:

**ԾՎՎՈՑ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԾՐԱԳԻՐ**, գոյ., գրեր, գրի, բաց.՝ **գրից**, գործ.՝ **գրով**, ներգ.՝ **գրում**:

**ԾՐԱԳՐԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո՞ւ՝ **ուղղ.-հայց.** (ծրագրել *անելիքը*), **գործ.** (ծրագրել *խոսքով*), ենթա՞ւ՝ **(չ)ծրագրող**, հմկտ.՝ **(չ)ծրագրելիս**, հրկտ.՝ **(չ)ծրագրած**, անկտ.՝ **ծրագրում**, վղկտ.՝ **ծրագրել**, ապկտ.՝ **ծրագրելու**, ժխտ.՝ **ծրագրի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾՐԱԳՐՎԵԼ**, **ԾՐԱԳՐԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾՐԱԳՐԱՎՈՐԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո՞ւ՝ **ուղղ.-հայց.** (ծրագրավորել *համակարգիչը*), **գործ.** (ծրագրավորել *կողով*), ենթա՞ւ՝ **(չ)ծրագրավորող**, հմկտ.՝ **(չ)ծրագրավորելիս**, հրկտ.՝ **(չ)ծրագրավորած**, անկտ.՝ **ծրագրավորում**, վղկտ.՝ **ծրագրավորել**, ապկտ.՝ **ծրագրավորելու**, ժխտ.՝ **ծրագրավորի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾՐԱԳՐԱՎՈՐՎԵԼ**, **ԾՐԱԳՐԱՎՈՐԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (Հնույդ **ծրագրավորող-ների** կարիք մենք շատ ունենք):

- **ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ**, **ԾՐԱԳՐԱՎՈՐԵԼ**-ի ենթ. դերբայ (Այդ **ծրագրավորող** սարքը նոր է ստեղծվել):

**ԾՐԱՐ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԾՌԻԼԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., խնդրո՞ւ՝ **բաց.** (ծուլանալ *ֆիզիկայից*), **գործ.** (ծուլանալ *գործով*), **ներգ.** (ծուլանալ *աշխատանքում*), ենթա՞ւ՝ **(չ)ծուլացող**, հմկտ.՝ **(չ)ծուլանալիս**, հրկտ.՝ **(չ)ծուլացած**, անկտ.՝ **ծուլանում**, վղկտ.՝ **ծուլացել**, ապկտ.՝ **ծուլանալու**, ժխտ.՝ **ծուլանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԾՌԻԼԱՑՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո՞ւ՝ **ուղղ.-հայց.** (ծուլացնել *օրգանիզմը*), **սեռ.-տրկ.** (ծուլացնել *մարդուն*), ենթա՞ւ՝ **(չ)ծուլացնող**, հմկտ.՝ **(չ)ծուլացնելիս**, հրկտ.՝ **(չ)ծուլացրած**, անկտ.՝ **ծուլացնում**, վղկտ.՝ **ծուլացրել**, ապկտ.՝ **ծուլացնելու**, ժխտ.՝ **ծուլացնի**:

**ԾՈՒԼԱՑՎԵԼ, ԾՈՒԼԱՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԾՈՒԼՈՐԵՆ, ձևի մկբ.:**

**ԾՈՒԽ, գոյ.,** ծխեր/եր, ծխի/ի, բաց.՝ **ծխից/ից, գործ.՝ ծխով/ով, ներգ.՝ ծխում/ում:**

**ԾՈՒՅԼ, որ. ած.,** բղղտ.՝ **ավելի, առավել, գրղ.՝ ամենա-/ամենից:**

**ԾՈՒՆԿ, գոյ.,** ծնկներ/եր, ծնկի/ի/ծնկան, բաց.՝ **ծնկից/ից, գործ.՝ ծնկով/ով, հոգն. ներգ.՝ ծնկներում/ծնկերում:**

**ԾՈՒՌ**

1. **որ. ած.,** բղղտ.՝ **ավելի, առավել, գրղ.՝ ամենա-/ամենից** (Ամեն ինչ **ծուռ** հայելու մեջ է փեսնում):
2. **ձևի մկբ.** (Ծուռ նստենք, շիտակ խոսենք):
3. **գոյ.,** ծոեր, ծոի, բաց.՝ **ծոից, գործ.՝ ծոով** (Սասնա **ծոեր**):

**ԾՈՒՌՈՒՄՈՒՌ**

1. **որ. ած.,** բղղտ.՝ **ավելի, առավել, գրղ.՝ ամենա-/ամենից** (Նրա առջև բացվեց **ծուռումուռ** արահեպներով մի սարալանջ):
2. **ձևի մկբ.**՝ (Ծուռումուռ քայլելով՝ մոտեցավ դարպասին):

## Կ

**ԿԱԴՐ<sup>1</sup>** (արտադրության կամ գործունեության այս կամ այն ճյուղի համար պատրաստված հիմնական աշխատողը), **գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, հոգն. ներգ.՝ երում** (Ընկերությունը համալրվել էր նոր **կադրերով**):

**ԿԱԴՐ<sup>2</sup>** (առանձին նկար), **գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում** (Կադրում երևում էր նրա երջանիկ դեմքը):

**ԿԱԶՄ<sup>1</sup>** (համախմբում, միավորում), **գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում** (Աշխատակիցների ողջ **կազմը** ներկա էր միջոցառմանը):

**ԿԱԶՄ<sup>2</sup>** (գրքի, փետրի պահպանակ), **գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում** (Գրքի կազմը **պատուվել էր**):

**ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ, նբ, Ե** լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կազմակերպել միջոցառում), **գործ.** (կազմակերպել ընկերներով), ենթ.՝ **(չ)կազմակերպող, հմկտ.՝ (չ)կազմակերպելիս, հրկտ.՝ (չ)կազմակերպած,**

անկտ.՝ կազմակերպում, վղկտ.՝ կազմակերպել, ապկտ.՝ կազմակերպելու, ժխտ.՝ կազմակերպի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ, ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, գոյ., ներ,** թյան, բաց.՝ **ից, գործ.՝ թյամբ/ով, ներգ.՝ ում:**

**ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ, գոյ., ներ,** րման/ի, բաց.՝ **ից, գործ.՝ րմամբ/ով, հոգն. ներգ.՝ ներում:**

**ԿԱԶՄԵԼ, նբ, Ե լծ.,** կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կազմել ծրագիր), **գործ.** (կազմել թղթով), ենթ.՝ **(չ)կազմող, հմկտ.՝ (չ)կազմելիս, հրկտ.՝ (չ)կազմած, անկտ.՝ կազմում, վղկտ.՝ կազմել, ապկտ.՝ կազմելու, ժխտ.՝ կազմի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱԶՄՎԵԼ, ԿԱԶՄԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱԹԵԼ, չբ, Ե լծ.,** կանոն., պարզ, ենթ.՝ **(չ)կաթող, հմկտ.՝ (չ)կաթելիս, հրկտ.՝ (չ)կաթած, անկտ.՝ կաթում, վղկտ.՝ կաթել, ապկտ.՝ կաթելու, ժխտ.՝ կաթի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱԹԵՑՆԵԼ, նբ, Ե լծ.,** կանոն., եցն պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կաթեցնել հեղուկ), **գործ.** (կաթեցնել կաթոցիչով), ենթ.՝ **(չ)կաթեցնող, հմկտ.՝ (չ)կաթեցնելիս, հրկտ.՝ (չ)կաթեցրած, անկտ.՝ կաթեցնում, վղկտ.՝ կաթեցրել, ապկտ.՝ կաթեցնելու, ժխտ.՝ կաթեցնի:** (տե՛ս V<sup>3</sup>)

**ԿԱԹԵՑՎԵԼ, ԿԱԹԵՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

#### **ԿԱԹՆԱԿԵՐ**

1. **հրբ. ած.** (**Կաթնակեր** երեխաները հաճախ են լալիս քաղց զգալիս):
2. **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով** (**Դելֆինները պատկանում են կաթնակերների դասին**):

**ԿԱԹՆԱՇՈՒ, գոյ., եր/ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

#### **ԿԱԹՆԱՍՈՒՆ**

1. **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով** (**Կաթնասունների գլխավոր առանձնահատկությունը ձագին կաթով կերակրելն է**):
2. **հրբ. ած.** (**Կաթնասուն արարածները տեսքով և չափերով շատ բազմազան են**):

**ԿԱԼԱՆԱՎՈՐ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԿԱԼՎԱԾԱՏԵՐ, գոյ., եր, տիրոջ/ի, բաց.՝ տիրոջից/ից, գործ.՝ տիրոջով/ով:**



**ԿԱԽԱՐԴ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Կախարդը** բնակվում էր անտառի խորքում):

2. որ./հրբ. ած. (**Կախարդ** վարպետը գույների աշխարհ էր ստեղծել):

**ԿԱԽԵԼ**, նբ (կախ անել, կախ տալ իմաստով) ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց. (կախել *հագուստը*), բաց. (կախել *ծառից*), գործ. (կախել *թելով*), չբ (անջատվել, դադարել աշխատելուց իմաստով) (**Հեռախոսը կախել էր**), ենթ.՝ (չ)կախող, հմկտ.՝ (չ)կախելիս, հրկտ.՝ (չ)կախած, անկտ.՝ կախում, վղկտ.՝ կախել, ապկտ.՝ կախելու, ժխտ.՝ կախի: (տե՛ս V՝)

**ԿԱԽՎԵԼ**, **ԿԱԽԵԼ**-ի կրվ. (Հյուրասենյակի ջահը **կախվեց** վարպետի կողմից), չեզ. (Երեխան **կախվեց** մոր փեշերից): (տե՛ս V՝)

**ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ**, գոյ., ներ, թյան, բաց.՝ **ից**, գործ.՝ **թյամբ/ով**:

**ԿԱՂ**, որ. ած.:

**ԿԱՂԻՆ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿԱՂԻԻ**, գոյ., ներ, նու/ի, բաց.՝ **նուց/ից**, գործ.՝ **նով/ով**, ներգ.՝ **ում**:

**ԿԱՄ՝** (գոյություն ունեն), չբ, ա լծ., պակասավոր անկանոն, պարզ (Ես հրավիրվածներից **կամ**):

□ **Սահմանական եղանակ**

անկտ. ներկ.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ կամ, կաս, կա/կանք, կաք, կան, ժխտ.՝ չկամ, չկաս, չկա/չկանք, չկաք, չկան,

անկտ. անց.՝ եզ./հոգն. թ.՝ դր.՝ կայի, կայիր, կար/կայինք, կայիք, կային, ժխտ.՝ չկայի, չկայիր, չկար/չկայինք, չկայիք, չկային:

**ԿԱՄ՝** (բառեր կամ նախադասություններ կապակցող շաղկապ), հմդս. շղկ. (Իրերը կբերեմ փուն **կամ** կթողնեմ քոջս փանը):

**ԿԱՄ՝** (հացահատիկ կալսելու գործիք՝ ջառջառ), գոյ.\*\*, եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (**Կամերի** վրա կանգնել էին մի քանի երեխաներ):

**ԿԱՄԱԿՈՐ**, որ. ած., բղղտ.՝ ալելի, առավել, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

**ԿԱՄԱՅԻՆ**, հրբ. ած.:

**ԿԱՄԱՎՈՐ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Կամավորների** խումբը մեկնեց ուզմաճակատ):

2. հրբ. ած. (խումբը կատարում էր **կամավոր** աշխատանք):

3. մկբ. (Մենք **կամավոր** մեկնեցինք ուզմաճակատ):

**ԿԱՄԱՑ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (Նա կամաց քայլերով մոտեցավ ինձ):
2. ձևի մկբ. (**Կամաց** ծածկեց դուռը):

**ԿԱՄԱՑՈՒԿ, ձևի մկբ.:**

**ԿԱՄԵՆԱԼ**, նբ, ա լծ., կանոն., են սոսկած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կամենալ *հաջողությամբ*), **սեռ.-տրկ.** (կամենալ *ընկերոջը*), ենթ.՝ **(չ)կամեցող**, հմկտ.՝ **(չ)կամենալիս**, հրկտ.՝ **(չ)կամեցած**, անկտ.՝ **կամենում**, վղկտ.՝ **կամեցել**, ապկտ.՝ **կամենալու**, ժխտ.՝ **կամենա:** (տե՛ս V<sup>5</sup>)

**ԿԱՄԵՑՈՂ**, հրբ./որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (Նա շատ կամեցող մարդ է):

- **ԿԱՄԵՑՈՂ, ԿԱՄԵՆԱԼ**-ի ենթ. դերբայ (*Ոչինչ չկամեցող մարդիկ մերժեցին նրան*):

**ԿԱՄՈՔ**

1. իսկ. կապ, երկդ., խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (*ճակատագրի կամոք/կամոքն Աստծո*):
2. ձևի մկբ.\*\* (Նա չի սպասում որևէ ազդանշանի. **կամոք** կրակում է):

**ԿԱՄՈՎԻՆ, ձևի մկբ.:**

**ԿԱՄՈՒՐՁ**, գոյ., ներ, կամրջի/ի, բաց.՝ **կամրջից/ից**, գործ.՝ **կամրջով/ով**, ներգ.՝ **կամրջում/ում**:

**ԿԱՄՔ**, գոյ., ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԿԱՅԱՋՈՐ**, գոյ., եր/ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿԱՅԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., ան սոսկած., խնդրո.՝ **գործ.** (կայանալ *գործով*), **ներգ.** (կայանալ այդ *աշխատանքում*), ենթ.՝ **(չ)կայացող**, հմկտ.՝ **(չ)կայանալիս**, հրկտ.՝ **(չ)կայացած**, անկտ.՝ **կայանում**, վղկտ.՝ **կայացել**, ապկտ.՝ **կայանալու**, ժխտ.՝ **կայանա:** (տե՛ս V<sup>5</sup>)

**ԿԱՅԱՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., ացն պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կայացնել *որոշում*), **գործ.** (կայացնել *խոսքով*), ենթ.՝ **(չ)կայացնող**, հմկտ.՝ **(չ)կայացնելիս**, հրկտ.՝ **(չ)կայացրած**, անկտ.՝ **կայացնում**, վղկտ.՝ **կայացրել**, ապկտ.՝ **կայացնելու**, ժխտ.՝ **կայացնի:** (տե՛ս V<sup>3</sup>)

**ԿԱՅԱՑՎԵԼ, ԿԱՅԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՅԱՆԵԼ**, նբ (կանգնեցնել իմաստով), ե լծ., կանոն., պարգ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կայանել *մեքենան*), **չբ** (*մնալ, հանգրվանել* իմաստով) (*Հյու-*

ըը կայանեց իջևանատանը), ենթ.՝ (ջ)կայանող, հմկտ.՝ (ջ)կայանելիս, հրկտ.՝ (ջ)կայանած, անկտ.՝ կայանում, վղկտ.՝ կայանել, ասկտ.՝ կայանելու, ժխտ.՝ կայանի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՅԱՆԱՏԵՂ(Ի), գոյ.**, տեղեր/տեղիներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

**ԿԱՅԾՔԱՐ, գոյ.**, եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

#### **ԿԱՅՏԱՌ**

1. որ. ած., բղդտ.՝ ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից (Արան կայփառ փղա է):

2. ձևի մկբ. (Մանուկը կայփառ թռչկոտում էր):

**ԿԱՅՈՒՆ, որ. ած.**, բղդտ.՝ ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից:

**ԿԱՅՈՒՆԱՆԱԼ, չբ, ա լծ.**, կանոն., ան սոսկած., խնդրո.՝ գործ. (կայունանալ աշխատանքով), ենթ.՝ (ջ)կայունացող, հմկտ.՝ (ջ)կայունանալիս, հրկտ.՝ (ջ)կայունացած, անկտ.՝ կայունանում, վղկտ.՝ կայունացել, ասկտ.՝ կայունանալու, ժխտ.՝ կայունանա: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԿԱՅՈՒՆԱՑՆԵԼ, նբ, Ե լծ.**, կանոն., ացն պատճ. ած., խնդրո.՝ ուղղ.-հայց. (կայունացնել հարաբերությունները), գործ. (կայունացնել գործով), ենթ.՝ (ջ)կայունացնող, հմկտ.՝ (ջ)կայունացնելիս, հրկտ.՝ (ջ)կայունացրած, անկտ.՝ կայունացնում, վղկտ.՝ կայունացրել, ասկտ.՝ կայունացնելու, ժխտ.՝ կայունացնի: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԿԱՅՈՒՆԱՑՎԵԼ, ԿԱՅՈՒՆԱՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՅՔ<sup>1</sup>** (ունեցվածք), գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում (Նա իր ողջ կայքը նվիրաբերեց չքավորներին):

**ԿԱՅՔ<sup>2</sup>** (համացանցային էջ), գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում (Նրա կայքը արգելափակվել էր):

#### **ԿԱՆԱԶ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում (Երեխաները նստել էին կանաչի վրա):

2. որ. ած. (Դաշտը հեռվից թվում էր մի կանաչ աշխարհ):

**ԿԱՆԱԶԵՂԵՆ, գոյ.**, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:

**ԿԱՆԱԶԻ, գոյ.**, ներ, չու/ի, չուց/ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

**ԿԱՆԱՑԻ, հրբ. ած.:**

**ԿԱՆԳՆԵԼ, չբ, Ե լծ.**, կանոն., պարզ, ենթ.՝ (ջ)կանգնող, հմկտ.՝ (ջ)կանգնելիս, հրկտ.՝ (ջ)կանգնած, անկտ.՝ կանգնում, վղկտ.՝ կանգնել, ասկտ.՝ կանգնելու, ժխտ.՝ կանգնի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՆԳՆԵՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., եցն պատճ. ած., խնդրո.՝ ուղղ.-հայց. (կանգնեցնել *մեքենա*), գործ. (կանգնեցնել *ծեղքով*), ենթ.՝ (չ)կանգնեցնող, հմկտ.՝ (չ)կանգնեցնելիս, հրկտ.՝ (չ)կանգնեցրած, անկտ.՝ կանգնեցնում, վղկտ.՝ կանգնեցրել, ապկտ.՝ կանգնեցնելու, ժխտ.՝ կանգնեցնի: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԿԱՆԳՆԵՑՎԵԼ**, **ԿԱՆԳՆԵՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՆԽԱՎՃԱՐ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿԱՆԽԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց. (կանխել *հարձակումը*), սեռ.-տրկ. (կանխել *ընդդիմախոսին*), գործ. (կանխել *ուժով*), ենթ.՝ (չ)կանխող, հմկտ.՝ (չ)կանխելիս, հրկտ.՝ (չ)կանխած, անկտ.՝ կանխում, վղկտ.՝ կանխել, ապկտ.՝ կանխելու, ժխտ.՝ կանխի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՆԽՎԵԼ**, **ԿԱՆԽԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿԱՆՑԼԵՐ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԿԱՆՈՒԽ**, ժմնկի մկբ.:

**ԿԱՇԱՌԱԿԵՐ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Կաշառակերները** իշխանության մեջ պետք է տեղ չունենան):

2. հրբ./որ. ած., բղղտ.՝ **ավելի**, առավել, գրղ.՝ **ամենա-/ամենից** (**Կաշառակեր** դատավորը անարդար վճիռ կայացրեց):

**ԿԱՇԱՌԱՌՈՒ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԿԱՇԱՌԱՏՈՒ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԿԱՇԱՌՈՒՄ**, գոյ., ներ, ոման/ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ումամբ/ով**:

**ԿԱՇԻ**, գոյ., ներ, շվի/ի\*, բաց.՝ **շվից/ից\***, գործ.՝ **շվով/ով**, ներգ.՝ **շվում/ում**:

**ԿԱ-ՉԿԱ**, երկբ. վրբ.:

**ԿԱՊԱՎՈՐ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Կապավորները** ռազմի դաշտում տեղեկություններ էին փոխանցում թշնամու մասին):

2. հրբ. ած. (**Կապավոր** զինվորը քաջաբար կռվում էր):

**ԿԱՊԵԼ/ԿԱՊԿՊԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց. (կապել *պարանը*), սեռ.-տրկ. (*մարդուն* կապել *աթոռին*), բաց. (կապել *ծառից*), գործ. (կապել *թելով*), ենթ.՝ (չ)կապող, հմկտ.՝ (չ)կապելիս, հրկտ.՝

**(ջ)կապած**, անկտ.՝ **կապում**, վղկտ.՝ **կապել**, ապկտ.՝ **կապելու**, ժխտ.՝ **կապի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՊՎԵԼ/ԿԱՊԿՊՎԵԼ, ԿԱՊԵԼ/ԿԱՊԿՊԵԼ-ի կրվ.** (*Տանտերը կապվեց հանցագործի կողմից*), **չեզ.** (*Կարճ ժամանակում նրանք կապվեցին միմյանց*): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՊՈՏԵԼ, նբ, ե լծ.**, կանոն., **ոտ** բազմ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կապոտել *իրերը*), **սեռ.-տրկ.** (կապոտել *մարդուն*), **գործ.** (կապոտել *պարանոյ*), ենթ.՝ **(ջ)կապոտող**, հմկտ.՝ **(ջ)կապոտելիս**, հրկտ.՝ **(ջ)կապոտած**, անկտ.՝ **կապոտում**, վղկտ.՝ **կապոտել**, ապկտ.՝ **կապոտելու**, ժխտ.՝ **կապոտի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՊՈՏՎԵԼ, ԿԱՊՈՏԵԼ-ի կրվ.** (*Ապրանքը կապոտվեց վաճառողի կողմից*), **չեզ.** (*Տաք շալով կապոտվել էր և նստել մի անկյունում*): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՊԻԿ, գոյ.**, ներ, ի/պկի, բաց.՝ **ից/պկից**, գործ.՝ **ով**:

**ԿԱՊՈՒՅՑ, որ. ած.:**

**ԿԱՌԱՎԱՐԻՉ, գոյ.**, ներ, ի/րչի, բաց.՝ **ից/րչից**, գործ.՝ **ով/րչով**:

**ԿԱՌՉԵԼ, չբ, ե լծ.**, կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (կառչել *բազրիքին*), **բաց.** (կառչել *փաստերից*), ենթ.՝ **(ջ)կառչող**, հմկտ.՝ **(ջ)կառչելիս**, հրկտ.՝ **(ջ)կառչած**, անկտ.՝ **կառչում**, վղկտ.՝ **կառչել**, ապկտ.՝ **կառչելու**, ժխտ.՝ **կառչի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՌՈՒՅԵԼ, նբ, ե լծ.**, կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կառուցել *տուն*), **բաց.** (կառուցել *քարից*), **գործ.** (կառուցել իր *միջոցներով*), ենթ.՝ **(ջ)կառուցող**, հմկտ.՝ **(ջ)կառուցելիս**, հրկտ.՝ **(ջ)կառուցած**, անկտ.՝ **կառուցում**, վղկտ.՝ **կառուցել**, ապկտ.՝ **կառուցելու**, ժխտ.՝ **կառուցի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՌՈՒՑՎԵԼ, ԿԱՌՈՒՅԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՍԵՍ (ԹԵ), երկբ. վրբ.\*:**

**ԿԱՍԵՑՆԵԼ, նբ, ե լծ.**, կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կասեցնել *կառուցումը*), **սեռ.-տրկ.** (կասեցնել *հակառակորդին*), **գործ.** (կասեցնել իրավունքի *ուժով*), ենթ.՝ **(ջ)կասեցնող**, հմկտ.՝ **(ջ)կասեցնելիս**, հրկտ.՝ **(ջ)կասեցրած**, անկտ.՝ **կասեցնում**, վղկտ.՝ **կասեցրել**, ապկտ.՝ **կասեցնելու**, ժխտ.՝ **կասեցնի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՍԵՑՎԵԼ, ԿԱՍԵՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՍԿԱԾՅԱԼ, գոյ.**, ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԿԱՍ-ԿԱՐՄԻՐ, որ. ած.:**

**ԿԱՎԱՀՈՂ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿԱՎԻՃ**, գոյ., ներ, ի/վճի, բաց.՝ **ից/վճից**, գործ.՝ **ով/վճով**, ներգ.՝ **ում/վճում**:

### **ԿԱՏԱՂԻ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (*Կատաղի մարտեր են ընթանում*):
2. ձևի մկբ. (*Կատաղի մոնչում էր, ինչպես վանդակում փակված առյուծը*):

### **ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (*Կատարողականում բացթողումներ կային*):
2. հրբ. ած. (*Կատարողական թերթիկը ներկայացրեց պեդին*):

**ԿԱՏԱՐՈՒՄ**, գոյ., ներ, ըման/ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **րմամբ/ով**, հոգն. ներգ.՝ **ներում**:

**ԿԱՐԳԱԽՈՍ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

### **ԿԱՐԳԻՆ**

1. որ./հրբ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (*Բնակվելու համար կարգին վայր են ընտրել*):
2. ձևի մկբ. (*Պեդք էր ելույթին կարգին պատրաստվել*):

**ԿԱՐԴԱԼ**, նբ, ա լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (կարդալ *գիրք*), գործ. (կարդալ *խոշորացուցով*), ենթ.՝ **(չ)կարդացող**, հմկտ.՝ **(չ)կարդալիս**, հրկտ.՝ **(չ)կարդացած**, անկտ.՝ **կարդում**, վղկտ.՝ **կարդացել**, ապկտ.՝ **կարդալու**, ժխտ.՝ **կարդա**: (տե՛ս V<sup>4</sup>)

**ԿԱՐԴԱՑԱԾ**, հրբ./որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (*Նա շատ կարդացած մարդ է*):

- **ԿԱՐԴԱՑԱԾ**, **ԿԱՐԴԱԼ**-ի հրկտ. դերբայ (*Ընթերցասրահում կարդացած գիրքը հանձնեց գրադարանավարուհուն*):

**ԿԱՐԵՎՈՐ**, որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** /-(ա)գույն:

**ԿԱՐԾԵՄ ԹԵ/ԿԱՐԾԵՍ ԹԵ**, երկբ. վրբ.:

### **ԿԱՐԾ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (*Կարծ լարերը միացրեց իրար*):
2. ձևի/չափի մկբ. (*Ելույթի ժամանակ բանախոսը կարծ խոսեց*):

**ԿԱՐՃԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., ենթ.՝ **(ջ)կարճացող**, հմկտ.՝ **(ջ)կարճանալիս**, հրկտ.՝ **(ջ)կարճացած**, անկտ.՝ **կարճանում**, վղկտ.՝ **կարճացել**, ապկտ.՝ **կարճանալու**, ժխտ.՝ **կարճանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԿԱՐՃԱՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (կարճացնել *հագուստը*), **գործ**. (կարճացնել *մկրատով*), ենթ.՝ **(ջ)կարճացնող**, հմկտ.՝ **(ջ)կարճացնելիս**, հրկտ.՝ **(ջ)կարճացրած**, անկտ.՝ **կարճացնում**, վղկտ.՝ **կարճացրել**, ապկտ.՝ **կարճացնելու**, ժխտ.՝ **կարճացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԿԱՐՃԱՑՎԵԼ**, **ԿԱՐՃԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԱՐՄԻՐ**, որ. ած.:

**ԿԱՐՈՂ**, որ./հրբ. ած., բղդտ.՝ **ավելի**, **առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից**:

**ԿԱՐՈՂԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., ենթ.՝ **(ջ)կարողացող**, հմկտ.՝ **(ջ)կարողանալիս**, հրկտ.՝ **(ջ)կարողացած**, անկտ.՝ **կարողանում**, վղկտ.՝ **կարողացել**, ապկտ.՝ **կարողանալու**, ժխտ.՝ **կարողանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԿԱՐՈՏ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, հոգն. ներգ.՝ **ներում**:

**ԿԱՑԻՆ**, գոյ., ներ, ցնի/ի, բաց.՝ **ցնից/ից**, գործ.՝ **ցնով/ով**, ներգ.՝ **ում/ցնում**:

**ԿԱՓ-ԿԱՆԱԶ**, որ. ած.:

**ԿԵՂԾ**

1. որ. ած., բղդտ.՝ **ավելի**, **առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից** (**Կեղծ խոսքերով խաբել ես ինձ**):

2. ձևի մկբ. (*Ակնհայտ էր, որ կեղծ է արտահայտվում*):

**ԿԵՂԾԱՎՈՐ**

1. որ. ած., բղդտ.՝ **ավելի**, **առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից** (**Կեղծավոր մարդկանցից պետք է հեռու մնալ**):

2. ձևի մկբ. (*Կանգնել էր անկյունում և կեղծավոր ժպտում էր բոլորին*):

**ԿԵՂԾԻՔ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿԵՆԱԼ\*\***, չբ, ա լծ., պակասավոր անկանոն, **են** սոսկած. (պակաս և հնացած ձևերը լրացվում են **մնալ**, **կանգնել**, **սպասել**, **կանգ առնել** բայերի ձևերով):

□ **Հրամայական եղանակ**

ապ.՝ եգ./հոգն. թ.՝ դր.՝ **կա՛ց\*\*/կացե՛ք\*\***, արգ.՝ **մի՛ կաց\*\*//մի՛ կենար\*\*/մի՛ կացեք\*\*//մի՛ կենար\*\***:

**ԿԵՆԳՈՒՐՈՒ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԿԵՆԴԱՆԻ**, գոյ., ներ, նու/ի, նուց/ից, գործ.' **ով**:

**ԿԵՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ**, գոյ., ներ, թյան, բաց.' **ից**, գործ.' թյամբ/ով:

**ԿԵՆՍԱԳԻՐ**, գոյ., ներ, գրի, բաց.' գրից, գործ.' գրով:

**ԿԵՆՍԱՍԵՐ**, հրբ./որ. ած., բղղտ.' **ավելի, առավել**, գրղ.' **ամենա- /ամենից**:

**ԿԵՆՍԱՓՈՐՁ**, գոյ., եր, ի, բաց.' **ից**, գործ.' **ով**, ներգ.' **ում**:

**ԿԵՆՏ**, որ. ած.:

**ԿԵՊԻ**, գոյ., ներ, ի, բաց.' **ից**, գործ.' **ով**, ներգ.' **ում**:

**ԿԵՍՕՐ**, գոյ., ներ, վա/ի, բաց.' **ից/վանից**, գործ.' **ով**:

**ԿԵՐ**, գոյ., եր, ի, բաց.' **ից**, գործ.' **ով**, ներգ.' **ում**:

**ԿԵՅՅԵ(Ս)**, զգցկ. ձյնրկ.:

**ԿԻՆ**, գոյ., կանայք, կնոջ, բաց.' կնոջից, գործ.' կնոջով, հոգն.' կանանց, բաց.' կանանցից, գործ.' կանանցով:

**ԿԻՆՈԴԻՏՈՂ**, գոյ., ներ, ի, բաց.' **ից**, գործ.' **ով**:

**ԿԻՍԱԳՈՒՆԴ**, գոյ., գնդեր, գնդի, բաց.' գնդից, գործ.' գնդով, ներգ.' գնդում:

**ԿԻՍԱԴԵՄ**, գոյ., եր, ի, բաց.' **ից**, գործ.' **ով**:

**ԿԻՍԱՏ**

1. որ. ած. (**Կիսապ** բառեր ասաց ու հեռացավ):

2. ձևի մկբ. (**Չէր սիրում գործը կիսապ թողնել**):

**ԿԻՍՈՎԻ**

1. հրբ. ած. (**Կիսովի** խաղադրույք կատարեցին):

2. ձևի մկբ. (**Որոշեցին կիսովի** կատարել առևտուրը):

**ԿԻՐԱԿԻ**, գոյ., ներ, ի, բաց.' **ից**, գործ.' **ով**:

**ԿԻՐԹ**, որ. ած., բղղտ.' **ավելի, առավել**, գրղ.' **ամենա- /ամենից**:

**ԿԻՐՃ**, գոյ., եր, ի, բաց.' **ից**, գործ.' **ով**, ներգ.' **ում**:

**ԿԻՐՔ**, գոյ., կրքեր/եր, կրքի/ի, բաց.' կրքից, գործ.' կրքով/ով, հոգն. ներգ.' կրքերում:

**ԿԻՑ**

1. որ. ած. (**Կից** գրույթամբ ներկայացված էին փաստերը):

2. կպկ. բառ, հոդ., խնդրո.՝ **սեռ.-տրկ**. (**Տանը կից** այգում փաղավար կար):



**3. ձևի մկբ. (Կից ներկայացված էր աղյուսակը):**

**ԿԼՈՐ, որ. ած.:**

**ԿԼՈՐԱՆԱԼ, չբ, ա լծ., կանոն., ան** սուկած., ենթա՝ **(ջ)կլորացող**, հմկտ.՝ **(ջ)կլորանալիս**, հրկտ.՝ **(ջ)կլորացած**, անկտ.՝ **կլորանում**, վղկտ.՝ **կլորացել**, ապկտ.՝ **կլորանալու**, ժխտ.՝ **կլորանա:** (տե՛ս V<sup>5</sup>)

**ԿԼՈՐԱՑՆԵԼ, նբ, Ե լծ., կանոն., ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կլորացնել թողալով), **գործ.** (կլորացնել գրիչով), ենթա՝ **(ջ)կլորացնող**, հմկտ.՝ **(ջ)կլորացնելիս**, հրկտ.՝ **(ջ)կլորացրած**, անկտ.՝ **կլորացնում**, վղկտ.՝ **կլորացրել**, ապկտ.՝ **կլորացնելու**, ժխտ.՝ **կլորացնի:** (տե՛ս V<sup>3</sup>)

**ԿԼՈՐԱՑՎԵԼ, ԿԼՈՐԱՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿԾԻԿ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԿԾՈՒ, որ. ած., բղղտ.՝ ավելի, առավել, գրղ.՝ ամենա-/ամենից:**

**ԿԿՈՒ, գոյ., ներ, կկվի/ի\*, բաց.՝ կկվից, գործ.՝ կկվով:**

**ԿՂԶԻ, գոյ., ներ, կղզու/ի, կղզուց/ից, գործ.՝ կղզով/ով, ներգ.՝ կղզում/ում:**

**ԿՄԱԽՔ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԿՆԻՔ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԿՆՃԻԹ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԿՆՃԻՌ, գոյ., ներ, ի/ճոի, բաց.՝ ից/ճոից, գործ.՝ ով/ճոով, հոգն. ներգ.՝ ներում:**

**ԿՆՈՒՆՔ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԿՆՔԵԼ<sup>1</sup>** (կնիք դնելով վավերացնել), **նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց.** (կնքել պայմանագիր), **գործ.** (կնքել կապարով), ենթա՝ **(ջ)կնքող**, հմկտ.՝ **(ջ)կնքելիս**, հրկտ.՝ **(ջ)կնքած**, անկտ.՝ **կնքում**, վղկտ.՝ **կնքել**, ապկտ.՝ **կնքելու**, ժխտ.՝ **կնքի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՆՔՎԵԼ<sup>1</sup>, ԿՆՔԵԼ<sup>1</sup>-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՆՔԵԼ<sup>2</sup>** (մկրտել), **նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ սեռ.-տրկ.** (կնքել երեխային), **գործ.** (կնքել աղոթքով), ենթա՝ **(ջ)կնքող**, հմկտ.՝ **(ջ)կնքելիս**, հրկտ.՝ **(ջ)կնքած**, անկտ.՝ **կնքում**, վղկտ.՝ **կնքել**, ապկտ.՝ **կնքելու**, ժխտ.՝ **կնքի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՆՔՎԵԼ<sup>2</sup>, ԿՆՔԵԼ<sup>2</sup>-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՇԻՌ, գոյ., ներ, ի/կշոի, բաց.՝ կշոից/ից, գործ.՝ կշոով/ով, ներգ.՝ կշոում/ում:**

**ԿՇՈԱԶԱՓ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿՇՈԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (կշռել *ապրանք*), **սեռ.-տրկ**. (կշռել *մարդուն*), **գործ**. (կշռել *կշեռքով*), ենթ.՝ **(չ)կշռող**, հմկտ.՝ **(չ)կշռելիս**, հրկտ.՝ **(չ)կշռած**, անկտ.՝ **կշռում**, վղկտ.՝ **կշռել**, ապկտ.՝ **կշռելու**, ժխտ.՝ **կշռի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՇՈՎԵԼ**, **ԿՇՈԵԼ**-ի կրվ. (Բանջարեղենը **կշովեց** վաճառականի կողմից), **չեգ**. (Մարզվելուց հետո միշտ **կշովում էր**): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈԱԼԱ**, գոյ., ներ, յի, բաց.՝ **յից**, գործ.՝ **յով**:

**ԿՈՂԱԿԻՑ**, գոյ., ներ, կցի/ի, բաց.՝ **կցից/ից**, գործ.՝ **կցով/ով**:

**ԿՈՂՄ**

1. գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Նա իր վատ կողմերը աշխատում էր թաքցնել):
2. կպկ. բառ, հտղ., խնդրո.՝ **սեռ.-տրկ**. (Կեսօրվա կողմ կայցելեմ քեզ):
3. ձևի մկբ. (Ընդդիմությունը կողմ քվեարկեց օրինագծին):
  - **ԿՈՂՄԻՑ**, կպկ. բառ, հտղ., խնդրո.՝ **սեռ.-տրկ**. (Հարցը քննարկվեց խորհրդի կողմից):

**ԿՈՂՄՆԱԿԱԼ**, հրբ. ած.:

**ԿՈՂՄՆԱԿԻ**, հրբ. ած.:

**ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿՈՂՔ ԿՈՂՔԻ**, տեղի/ձևի մկբ. (Կանգնած էին կողք կողքի):

**ԿՈՃՂ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿՈՇԻԿ**, գոյ., ներ, ի/չկի<sup>♦</sup>, բաց.՝ **ից/չկից<sup>♦</sup>**, գործ.՝ **ով/չկով<sup>♦</sup>**, ներգ.՝ **ում**:

**ԿՈՇՏ**

1. որ. ած., բղդտ.՝ **ավելի**, առավել, գրդ.՝ **ամենա-/ամենից** (Կոշտ մատնեք ներով շոյում էր փղայի գլուխը):
2. գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Կոշտերով պատված ուրքերով մի կերպ առաջ էր շարժվում):
3. ձևի մկբ. (Իրեն փրված հարցին կոշտ պատասխանեց):

**ԿՈՉԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (կոչել *քաղաքը*), **սեռ.-տրկ**. (կոչել *մարդուն*), **գործ**. (կոչել *անունով*), ենթ.՝ **(չ)կոչող**, հմկտ.՝ **(չ)կոչելիս**, հրկտ.՝ **(չ)կոչած**, անկտ.՝ **կոչում**, վղկտ.՝ **կոչել**, ապկտ.՝ **կոչելու**, ժխտ.՝ **կոչի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈՉՎԵԼ**, **ԿՈՉԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈՎԿԱՍԱԳԵՏ, գոյ., ներ, ի, բաց.՝ հց, գործ.՝ ով:**

**ԿՈՎԿԱՍՅԻ**

1. **գոյ., ներ, ցու/ի, բաց.՝ ցուց/հց, գործ.՝ ով** (Բոլորը լուռ էին. աղմկում էր միայն մի թխադեմ **կովկասցի**):

2. **հրբ. ած.** (Մեզ ուղեկցում էին **կովկասցի** մի խումբ վաճառականներ):

**ԿՈՏՈՐԱԾ, գոյ., ներ, ի, բաց.՝ հց, գործ.՝ ով** (Ականապես եղանք սարսուղ-դու մի **կոտորածի**):

• **ԿՈՏՈՐԱԾ, ԿՈՏՈՐԵԼ**-ի հրկտ. դերբայ (Նրանց **կոտորած** մարդկանց սերունդները բողոք էին ներկայացրել):

**ԿՈՏՈՐԵԼ, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց.** (կոտորել *զորքը*), **սեռ.-տրկ.** (կոտորել *մարդկանց*), **գործ.** (կոտորել *սրով*), ենթ.՝ **(չ)կոտորող, հմկտ.՝ (չ)կոտորելիս, հրկտ.՝ (չ)կոտորած, անկտ.՝ կոտորում, վղկտ.՝ կոտորել, ապկտ.՝ կոտորելու, ժխտ.՝ կոտորի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈՏՈՐՎԵԼ, ԿՈՏՈՐԵԼ**-ի **կրվ.** (Ազգի մի ստվար մասը **կոտորվեց** թշնամու կողմից), **չեզ. (Կոտորվեց** ամբողջ օրն աշխատելով): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈՏՐԵԼ, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց.** (կոտրել *ափսեն*), **գործ.** (կոտրել *մուրճով*), ենթ.՝ **(չ)կոտորող, հմկտ.՝ (չ)կոտրելիս, հրկտ.՝ (չ)կոտրած, անկտ.՝ կոտրում, վղկտ.՝ կոտրել, ապկտ.՝ կոտրելու, ժխտ.՝ կոտրի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈՏՐՎԵԼ, ԿՈՏՐԵԼ**-ի **կրվ.** (Դուռը **կոտրվեց** ուժեղ հարվածից), **չեզ. (Կոտրվել էր և չէր ուզում աշխատել):** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈՐԱԳԻԾ, գոյ., գծեր, գծի, բաց.՝ գծից, գործ.՝ գծով, ներգ.՝ գծում:**

**ԿՈՏՐԱՏԵԼ, նբ, Ե լծ., կանոն., առ բազմ. ած., խնդրո.՝ ուղղ.-հայց.** (կոտրատել *փայտը*), **գործ.** (կոտրատել *կացինով*), ենթ.՝ **(չ)կոտրատող, հմկտ.՝ (չ)կոտրատելիս, հրկտ.՝ (չ)կոտրատած, անկտ.՝ կոտրատում, վղկտ.՝ կոտրատել, ապկտ.՝ կոտրատելու, ժխտ.՝ կոտրատի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈՏՐԱՏՎԵԼ, ԿՈՏՐԱՏԵԼ**-ի **կրվ.** (Ապակին **կոտրատվեց** ուժեղ քամուց), **չեզ. (Կոտրատվելով քայլում էր):** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈՐԻՉ, գոյ., ներ, ի, բաց.՝ հց, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԿՈՐՉԵԼ, չբ, Ե լծ., կանոն., չ սոսկած., ենթ.՝ (չ)կորչող, հմկտ.՝ (չ)կորչելիս, հրկտ.՝ (չ)կորած, անկտ.՝ կորչում, վղկտ.՝ կորել, ապկտ.՝ կորչելու, ժխտ.՝ կորչի:** (տե՛ս V<sup>2</sup>)

**ԿՈՐՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ցն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կորցնել *իրերը*), **սեռ.-տրկ.** (կորցնել *հարազատին*), ենթ.՝ **(ջ)կորցնող**, հմկտ.՝ **(ջ)կորցնելիս**, հրկտ.՝ **(ջ)կորցրած**, անկտ.՝ **կորցնում**, վղկտ.՝ **կորցրել**, ապկտ.՝ **կորցնելու**, ժխտ.՝ **կորցնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԿՈՐՑՎԵԼ**, տե՛ս **ԿՈՐՍՎԵԼ**:

**ԿՈՐՍՎԵԼ**, **ԿՈՐՑՆԵԼ**-ի **կրվ.** (*Հնարավորությունը կորսվեց բոլորի կողմից*), **չեզ.** (*Ծառերի կատարները կորսվել էին ամպերի մեջ*): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈՐՈՒՍՏ**, գոյ., ներ, ըստի/ի, բաց.՝ **ըստից/ից**, գործ.՝ **ըստով/ով**, ներգ.՝ **ըստում/ում**:

**ԿՊՆԵԼ\***, տե՛ս **ԿՊՉԵԼ**:

**ԿՊՉԵԼ**, չբ, ե լծ., կանոն., չ սուկած., խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (կաչել *պատին*), **գործ.** (կաչել *սոսնձով*), ենթ.՝ **(ջ)կաչող**, հմկտ.՝ **(ջ)կաչելիս**, հրկտ.՝ **(ջ)կաած**, անկտ.՝ **կաչում**, վղկտ.՝ **կաել**, ապկտ.՝ **կաչելու**, ժխտ.՝ **կաչի**: (տե՛ս V<sup>2</sup>)

**ԿՊՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ցն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կացնել *թուղթը*), **սեռ.-տրկ.** (կացնել *պատին*), **գործ.** (կացնել *սոսնձով*), ենթ.՝ **(ջ)կացնող**, հմկտ.՝ **(ջ)կացնելիս**, հրկտ.՝ **(ջ)կացրած**, անկտ.՝ **կացնում**, վղկտ.՝ **կացրել**, ապկտ.՝ **կացնելու**, ժխտ.՝ **կացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԿՊՑՎԵԼ**, **ԿՊՑՆԵԼ**-ի **կրվ.**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՈՒՎ**, գոյ., ներ, կովի/ի, բաց.՝ **կովից/ից**, գործ.՝ **կովով/ով**, ներգ.՝ **կովում/ում**:

**ԿՈՎԵԼ**, չբ, ե լծ., կանոն., պարզ (տե՛ս *Առաջաբան*), խնդրո.՝ **գործ.** (կովել *գենքով*), ենթ.՝ **(ջ)կովող**, հմկտ.՝ **(ջ)կովելիս**, հրկտ.՝ **(ջ)կոված**, անկտ.՝ **կովում**, վղկտ.՝ **կովել**, ապկտ.՝ **կովելու**, ժխտ.՝ **կովի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՍԿԻԾ**, գոյ., ներ, ի/կծի<sup>օ</sup>, բաց.՝ **ից/կծից<sup>օ</sup>**, գործ.՝ **ով/կծով<sup>օ</sup>**, ներգ.՝ **ում**:

**ԿՏԱՎԱԳՈՐԾ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԿՏՐԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կտրել *թելը*), **գործ.** (կտրել *մկրատով*), ենթ.՝ **(ջ)կտրող**, հմկտ.՝ **(ջ)կտրելիս**, հրկտ.՝ **(ջ)կտրած**, անկտ.՝ **կտրում**, վղկտ.՝ **կտրել**, ապկտ.՝ **կտրելու**, ժխտ.՝ **կտրի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՏՐՎԵԼ**, **ԿՏՐԵԼ**-ի **կրվ.** (*Կապը կտրվեց թշնամու կողմից*), **չեզ.** (*Անձրևը կտրվեց, և արև ելավ*): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՏՐԱՏԵԼ/ԿՏՐՏԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ատ/տ** բազմ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (կտրատել *միրգ*), **գործ.** (կտրատել *դանակով*), ենթ.՝ **(ջ)կտրատող**,

հմկտ.՝ (ջ)կտրատելիս, հրկտ.՝ (ջ)կտրատած, անկտ.՝ կտրատում, վղկտ.՝ կտրատել, ապկտ.՝ կտրատելու, ժխտ.՝ կտրատի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՏՐԱՏՎԵԼ/ԿՏՐՏՎԵԼ, ԿՏՐԱՏԵԼ/ԿՏՐՏԵԼ-ի կրվ.** (Կտրորը կտրտվեց  
դերձակի կողմից), **չեզ.** (Խոսելիս ձայնը կտրտվում էր): (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՏՐԻՃ, որ. ած., բղդտ.՝ ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից:**

**ԿՏՐԻՉ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ԿՏՈՒՑ, գոյ., ներ, ի/կտցի, բաց.՝ ից/կտցից, գործ.՝ ով/կտցով, ներգ.՝ ում:**

**ԿՐԱԿԱՀԵՐԹ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԿՐԱԿԵԼ, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց.** (կրակել *հրացան*),  
**սեռ.-տրկ.** (սպանել իմաստով\*) (կրակել *մարդուն\**), **գործ.** (կրակել *զեն-  
քով*), ենթ.՝ (ջ)կրակող, հմկտ.՝ (ջ)կրակելիս, հրկտ.՝ (ջ)կրակած, անկտ.՝  
կրակում, վղկտ.՝ կրակել, ապկտ.՝ կրակելու, ժխտ.՝ կրակի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՐԱԿՎԵԼ, ԿՐԱԿԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՐԹՎԱԾ, հրբ./որ. ած., բղդտ.՝ ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից**  
(Շար կրթված ու բանիմաց մարդ է երևում):

- **ԿՐԹՎԱԾ, ԿՐԹ(Վ)ԵԼ-ի** հրկտ. դերբայ (Եվրոպաներում կրթված այդ  
երկրասարդը լավ ապագա ունի):

**ԿՐԹԵԼ, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց.** (կրթել *սերունդ*),  
**սեռ.-տրկ.** (կրթել *երեխային*), **գործ.** (կրթել *դասագրքով*), ենթ.՝ (ջ)կրթող,  
հմկտ.՝ (ջ)կրթելիս, հրկտ.՝ (ջ)կրթած, անկտ.՝ կրթում, վղկտ.՝ կրթել,  
ապկտ.՝ կրթելու, ժխտ.՝ կրթի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՐԹՎԵԼ, ԿՐԹԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ԿՐԿԻՆ, ժմնկի/չափի մկբ.** (Երկար ընդմիջումից հետո կրկին հանդիպե-  
ցին):

**ԿՐԿՆԱԿԻ**

1. **հրբ. ած.** (Կրկնակի հարված սրացավ դեմքին):

2. **չափի մկբ.** (Կրկնակի վճարեց):

**ԿՐԿՆԵՐԳ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ԿՐՆԿԱԿՈՒ**

1. **ձևի մկբ.** (Կրնկակոխ հետևում էր այդ մարդուն):

2. **հրբ. ած.** (Կրնկակոխ քայլերով հետևում էր նրան):

**ԿՐՏՍԵՐ, որ. ած.:**

**ԿՐՈՒՆԿ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿՐՈՒԺ**, գոյ., կժեր/եր, կժի/ի, բաց.՝ **կժից/ից**, գործ.՝ **կժով/ով**, ներգ.՝ **կժում/ում**:

### **ԿՐՈՒՅՐ**

1. որ. ած. (**Կույր** ամբոխը առաջ էր շարժվում):

2. գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Կույրը**, ձեռքի փայտը առաջ պարզած, քայլում էր):

**ԿՐՈՒՈՂ** (ամուր), որ. ած., բղդտ.՝ **ավելի**, առավել, գրդ.՝ **ամենա-/ամենից** (Մարտահրավերներին դիմակայելու համար **կուռ** միություն էին կազմել):

**ԿՐՈՒՈՂ**<sup>2</sup> (թև)\*\*, գոյ., կոներ, կուան, բաց.՝ **նից**, գործ.՝ **նով**, հոգն. ներգ.՝ **կոներում** (Կուրած **կուռը** փաթաթել, կանգնել էր):

**ԿՐՈՒՌՔ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ԿՐՈՒՍԱԿԱԼ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ԿՐՈՒՍԱԿԻՑ**, գոյ., ներ, կցի, բաց.՝ **կցից**, գործ.՝ **կցով**:

### **ԿՐՈՒՍԱԿՏԱԿԱՆ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Կուսակցականները** ելել էին պայքարի):

2. հրբ. ած. (**Կուսակցական** թիմը իր գաղափարն էր առաջ քաշում):

**ԿՐՈՒՏ**, գոյ., եր/կտեր, ի/կտի, բաց.՝ **ից/կտից**, գործ.՝ **ով/կտով**, ներգ.՝ **ում/կտում**:

**ԿՐՈՒՐԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սուկած., ենթ.՝ (**չ**)**կուրացող**, հմկտ.՝ (**չ**)**կուրանալիս**, հրկտ.՝ (**չ**)**կուրացած**, անկտ.՝ **կուրանում**, վղկտ.՝ **կուրացել**, ապկտ.՝ **կուրանալու**, ժխտ.՝ **կուրանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ԿՐՈՒՐԱՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (կուրացնել **աչքը**), **սեռ.-տրկ.** (կուրացնել **մարդուն**), **գործ.** (կուրացնել **սրով**), ենթ.՝ (**չ**)**կուրացնող**, հմկտ.՝ (**չ**)**կուրացնելիս**, հրկտ.՝ (**չ**)**կուրացրած**, անկտ.՝ **կուրացնում**, վղկտ.՝ **կուրացրել**, ապկտ.՝ **կուրացնելու**, ժխտ.՝ **կուրացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ԿՐՈՒՐԱՑՎԵԼ**, **ԿՐՈՒՐԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

### **ԿՐՈՒՐՍԵՑԻ**

1. գոյ., ներ, ցու/ի, բաց.՝ **ցուց/ից**, գործ.՝ **ով** (Հավաքվել էին **կուրսեցիներով**):

2. հրբ. ած. (Անակնկալ հանդիպեցի **կուրսեցի** ընկերոջս):



## ՀԱ

1. **զգցկ. ձյնրկ.** (**Հա՛**, այդպես էլ մտածեցի):

2. **հստտ. վրբ.\*** (**Հա՛**, կգամ քեզ հետ):

**ՀԱԳԱԾ**, **հրբ. ած.** (**Հազած**, զուգված, պճնված հյուրերը զվարճանում էին):

• **ՀԱԳԱԾ**, **ՀԱԳՆԵԼ**-ի հրկտ. դերբայ (**Չէր սիրում ուրիշի հազած շորերը հագնել**):

**ՀԱԳԵՆԱԼ**, **չբ, ա լծ.**, կանոն., **են** սոսկած., խնդրո՛ւ՝ **բաց.** (հագենալ *կերակորներին*), **գործ.** (հագենալ *մի բաժակ ջրով*), ենթ.՝ **(ջ)հագեցող**, հմկտ.՝ **(ջ)հագենալիս**, հրկտ.՝ **(ջ)հագեցած**, անկտ.՝ **հագենում**, վղկտ.՝ **հագեցել**, ապկտ.՝ **հագենալու**, ժխտ.՝ **հագենա:** (տե՛ս V<sup>5</sup>)

**ՀԱԳԵՑՆԵԼ**, **նբ, ե լծ.**, կանոն., **եցն** պատճ. ած., խնդրո՛ւ՝ **ուղղ.-հայց.** (հագեցնել *ծարավը*), **սեռ.-տրկ.** (հագեցնել *մարդուն*), **գործ.** (հագեցնել *ջրով*), ենթ.՝ **(ջ)հագեցնող**, հմկտ.՝ **(ջ)հագեցնելիս**, հրկտ.՝ **(ջ)հագեցրած**, անկտ.՝ **հագեցնում**, վղկտ.՝ **հագեցրել**, ապկտ.՝ **հագեցնելու**, ժխտ.՝ **հագեցնի:** (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱԳԵՑՎԵԼ**, **ՀԱԳԵՑՆԵԼ**-ի **կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱԳՆԵԼ**, **նբ, ե լծ.**, կանոն., **ն** սոսկած., խնդրո՛ւ՝ **ուղղ.-հայց.** (*շապիկ հագնել*), ենթ.՝ **(ջ)հագնող**, հմկտ.՝ **(ջ)հագնելիս**, հրկտ.՝ **(ջ)հագած**, անկտ.՝ **հագնում**, վղկտ.՝ **հագել**, ապկտ.՝ **հագնելու**, ժխտ.՝ **հագնի:** (տե՛ս V<sup>2</sup>)

**ՀԱԳՆՎԵԼ**, **չբ, ե լծ.**, կանոն., պարզ, **վ** ած. (կրավորական իմաստը մթագնել է), ենթ.՝ **(ջ)հագնվող**, հմկտ.՝ **(ջ)հագնվելիս**, հրկտ.՝ **(ջ)հագնված**, անկտ.՝ **հագնվում**, վղկտ.՝ **հագնվել**, ապկտ.՝ **հագնվելու**, ժխտ.՝ **հագնվի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱԳՑՆԵԼ**, **նբ, ե լծ.**, կանոն., **ցն** պատճ. ած., խնդրո՛ւ՝ **ուղղ.-հայց.** (հագցնել *զգեստ*), **սեռ.-տրկ.** (հագցնել *երեխային*), **գործ.** (հագցնել *ձեռքով*), ենթ.՝ **(ջ)հագցնող**, հմկտ.՝ **(ջ)հագցնելիս**, հրկտ.՝ **(ջ)հագցրած**, անկտ.՝ **հագցնում**, վղկտ.՝ **հագցրել**, ապկտ.՝ **հագցնելու**, ժխտ.՝ **հագցնի:** (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱԳՑՎԵԼ**, **ՀԱԳՑՆԵԼ**-ի **կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՋԱՐՐ**<sup>1</sup> (փասը հարյուրյակ), **քնկ. թվ.** (Մրցույթի համար **հազար** հայտ էին ստացել):

**ՀԱՋԱՐ**<sup>2</sup> (բույս), **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում** (**Հազարով** աղ-  
ցան պատրաստեց):

**ՀԱՋԱՐԱԿԱՆ**, բաշխ. թվ.:

**ՀԱՋԱՐԱՄՅԱԿ**, **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում**:

**ՀԱՋԱՐԱՆՈՑ**

1. **հրբ. ած.** (Գեորգի մյուս կողմում հակառակորդի **հազարանոց** ջոկատն էր):

2. **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, հոգն. ներգ.՝ ներում** (Սեղանի վրա դրված էր հինգ հապ **հազարանոց**):

**ՀԱՋԱՐԱՎՈՐ**, **հրբ. ած.:**

**ՀԱՋԻՎ**, **ծևի/չափի մկբ.** (Նա **հազիվ** էր խոսում):

**ՀԱՋԻՎ ԹԵ**, **երկբ. վրբ.:**

**ՀԱՋՎԱԴԵՊ**, **ծևի/չափի մկբ.** (Հյուսիսսփայլը բնության մեջ **հազվադեպ** հանդիպող երևույթներից է):

**ՀԱԼԵԼ**, **նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց.** (հալել յուղը), **գործ.** (հալել կրակով), **ենթ.՝ (չ)հալող, հմկտ.՝ (չ)հալելիս, հրկտ.՝ (չ)հալած, անկտ.՝ հալում, վղկտ.՝ հալել, ապկտ.՝ հալելու, ժխտ.՝ հալի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱԼՎԵԼ**, **ՀԱԼԵԼ-ի կրվ.** (Ձյունը **հալվեց** արևից), **չեգ.** (Նրան փեսանելիս **հալվում** էր): (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱԼԵՑՆԵԼ**, **նբ, ե լծ., կանոն., եցն** պատճ. ած., **խնդրո.՝ ուղղ.-հայց.** (հալեցնել մեքաղը), **գործ.** (հալեցնել լուցկիով), **ենթ.՝ (չ)հալեցնող, հմկտ.՝ (չ)հալեցնելիս, հրկտ.՝ (չ)հալեցրած, անկտ.՝ հալեցնում, վղկտ.՝ հալեցրել, ապկտ.՝ հալեցնելու, ժխտ.՝ հալեցնի:** (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱԼԵՑՎԵԼ**, **ՀԱԼԵՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱԼՉԵԼ**<sup>0</sup>, **չբ, ե լծ., կանոն., պարզ, չ սոսկած., ենթ.՝ (չ)հալչող, հմկտ.՝ (չ)հալչելիս, հրկտ.՝ (չ)հալած, անկտ.՝ հալչում, վղկտ.՝ հալել, ապկտ.՝ հալչելու, ժխտ.՝ հալչի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱԼՎԱ**, **գոյ., ներ, յի, բաց.՝ յից, գործ.՝ յով, ներգ.՝ յում**:

**ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ**, **գոյ., ներ, թյան, բաց.՝ ից, գործ.՝ թյամբ/ով, հոգն. ներգ.՝ ներում**:



**ՀԱԿԱՆԻՇ**

1. գոյ., ներ, ի/նշի, բաց.՝ **ից/նշից**, գործ.՝ **ով/նշով**, ներգ.՝ **ում/նշում**  
(**Հականիշները** իմաստով հակառակ բառերն են):
2. հրբ. ած. (Առաջադրանքում փոխված էին **հականիշ** բառեր):

**ՀԱԿԱՌԱԿ**

1. հրբ. ած. (Մեքենան ընթացավ **հակառակ** կողմով):
2. կպկ. բառ, երկդ., խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (հակառակ պայմանավորվածությամբ), **տրկ.** (նրան հակառակ):
3. ձևի մկբ. (Սովորել է **հակառակ** խոսել):

**ՀԱԿԱՌԱԿՈՐԴ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:****ՀԱԿԸՆԴԴԵՄ**

1. հրբ. ած. (**Հակընդդեմ** քայլեր էր անում):
2. ձևի մկբ. (**Հակընդդեմ** կանգնել և նայում էին իրար):

**ՀԱԿՈՒՄ, գոյ., ներ, կման/ի, բաց.՝ ից, գործ.՝ կմամբ/ով, հոգն. ներգ.՝ ներում:****ՀԱՂԹԵԼ, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց<sup>♦</sup>. (հաղթել խաղը), սեռ.-տրկ. (հաղթել թշնամուն), գործ. (հաղթել զենքով), ենթ.՝ (չ)հաղթող, հմկտ.՝ (չ)հաղթելիս, հրկտ.՝ (չ)հաղթած, անկտ.՝ հաղթում, վղկտ.՝ հաղթել, ապկտ.՝ հաղթելու, ժխտ.՝ հաղթի: (տե՛ս V<sup>1</sup>)****ՀԱՂՈՐԴԱՎԱՐ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:****ՀԱՃԱԽ/ՀԱՃԱԽԱԿԻ, ձևի/չափի մկբ. (Նա հաճախ էր այցելում ծնողներին):****ՀԱՃԱԽԵԼ, չբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ սեռ.-տրկ. (հաճախել պարապմունքների), ենթ.՝ (չ)հաճախող, հմկտ.՝ (չ)հաճախելիս, հրկտ.՝ (չ)հաճախած, անկտ.՝ հաճախում, վղկտ.՝ հաճախել, ապկտ.՝ հաճախելու, ժխտ.՝ հաճախի: (տե՛ս V<sup>1</sup>)****ՀԱՃԵԼԻ**

1. որ. ած., բղդտ.՝ **ավելի, առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից/-**(ա)գույն  
(Աղջիկը **հաճելի** ծայն ունի):
2. ձևի մկբ. (Նրանք **հաճելի** զրուցում էին):

**ՀԱՄ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, հոգն. ներգ.՝ երում:****ՀԱՄԱԶԳԵՍՏ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ՀԱՄԱԼԻՐ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Կառուցվեց նոր **համալիր**):

2. հրբ. ած. (Նախագիծն ուղարկվեց **համալիր** փորձաքննության):

**ՀԱՄԱԿՐԵԼ**, չբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (համակրել աղջկան), ենթ.՝ **(չ)համակրող**, հմկտ.՝ **(չ)համակրելիս**, հրկտ.՝ **(չ)համակրած**, անկտ.՝ **համակրում**, վղկտ.՝ **համակրել**, ապկտ.՝ **համակրելու**, ժխտ.՝ **համակրի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՄԱԿՐԵԼԻ**, որ. ած., բղղտ.՝ **ավելի**, առավել, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**, գոյ., գրեր, գրի, բաց.՝ **գրից**, գործ.՝ **գրով**, ներգ.՝ **գրում**:

**ՀԱՄԱՁԱՅՆԵԼ**, չբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (համաձայնել առաջարկին), ենթ.՝ **(չ)համաձայնող**, հմկտ.՝ **(չ)համաձայնելիս**, հրկտ.՝ **(չ)համաձայնած**, անկտ.՝ **համաձայնում**, վղկտ.՝ **համաձայնել**, ապկտ.՝ **համաձայնելու**, ժխտ.՝ **համաձայնի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., եցն պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (համաձայնեցնել պայմանագիրը), բաց. (համաձայնեցնել բնագրին), գործ. (համաձայնեցնել դաշնագրով), ենթ.՝ **(չ)համաձայնեցնող**, հմկտ.՝ **(չ)համաձայնեցնելիս**, հրկտ.՝ **(չ)համաձայնեցրած**, անկտ.՝ **համաձայնեցնում**, վղկտ.՝ **համաձայնեցրել**, ապկտ.՝ **համաձայնեցնելու**, ժխտ.՝ **համաձայնեցնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ**, **ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼ-ի կրվ.**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՄԱՃԱՐԱԿ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Բռնկվեց նոր **համաճարակ**):

2. հրբ. ած.<sup>◊</sup> (**Համաճարակ** հրդեհը ոչնչացրեց ամեն ինչ):

**ՀԱՄԱՅՆ**, որոշ. դեր., **ածականանիշ**:

**ՀԱՄԱՅՑ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀԱՄԱՌ**, որ. ած., բղղտ.՝ **ավելի**, առավել, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

**ՀԱՄԱՌՈՏ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի**, առավել, գրղ.՝ **ամենա-/ամենից** (Ստրասնը **համառոտ** մի պատրասխան):

2. ձևի մկբ. (Շար **համառոտ** ներկայացրեց իրավիճակը):

**ՀԱՄԱՐ**<sup>1</sup> (թիվ, թվակարգ), գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Հյուրանոցում առածին **համար** ամրագրեց):

**ՀԱՄԱՐ<sup>2</sup>** (նպատակով), **իսկ. կապ, հոդ., խնդրո.՝ սեռ.-տրկ.** (քրոջ համար),  
**տրկ.** (քեզ համար):

**ՀԱՄԱՐԱՆԻՇ**, **գոյ., եր/ներ, ի/նչի՞, բաց.՝ ից/նչից՞, գործ.՝ ով/նչով՞, ներգ.՝ ում:**

**ՀԱՄԱՐՅԱ (ԹԵ), չափի մկբ.:**

**ՀԱՄԵՄԱՏ**, **իսկ. կապ, հոդ., խնդրո.՝ սեռ.-տրկ.** (մյուսների համեմատ),  
**սեռ.** (դրա համեմատ):

**ՀԱՄԵՐԳ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ՀԱՄՏԵՍ**

I. **գոյ.** (համ տեսնելը), **ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, հոգն. ներգ.՝ ներում**  
(Կազմակերպվել էր գինու **համրես**):

II. **գոյ.** (համային որակը որոշող մասնագետ), **ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով**  
(**Համրեսը** բարձր գնահատեց հայկական գինու նոր տեսակը):

**ՀԱՄՐ**

1. **որ. ած.** (**Համր** քայլերով մոտեցավ ինձ):

2. **գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով** (**Համրը** ձեռքի շարժումներով բացատրեց **ասելիքը**):

**ՀԱՅ՝** (ազգի անվանում)

1. **գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով** (**Հայը** ստեղծող և արարող է):

2. **որ. ած.** (**Հայ** ազգը ունի մշակութային հին արժեքներ):

**ՀԱՅ<sup>2</sup>** (բացականչություն), **զգցկ. ձյնրկ. (Հայ՛, ջուր բերեք):**

**ՀԱՅԱԳԵՏ**

1. **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով** (Գիտաժողովին մասնակցում էր նաև Գերմանիայից ժամանած մի **հայագետ**):

2. **հրբ. ած.** (Մեզ ուղեկցում էին մի խումբ **հայագետ** գիտնականներ):

**ՀԱՅԵԼԻ, գոյ., ներ, լու/ի, բաց.՝ լուց/ից, գործ.՝ ով/լով, ներգ.՝ լում/ում:**

**ՀԱՅԵՐԵՆ**

1. **գոյ., ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում** (**Հայերենը** պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին):

2. **հրբ. ած.** (Պահպանվել են **հայերեն** արձանագրություններ):

3. **ձևի մկբ.** (Համաշխարհային ժամանակակից գրականությունը **հայերեն** է թարգմանվում):

**ՀԱՅՏԱԳԻՐ, գոյ., գրեր, գրի, բաց.՝ գրից, գործ.՝ գրով, ներգ.՝ գրում:**

**ՀԱՅՏՆԱՊԵՍ, ձևի մկբ.:**

**ՀԱՅՏՆԵԼ, նբ, Ե լծ.,** կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (հայտնել *լուր*), սեռ.-տրկ. (հայտնել *ընկերոջը*), **գործ.** (հայտնել *զանգով*), ենթ.՝ **(չ)հայտնող,** հմկտ.՝ **(չ)հայտնելիս,** հրկտ.՝ **(չ)հայտնած,** անկտ.՝ **հայտնում,** վղկտ.՝ **հայտնել, ապկտ.՝ հայտնելու, ժխտ.՝ հայտնի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՅՏՆՎԵԼ, ՀԱՅՏՆԵԼ-ի կրվ.** (Լուրը **հայտնվեց** փոստապարի կողմից), **չեգ.** (Պատրաստակա՛ն **հայտնվեց** մեր փանը): (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՅՏՆԻ, որ. ած., բղղտ.՝ ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից:**

**ՀԱՅՐ, գոյ., եր, հոր, բաց.՝ հորից, գործ.՝ հորով:**

**ՀԱՅՐԱՊԵՏ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:**

**ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ**

1. **գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով** (Մի խումբ **հայրենադարձներ** հաստատվեցին փոքրիկ ավանում):

2. **հրբ. ած. (Հայրենադարձ** ընկերները նախաձեռնեցին նոր ծրագիր):

**ՀԱՆԱԾՈՆ, գոյ., ներ, յի, բաց.՝ յից, գործ.՝ յով, ներգ.՝ յում:**

**ՀԱՆԳԵԼ, չբ, Ե լծ.,** կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (հանգել *եզրակացությունների*), ենթ.՝ **(չ)հանգող,** հմկտ.՝ **(չ)հանգելիս,** հրկտ.՝ **(չ)հանգած,** անկտ.՝ **հանգում,** վղկտ.՝ **հանգել, ապկտ.՝ հանգելու, ժխտ.՝ հանգի:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՆԳԻՍ**

1. **հրբ./որ. ած., բղղտ.՝ ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից** (**Հանգիստ** ու անվրդով բնավորություն ուներ):

2. **ձևի մկբ.** (Շատ **հանգիստ** վերաբերվեց կատարվածին):

3. **գոյ., գստի/գստյան, բաց.՝ գստից, գործ.՝ գստով, ներգ.՝ գստում** (Մի-րում էր **հանգիստն** անցկացնել ծովափում):

**ՀԱՆԳՉԵԼ, չբ, Ե լծ.,** կանոն., պարզ, ենթ.՝ **(չ)հանգչող,** հմկտ.՝ **(չ)հանգչելիս,** հրկտ.՝ **(չ)հանգած,** անկտ.՝ **հանգչում,** վղկտ.՝ **հանգել, ապկտ.՝ հանգչելու, ժխտ.՝ հանգչի:** (տե՛ս V<sup>2</sup>)

**ՀԱՆԳՅՆԵԼ, նբ, Ե լծ.,** կանոն., **ցն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (հանգցնել *մոմը*), **գործ.** (հանգցնել *կրակմարիչով*), ենթ.՝ **(չ)հանգցնող,** հմկտ.՝ **(չ)հանգցնելիս,** հրկտ.՝ **(չ)հանգցրած,** անկտ.՝ **հանգցնում,** վղկտ.՝ **հանգցրել, ապկտ.՝ հանգցնելու, ժխտ.՝ հանգցնի:** (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱՆԳՑՎԵԼ, ՀԱՆԳՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՆԳՍԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., խնդրո.՝ բաց. (հանգստանալ *հոգսերից*), ենթ.՝ (ջ)հանգստացող, հմկտ.՝ (ջ)հանգստանալիս, հրկտ.՝ (ջ)հանգստացած, անկտ.՝ հանգստանում, վղկտ.՝ հանգստացել, ապկտ.՝ հանգստանալու, ժխտ.՝ հանգստանա: (տե՛ս V<sup>5</sup>)

**ՀԱՆԳՍԱՑՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ ուղղ.-հայց. (հանգստացնել *նյարդերը*), սեռ.-տրկ. (հանգստացնել *երեխային*), գործ. (հանգստացնել *խոսքերով*), ենթ.՝ (ջ)հանգստացնող, հմկտ.՝ (ջ)հանգստացնելիս, հրկտ.՝ (ջ)հանգստացրած, անկտ.՝ հանգստացնում, վղկտ.՝ հանգստացրել, ապկտ.՝ հանգստացնելու, ժխտ.՝ հանգստացնի: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱՆԳՍԱՑՎԵԼ, ՀԱՆԳՍԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

### ՀԱՆԴԱՐՏ

1. որ./հրբ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից** (**Հանդարտ** *տոնով խոսում էր ինձ հետ*):

2. ձևի մկբ. (Գեպը **հանդարտ** *հոսում էր*):

**ՀԱՆԴԵՊ**, իսկ. կապ, երկդր., խնդրո.՝ սեռ.-տրկ. (*ընկերոջ* հանդեպ), սեռ. (*քո* հանդեպ), տրկ. (հանդեպ *ինձ*):

**ՀԱՆԴԵՐՁ<sup>1</sup>** (*հագուստ*), գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, *հոգն. ներգ.՝ ներում* (*Տոնական հանդերձով ներս մտավ*):

**ՀԱՆԴԵՐՁ<sup>2</sup>** (*միասին*), իսկ. կապ, հտդր., խնդրո.՝ գործ. (*ընտանիքով* հանդերձ):

**ՀԱՆԴԵՐՁԱՊԱՀ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ՀԱՆԴԻՍԱՏԵՍ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

### ՀԱՆԴՈՒԳՆ

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից** (**Հանդուգն** *տղան պատրաստ էր իր ասածն անելուն*):

2. ձևի մկբ. (*Անձանոթը, հանդուգն քայլելով, մոտեցավ կանգնածներին*):

**ՀԱՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց. (հանել *հագուստը*), գործ. (հանել *աքցանով*), ենթ.՝ (ջ)հանող, հմկտ.՝ (ջ)հանելիս, հրկտ.՝ (ջ)հանած, անկտ.՝ հանում, վղկտ.՝ հանել, ապկտ.՝ հանելու, ժխտ.՝ հանի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՆՎԵԼ, ՀԱՆԵԼ**-ի կրվ. (*Իրերը հանվեցին բեռնակրի կողմից*), չեգ. (*Նա հանվեց և պառկեց քնելու*): (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՆԻՐԱՎԻ**, ձևի մկբ.:

**ՀԱՆԿԱՐԾ**, ձևի մկբ.:

**ՀԱՆԿԱՐԾԱԿԻ**, ձևի մկբ.:

**ՀԱՆՁԻՆ(Ս)**, իսկ. կապ, նխդ., խնդրո.՝ սեռ.-տրկ. (հանձին աշակերտի, հանձինս աշակերտների), տրկ. (հանձին քեզ, հանձինս ձեզ):

**ՀԱՆՑԱԽՈՒՄԲ**, գոյ., խմբեր, խմբի, բաց.՝ խմբից, գործ.՝ խմբով, ներգ.՝ խմբում:

**ՀԱՆՐԱՔՎԵ**, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

**ՀԱՆՑԱԳՈՐԾ**, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:

**ՀԱՆՑԱԿԱՂՄ**, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

**ՀԱՆՑԱՊԱՐՏ**, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով:

**ՀԱՆՈՒՄ**, գոյ., ներ, նման/ի, բաց.՝ ից, գործ.՝ նմամբ/ով:

**ՀԱՆՈՒՆ**, իսկ. կապ, նխդ., խնդրո.՝ սեռ.-տրկ. (հանուն սիրո), տրկ. (հանուն քեզ):

**ՀԱՆՔԱԽՈՐՇ**, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

**ՀԱՆՔԱՀՈՐ**, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

**ՀԱՆՔԱՎԱՅՐ**, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

**ՀԱՇԻՇ**, գոյ., ի, ներ, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

**ՀԱՇԻՎ**, գոյ., ներ, շվի/ի\*, բաց.՝ շվից/ից\*, գործ.՝ շվով/ով\*, ներգ.՝ շվում/ում\*:

**ՀԱՇՎԱՊԱՀ**, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:

**ՀԱՇՎԵԹՈՒՂԹ**, գոյ., թղթեր, թղթի, բաց.՝ թղթից, գործ.՝ թղթով, ներգ.՝ թղթում:

**ՀԱՇՎԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ (տե՛ս Առաջաբան), խնդրո.՝ ուղղ.-հայց. (հաշվել գումարը), սեռ.-տրկ. (հաշվել մասնակիցներին), գործ. (հաշվել հաշվիչով), ենթ.՝ (չ)հաշվող, հմկտ.՝ (չ)հաշվելիս, հրկտ.՝ (չ)հաշված, անկտ.՝ հաշվում, վղկտ.՝ հաշվել, ասկտ.՝ հաշվելու, ժխտ.՝ հաշվի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՇՎՎԵԼ**, **ՀԱՇՎԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՇՎԵՏՈՒ**, հրբ. ած.:

**ՀԱՇՏ**

1. որ. ած. (Նրանց հաշտ ընդանիքը արարում էր):

2. ձևի մկբ. (Հաշտ ասարում էին մի փանիքի փակ):

**ՀԱՉԱԼ\***, տե՛ս **ՀԱՉԵԼ**:

**ՀԱՉԵԼ**, չբ, Ե լծ., կանոն., պարզ, ենթ.՝ **(ջ)հաչող**, հմկտ.՝ **(ջ)հաչելիս**, հրկտ.՝ **(ջ)հաչած**, անկտ.՝ **հաչում**, վղկտ.՝ **հաչել**, ապկտ.՝ **հաչելու**, ժխտ.՝ **հաչի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՉԵՑՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., եցն պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-սեռ.** (վրաններս շուն հաչեցնել), **սեռ.-տրկ.** (հաչեցնել շանը), ենթ.՝ **(ջ)հաչեցնող**, հմկտ.՝ **(ջ)հաչեցնելիս**, հրկտ.՝ **(ջ)հաչեցրած**, անկտ.՝ **հաչեցնում**, վղկտ.՝ **հաչեցրել**, ապկտ.՝ **հաչեցնելու**, ժխտ.՝ **հաչեցնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱՊՃԵՊ**, ձևի մկբ.:

**ՀԱՋՈՂ**

1. **հրբ./որ. ած.**, բղդտ.՝ **ավելի, առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից** (Կազմակերպությունը **հաջող** գործարք կնքեց):

2. **ձևի մկբ.** (Տղան **հաջող** հանձնեց քննությունը):

**ՀԱՋՈՐԴ**, հրբ. ած.:

**ՀԱՍԱԾ**, հրբ./որ. ած., բղդտ.՝ **ավելի, առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից** (Սանային ամուսնացնելու ժամանակն է. **հասած** աղջիկ է):

• **ՀԱՍԱԾ**, **ՀԱՍՆԵԼ**-ի հրկտ. դերբայ (Չորամասի շեմին **հասած** զինվորները կանգնեցին՝ փոքր-ինչ շունչ առնելու):

**ՀԱՍՆԵԼ**, չբ, Ե լծ., կանոն., ն սոսկած., խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (հասնել **հաջողության**), **գործ.** (հասնել **գնացքով**), ենթ.՝ **(ջ)հասնող**, հմկտ.՝ **(ջ)հասնելիս**, հրկտ.՝ **(ջ)հասած**, անկտ.՝ **հասնում**, վղկտ.՝ **հասել**, ապկտ.՝ **հասնելու**, ժխտ.՝ **հասնի**: (տե՛ս V<sup>2</sup>)

**ՀԱՍՑՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., ցն պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (հասցնել **սպրանքը**), **սեռ.-տրկ.** (հասցնել **հասցեատիրոջը**), **գործ.** (հասցնել **մեքենայով**), ենթ.՝ **(ջ)հասցնող**, հմկտ.՝ **(ջ)հասցնելիս**, հրկտ.՝ **(ջ)հասցրած**, անկտ.՝ **հասցնում**, վղկտ.՝ **հասցրել**, ապկտ.՝ **հասցնելու**, ժխտ.՝ **հասցնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱՍՑՎԵԼ**, **ՀԱՍՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՍՏ**

1. **որ. ած.**, բղդտ.՝ **ավելի, առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից** (Վերարկուն **հաստ** կտորից էր կարված):

2. **ձևի մկբ.** (Ապխտած միսը **հաստ** էր կտրատել):

**ՀԱՍՏԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., ան սոսկած., ենթ.՝ **(ջ)հաստացող**, հմկտ.՝ **(ջ)հաստանալիս**, հրկտ.՝ **(ջ)հաստացած**, անկտ.՝ **հաստանում**, վղկտ.՝ **հաստացել**, ապկտ.՝ **հաստանալու**, ժխտ.՝ **հաստանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ՀԱՍՏԱՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., ացն պատճ. ած., խնդրո.՝ ուղղ.-հայց. (հաստացնել *խողովակը*), գործ. (հաստացնել *գործիքով*), ենթ.՝ (չ)հաստացնող, հմկտ.՝ (չ)հաստացնելիս, հրկտ.՝ (չ)հաստացրած, անկտ.՝ հաստացնում, վղկտ.՝ հաստացրել, ապկտ.՝ հաստացնելու, ժխտ.՝ հաստացնի: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱՍՏԱՑՎԵԼ**, ՀԱՍՏԱՑՆԵԼ-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

### ՀԱՍՏԱՑ

1. ձևի մկբ. (Նա վաղը *հաստապ կգա*):
2. որ. ած., բղդտ.՝ ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից (Մի *հաստապ խոսք այդպես էլ չասաց*):
3. հստտ. վրբ. (— Այո՛, *հաստապ, ես համոզված եմ, որ նա կհաղթի*):

**ՀԱՍՈՒ**, որ. ած., բղդտ.՝ ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից:

**ՀԱՎԱԿՆԵԼ**, չբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ սեռ.-տրկ. (հավակնել *պաշտոնի*), ենթ.՝ (չ)հավակնող, հմկտ.՝ (չ)հավակնելիս, հրկտ.՝ (չ)հավակնած, անկտ.՝ հավակնում, վղկտ.՝ հավակնել, ապկտ.՝ հավակնելու, ժխտ.՝ հավակնի: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՎԱՆԱԲԱՐ**, երկբ. վրբ.:

**ՀԱՎԱՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ ուղղ.-հայց. (հավանել *տեսքը*), սեռ.-տրկ. (հավանել *աղջկան*), ենթ.՝ (չ)հավանող, հմկտ.՝ (չ)հավանելիս, հրկտ.՝ (չ)հավանած, անկտ.՝ հավանում, վղկտ.՝ հավանել, ապկտ.՝ հավանելու, ժխտ.՝ հավանի: (տե՛ս V<sup>1</sup>)

### ՀԱՎԱՍԱՐ

1. որ. ած. (*Հավասար քայլերով առաջ էին գնում*):
2. ձևի մկբ. (*Ձորքը հավասար շարվեց*):
  - **ՀԱՎԱՍԱՐ**, կակ. բառ, հտղ., խնդրո.՝ սեռ.-տրկ. (*Կանգնեց շարքին հավասար*):

**ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ**, ձևի մկբ.:

**ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ**, գոյ., ներ, թյան, բաց.՝ ից, գործ.՝ թյամբ/ով, ներգ.՝ ում:

**ՀԱՎԱՏԱԼ**, չբ, ա լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ սեռ.-տրկ. (հավատալ *ասածներին/ընկերոջը*), ենթ.՝ (չ)հավատացող, հմկտ.՝ (չ)հավատալիս, ապառնի՝ (չ)հավատալիք, հրկտ.՝ (չ)հավատացած, անկտ.՝ հավատում, վղկտ.՝ հավատացել, ապկտ.՝ հավատալու, ժխտ.՝ հավատա: (տե՛ս V<sup>4</sup>)



**ՀԱՎԱՏԱՆԻՔ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Մեզանում կա այդպիսի **հավատալիք**):

- **ՀԱՎԱՏԱՆԻՔ**, **ՀԱՎԱՏԱՆ**-ի ապանի դերբայ (Իզուր մի՛ չարչարեք ձեզ. դրանք **հավատալիք** բաներ չեն):

### **ՀԱՎԱՔ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Երկրում վարժական **հավաք** անցկացվեց):
2. որ. ած., բղղտ.՝ **ավելի**, **առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (Աղջիկը **հավաք** պահվածք ուներ):
3. ձևի մկբ. (Իրեն շար գուսպ ու **հավաք** պահեց):

### **ՀԱՎԱՔԱԿԱՆ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Հայաստանի բասկետբոլի ազգային **հավաքականը** հաջողություն գրանցեց):
2. հրբ. ած. (Ազգի **հավաքական** կերպարը արտահայտված է էպոսում):

**ՀԱՎԱՔԱՏԵՂԻ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀԱՎԵԼԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (հավելել նյութեր), **սեռ.-տրկ**. (հավելել արդեն եղածին), **գործ**. (հավելել սարքավորումներով), ենթ.՝ **(չ)հավելող**, հմկտ.՝ **(չ)հավելելիս**, հրկտ.՝ **(չ)հավելած**, անկտ.՝ **հավելում**, վղկտ.՝ **հավելել**, ապկտ.՝ **հավելելու**, ժխտ.՝ **հավելի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՎԵԼՎԵԼ**, **ՀԱՎԵԼԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՎԵԼՎԱԾ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Այդ մասին խոսվում է **հավելվածում**):

- **ՀԱՎԵԼՎԱԾ**, **ՀԱՎԵԼ(Վ)ԵԼ**-ի հրկտ. դերբայ (**Հավելված** խորանյութերը ինձ անծանոթ էին):

**ՀԱՎԵՏ**, ժմնկի մկբ.:

**ՀԱՎԵՐԺ**, ժմնկի մկբ.:

**ՀԱՏԱԾ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Դասագրքում շրջանի **հատածը** դեղին էր ներկված):

- **ՀԱՏԱԾ**, **ՀԱՏԵԼ**-ի հրկտ. դերբայ (Նա իր **հատած** ճյուղերը պարանով կապեց):

**ՀԱՏԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (հատել ծառը), **գործ**. (հատել կացինով), ենթ.՝ **(չ)հատող**, հմկտ.՝ **(չ)հատելիս**, հրկտ.՝ **(չ)հա-**

**տած**, անկտ.՝ **հատում**, վղկտ.՝ **հատել**, ապկտ.՝ **հատելու**, ժխտ.՝ **հատի**:  
(տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՏՎԵԼ**, **ՀԱՏԵԼ**-ի կրվ. (Ավելորդ բոլոր ճյուղերը **հարվեցին** այգեսպանի կողմից), **չեզ**. (Այդ երկու փողոցները զբոսայգու մոտ **հարվում են**):  
(տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՏՎԱԾ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում** (Աշակերտը 2 սմ երկարությամբ **հարված** գծեց):

• **ՀԱՏՎԱԾ**, **ՀԱՏ(Վ)ԵԼ**-ի հրկտ. դերբայ (Այգեսպանի կողմից **հարված** ծառերը չորացած էին):

**ՀԱՏԿԱՆԻՇ**, գոյ., եր/ներ, ի/նշի, բաց.՝ **ից/նշից**, գործ.՝ **ով/նշով**, ներգ.՝ **ում**:

**ՀԱՏԿԱՊԵՍ**, սաստկ. վրբ.:

**ՀԱՏԿԱՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց**. (հատկացնել *գումար*), **սեռ.-տրկ**. (հատկացնել *ընտանիքին*), գործ. (հատկացնել *բանկով*), ենթ.՝ **(չ)հատկացնող**, հմկտ.՝ **(չ)հատկացնելիս**, հրկտ.՝ **(չ)հատկացրած**, անկտ.՝ **հատկացում**, վղկտ.՝ **հատկացրել**, ապկտ.՝ **հատկացնելու**, ժխտ.՝ **հատկացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱՏԿԱՑՎԵԼ**, **ՀԱՏԿԱՑՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

#### **ՀԱՏՈՒԿ**

1. **որ. ած.** (Նրան կարելի էր տեսնել միայն **հափուկ** առիթներին):
2. **ձևի մկբ.** (Այդ օրը հագել էր իր համար **հափուկ** կարված զգեստը):

#### **ՀԱՐԱԶԱՏ**

1. **գոյ., ներ, ի, բաց.՝ ից**, գործ.՝ **ով** (Տղայի **հարազատները** հավաքվել էին սեղանի շուրջ):
2. **որ./հրբ. ած.**, բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (**Հարազատ** քույրերը տարբեր կարծիքներ ունեին նույն հարցի վերաբերյալ):

#### **ՀԱՐԱՎՅԻ**

1. **գոյ., ներ, ցու/ի, բաց.՝ ցուց/ից**, գործ.՝ **ով** (**Հարավցին** հայտնվել էր ցուրտ պայմաններում):
2. **հրբ. ած.** (**Հարավցի** աղջիկը չէր հարմարվում նոր պայմաններին):

#### **ՀԱՐԲԵՑՈՂ**

1. **գոյ., ներ, ի, բաց.՝ ից**, գործ.՝ **ով** (**Հարբեցողը** մի բաժակ գինու մասին էր մտածում):
2. **հրբ. ած.** (**Հարբեցող** տոմսավաճառին երբեք սթափ չէիր տեսնի):

**ՀԱՐԳԻ**, որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

**ՀԱՐԵՎԱՆՑԻ**, ձևի մկբ.:

**ՀԱՐԹ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (*Հարթ ու լուսավոր մի ճանապարհ էր դա*):

2. ձևի մկբ. (*Հանդպումը հարթ անցավ*):

**ՀԱՐԹԱՉԱՓ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀԱՐԹԱՎԱՅՐ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀԱՐԿԱՎՈՐ**, հրբ./որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից**:

**ՀԱՐԿԱՏՈՒ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ՀԱՐՁԱԿԿԵԼ**, չբ, Ե լծ., կանոն., պարզ (տե՛ս *Առաջաբան*), խնդրո.՝ **գործ.** (հարձակվել *սրով*), ենթ.՝ **(չ)հարձակվող**, հմկտ.՝ **(չ)հարձակվելիս**, հրկտ.՝ **(չ)հարձակված**, անկտ.՝ **հարձակվում**, վղկտ.՝ **հարձակվել**, ապկտ.՝ **հարձակվելու**, ժխտ.՝ **հարձակվի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՐՄԱՐՎԵԼ**, չբ, Ե լծ., կանոն., պարզ (տե՛ս *Առաջաբան*), խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (հարմարվել *պայմաններին*), ենթ.՝ **(չ)հարմարվող**, հմկտ.՝ **(չ)հարմարվելիս**, հրկտ.՝ **(չ)հարմարված**, անկտ.՝ **հարմարվում**, վղկտ.՝ **հարմարվել**, ապկտ.՝ **հարմարվելու**, ժխտ.՝ **հարմարվի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՐՅՈՒՐ**, քնկ. թվ.:

**ՀԱՐՅՈՒՐԱԿԱՆ**, բաշխ. թվ.:

**ՀԱՐՅՈՒՐԱՆՈՑ**

1. հրբ. ած. (*Ձեռքիս հարյուրանոց մեքաղադրամներ են*):

2. գոյ. ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, հոգն. ներգ.՝ **ներում** (*Ես վերջապես ձեռք բերեցի մի նոր հարյուրանոց*):

**ՀԱՐՅՈՒՐԵՐՈՐԴ**, դսկ. թվ.:

**ՀԱՐՍ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ՀԱՐՍՆԱՑՈՒ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ՀԱՐՍԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., խնդրո.՝ **գործ.** (հարստանալ *գիտելիքներով*), ենթ.՝ **(չ)հարստացող**, հմկտ.՝ **(չ)հարստանալիս**, հրկտ.՝ **(չ)հարստացած**, անկտ.՝ **հարստանում**, վղկտ.՝ **հարստացել**, ապկտ.՝ **հարստանալու**, ժխտ.՝ **հարստանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ՀԱՐՍԱՑՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (հարստացնել *երկիրը*), **սեռ.-տրկ.** (հարստացնել *մարդուն*), **գործ.**

(հարստացնել *աշխատանքով*), ենթ.՝ **(ջ)հարստացնող**, հմկտ.՝ **(ջ)հարստացնելիս**, հրկտ.՝ **(ջ)հարստացրած**, անկտ.՝ **հարստացնում**, վղկտ.՝ **հարստացրել**, ապկտ.՝ **հարստացնելու**, ժխտ.՝ **հարստացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱՐՍԱՑՎԵԼ, ՀԱՐՍԱՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՐՎԱԾ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում** (**Հարվածը, ինչ խոսք, շափ դիպուկ էր**):

• **ՀԱՐՎԱԾ, ՀԱՐ(Վ)ԵԼ<sup>1</sup>**-ի հրկտ. դերբայ (*Կոշիկից հարված ոտքը ցավում էր*):

**ՀԱՐԵԼ<sup>1</sup>, նբ** (*վիրավորել, խփելով փրորել, հարվածել իմաստներով*) (*Կոշիկը հարեց ոտքը*), **ե լծ.**, կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (*ձու հարել, խնոցի հարել*), **գործ.** (*հարել շերեփով*), ենթ.՝ **(ջ)հարող**, հմկտ.՝ **(ջ)հարելիս**, հրկտ.՝ **(ջ)հարած**, անկտ.՝ **հարում**, վղկտ.՝ **հարել**, ապկտ.՝ **հարելու**, ժխտ.՝ **հարի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՐԵԼ<sup>2</sup>, չբ** (*մոտենալ, մերձենալ, միանալ, մեկի կողմն անցնել իմաստներով*) (*Մենք որևէ շարժման չենք հարում*), **ե լծ.**, կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (*բողոքականության հարել*), **նբ\*\*** (*կցել, միացնել իմաստով*) (*Մի սփի վրա մի ուրիշ սուպ էլ հարեց*), ենթ.՝ **(ջ)հարող**, հմկտ.՝ **(ջ)հարելիս**, հրկտ.՝ **(ջ)հարած**, անկտ.՝ **հարում**, վղկտ.՝ **հարել**, ապկտ.՝ **հարելու**, ժխտ.՝ **հարի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ, գոյ., ներ, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ՀԱՐՑԱՏՈՄՍ, գոյ., եր, ի, բաց.՝ ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում:**

**ՀԱՐՑԱՔՆՆԵԼ, նբ, ե լծ.**, կանոն., պարզ, խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (*հարցաքննել մեղադրյալին*), ենթ.՝ **(ջ)հարցաքննող**, հմկտ.՝ **(ջ)հարցաքննելիս**, հրկտ.՝ **(ջ)հարցաքննած**, անկտ.՝ **հարցաքննում**, վղկտ.՝ **հարցաքննել**, ապկտ.՝ **հարցաքննելու**, ժխտ.՝ **հարցաքննի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ, ՀԱՐՑԱՔՆՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՐՑՆԵԼ, նբ, ե լծ.**, կանոն., պարզ, պատճառակերպ (տե՛ս *Առաջարան*), խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (*հարցնել փեղը*), **սեռ.-տրկ.** (*հարցնել անցորդին*), **գործ.** (*հարցնել հեռախոսազանգով*), ենթ.՝ **(ջ)հարցնող**, հմկտ.՝ **(ջ)հարցնելիս**, հրկտ.՝ **(ջ)հարցրած**, անկտ.՝ **հարցնում**, վղկտ.՝ **հարցրել**, ապկտ.՝ **հարցնելու**, ժխտ.՝ **հարցնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԱՐՑՎԵԼ, ՀԱՐՑՆԵԼ-ի կրվ.:** (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԱՐՑՈՒՄ**, գոյ., ներ, ցման/ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ցմամբ/ով**, հոգն. ներգ.՝ ներում:

**ՀԱՐՑՈՒՓՈՐՁ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ**, գոյ., ներ, թյան, բաց.՝ **ից**, գործ.՝ **թյամբ/ով**:

### **ՀԱՐՈՒՍՏ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Հարուստը** նա է, ով երջանիկ է իր ունեցածով):

2. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից/հարստագույն** (Աղջիկը **հարուստ** ներաշխարհ ուներ):

3. ձևի մկբ. (Նրանց ընտանիքը միշտ էլ **հարուստ** է ապրել):

**ՀԱՅԵՆԻ**, գոյ., ներ, նու/ի, բաց.՝ **նուց/ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀԱՅԹՈՒՄ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

### **ՀԵՁ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից/-(ա)գույն** (Անուշը **հեզ** կին էր):

2. ձևի մկբ. (Աղջիկը **հեզ** կանգնել էր պատի փակ ու ժպտում էր):

**ՀԵԾԱՆԻՎ**, գոյ., ներ, ի/անվի, բաց.՝ **ից/անվից**, գործ.՝ **ով/անվով**, ներգ.՝ **ում**:

**ՀԵԾԵԼԱԶՈՐ**, գոյ., եր/ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

### **ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ**

1. հրբ. ած. (Պատմության մեջ քիչ չեն **հեղափոխական** գործիչները):

2. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Հեղափոխականները** նոր ծրագիր էին մշակում):

**ՀԵՆԱԿԵՏ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

### **ՀԵՆՑ**

1. սաստկ. վրբ. (**Հենց** այդ գիրքն է անհրաժեշտ):

2. ստոր. շղկ. (**Հենց** անձրև սկսվի, կվերադառնանք):

### **ՀԵՇՏ**

1. ձևի մկբ. (**Հեշտ** լուծեց խնդիրը):

2. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից/-(ա)գույն** (**Հեշտ** հարցեր փուր ինձ):

**ՀԵՌԱԳԻՐ**, գոյ., գրեր, գրի, բաց.՝ **գրից**, գործ.՝ **գրով**, ներգ.՝ **գրում**:

**ՀԵՌԱԽՈՍ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀԵՌԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., խնդրո՝ **բաց**. (հեռանալ *խմբից*), **գործ**. (հեռանալ *գնացքով*), ենթ.՝ **(ջ)հեռացող**, հմկտ.՝ **(ջ)հեռանալիս**, հրկտ.՝ **(ջ)հեռացած**, անկտ.՝ **հեռանում**, վղկտ.՝ **հեռացել**, ապկտ.՝ **հեռանալու**, ժխտ.՝ **հեռանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ՀԵՌԱՑՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո՝ **ուղղ.-հայց**. (հեռացնել *արամը*), **սեռ.-տրկ**. (հեռացնել *մեկին*), **բաց**. (հեռացնել *աշխատանքից*), **գործ**. (հեռացնել *գործիքով*), ենթ.՝ **(ջ)հեռացնող**, հմկտ.՝ **(ջ)հեռացնելիս**, հրկտ.՝ **(ջ)հեռացրած**, անկտ.՝ **հեռացնում**, վղկտ.՝ **հեռացրել**, ապկտ.՝ **հեռացնելու**, ժխտ.՝ **հեռացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԵՌԱՅՎԵԼ**, **ՀԵՌԱՑՆԵԼ-ի կրվ.**: (տե՛ս V<sup>1</sup>)

### ՀԵՌՈՒ

1. **որ. ած.**, բղղտ.՝ **ավելի, առավել**, գրղ.՝ **ամենա-/ամենից** (**Հեռու վայրում էր բնակվում**):
2. **տեղի մկբ.** (**Հեռո՛ւ գնա**):
3. **կպկ. բառ**, հտղ., խնդրո՝ **բաց**. (*Տղամարդը ինձնից հեռու էր կանգնել*):

**ՀԵՌՈՒՍՏԱԴԻՏՈՂ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ՀԵՎԻՀԵՎ**, ձևի մկբ.:

**ՀԵՏ<sup>1</sup>** (*միասին*), իսկ. կապ, հտղ., խնդրո՝ **սեռ.-տրկ**. (*Ընկերների հետք մեկնեց ճամփորդության*), **տրկ**. (**Ինձ հետ եկալ**):

**ՀԵՏ<sup>2</sup>** (*ետք*), տեղի մկբ. (**Հետք գնաց և բախվեց պատին**):

**ՀԵՏԱԶԳԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո՝ **ուղղ.-հայց**. (հետաձգել *հանդիպումը*), **գործ**. (հետաձգել *նամակով*), ենթ.՝ **(ջ)հետաձգող**, հմկտ.՝ **(ջ)հետաձգելիս**, հրկտ.՝ **(ջ)հետաձգած**, անկտ.՝ **հետաձգում**, վղկտ.՝ **հետաձգել**, ապկտ.՝ **հետաձգելու**, ժխտ.՝ **հետաձգի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԵՏԱԶԳՎԵԼ**, **ՀԵՏԱԶԳԵԼ-ի կրվ.**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԵՏԱԽՈՒՅՋ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ՀԵՏԵՎԱԲԱՐ/ՀԵՏԵՎԱՊԵՍ**, մակաբ. շղկ.:

**ՀԵՏՁՀԵՏԵ**, ձևի մկբ.:

### ՀԵՏՈ

1. **ժմնկի մկբ.** (*Հանդիպեցին, հետո որոշեցին միասին ընթել*):
2. **կպկ. բառ**, հտղ., խնդրո՝ **բաց**. (*Եկավ քեզնից հետո*):

**ՀԵՐԹԱՊԱՀ**, գոյ., ներ, ի, բաց.՝ *ից*, գործ.՝ *ով*:

**ՀԵՐԹԱՓՈՒՄ**, գոյ., ներ, ի, բաց.՝ *ից*, գործ.՝ *ով*:

**ՀՁՈՐ**, որ. ած., բղղտ.՝ *ավելի*, առավել, գրղ.՝ *ամենա-/ամենից/-(ա)գույն*:

**ՀԸ/ՀԸՄ**, զգցկ. ձյնրկ.:

**ՀԻԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., *ան* սոսկած., խնդրո.՝ *գործ*. (հիանալ *գեղեցկությամբ*), ենթ.՝ *(չ)հիացող*, հմկտ.՝ *(չ)հիանալիս*, հրկտ.՝ *(չ)հիացած*, անկտ.՝ *հիանում*, վղկտ.՝ *հիացել*, ապկտ.՝ *հիանալու*, ժխտ.՝ *հիանա*: (տե՛ս V<sup>5</sup>)

**ՀԻԱՏՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., *ացն* պատճ. ած., խնդրո.՝ *սեռ.-տրկ*. (հիացնել *դստերը*), *գործ*. (հիացնել *անակնկալով*), ենթ.՝ *(չ)հիացնող*, հմկտ.՝ *(չ)հիացնելիս*, հրկտ.՝ *(չ)հիացրած*, անկտ.՝ *հիացում*, վղկտ.՝ *հիացրել*, ապկտ.՝ *հիացնելու*, ժխտ.՝ *հիացնի*: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀԻԱՏՎԵԼ**, **ՀԻԱՏՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԻԱՍԹԱՓՎԵԼ**, չբ, ե լծ., կանոն., պարզ (տե՛ս *Առաջաբան*), խնդրո.՝ *բաց*. (հիասթափվել *մեկից*), ենթ.՝ *(չ)հիասթափվող*, հմկտ.՝ *(չ)հիասթափվելիս*, հրկտ.՝ *(չ)հիասթափված*, անկտ.՝ *հիասթափվում*, վղկտ.՝ *հիասթափվել*, ապկտ.՝ *հիասթափվելու*, ժխտ.՝ *հիասթափվի*: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀԻԱՍՔԱՆՉ**

1. որ. ած., բղղտ.՝ *ավելի*, առավել, գրղ.՝ *ամենա-/ամենից* (*Նրանց առջև բացվեց հիասքանչ տեսարան*):

2. ձևի մկբ. (*Բեմում կանգնած աղջիկը հիասքանչ էր խոսում*):

**ՀԻԹ**, գոյ., եր, ի, բաց.՝ *ից*, գործ.՝ *ով*, ներգ.՝ *ում*:

**ՀԻՄԱ**, ժմնկի մկբ.:

**ՀԻՄՆԱԴԻՐ**, գոյ., ներ, դրի/ի, բաց.՝ *դրից/ից*, գործ.՝ *դրով/ով*:

**ՀԻՄՆԱՐԿ**, գոյ., ներ, ի, բաց.՝ *ից*, գործ.՝ *ով*, ներգ.՝ *ում*:

**ՀԻՄՆՈՎԻՆ**, ձևի մկբ.:

**ՀԻՆ**, որ. ած., բղղտ.՝ *ավելի*, առավել, գրղ.՝ *ամենա-/ամենից/հնագույն*:

**ՀԻՆԳ**, քնկ. թվ.:

**ՀԻՆԳԱԿԱՆ/ՀՆԳԱԿԱՆ**, բաշխ. թվ.:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ**, դսկ. թվ.:

**ՀԻՆԳՇԱԲԹԻ**, գոյ., ներ, ի/թվա\*, բաց.՝ *ից*, գործ.՝ *ով*:

**ՀԻՎԱՆԴ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Հիվանդին** տեղափոխեցին հիվանդասենյակ):
2. որ. ած. (**Հիվանդ** հասարակությունը չի կարող զարգանալ):

**ՀԻՎԱՆԴԱԳԻՆ**

1. հրբ. ած. (**Հիվանդագին** մթնոլորտում էր ապրում):
2. ձևի մկբ. (Բոլորի ասածներին **հիվանդագին** էր արձագանքում):

**ՀԻՎԱՆԴԱՏԵՍ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:**ՀԻՐԱՎԻ**, հստտ. վրբ.:

**ՀՂՓԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սոսկած., ենթ.՝ **(ջ)հղփացող**, հմկտ.՝ **(ջ)հղփանալիս**, հրկտ.՝ **(ջ)հղփացած**, անկտ.՝ **հղփանում**, վղկտ.՝ **հղփացել**, ապկտ.՝ **հղփանալու**, ժխտ.՝ **հղփանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ՀՂՓԱՑՆԵԼ**, նբ, ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (հղփացնել *միջավայրը*), **սեռ.-տրկ.** (հղփացնել *որդուն*), **գործ.** (հղփացնել *դրամով*), ենթ.՝ **(ջ)հղփացնող**, հմկտ.՝ **(ջ)հղփացնելիս**, հրկտ.՝ **(ջ)հղփացրած**, անկտ.՝ **հղփացնում**, վղկտ.՝ **հղփացրել**, ապկտ.՝ **հղփացնելու**, ժխտ.՝ **հղփացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀՂՓԱՑՎԵԼ**, **ՀՂՓԱՑՆԵԼ-ի կրվ.**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀՄՏՈՒԹՅՈՒՆ**, գոյ., ներ, թյան, բաց.՝ **ից**, գործ.՝ **թյամբ/ով**, հոգն. ներգ.՝ ներում:

**ՀՄՈՒՏ**

1. որ. ած., բղդտ.՝ **ավելի**, **առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից** (**Հմուտ** փաստաբան է):
2. ձևի մկբ. (Վարպետորեն և **հմուտ** լուծեցին հարցը):

**ՀՅՈՒԹԵՂ**, որ./հրբ. ած., բղդտ.՝ **ավելի**, **առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից**:

**ՀՅՈՒՍԻՍ**, գոյ., ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀՅՈՒՐԱՆԱՂ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ**, հրբ. ած.:

**ՀՅՈՒՐԱՏՈՒՆ**, գոյ., տներ, տան, բաց.՝ **տնից**, գործ.՝ **տնով**, հոգն. ներգ.՝ տներում:

**ՀՅՈՒՐԸՆԿԱԼ**

1. հրբ./որ. ած., բղդտ.՝ **ավելի**, **առավել**, գրդ.՝ **ամենա-/ամենից** (**Հյուրընկալ** ընտանիքը ճոխ սեղան էր պատրաստել):



2. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (**Հյուրընկալը** ջերմ ընդունեց մեզ):

**ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**, գոյ., թյան, բաց.՝ **ից**, գործ.՝ **թյամբ/ով**, ներգ.՝ **ում**:

**ՀՆԱԳԵՏ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**:

**ՀՆԱԶԱՆԴՎԵԼ**, չբ, Ե լծ., կանոն., պարզ (տե՛ս *Առաջաբան*), խնդրո.՝ **սեռ.-տրկ.** (հնազանդվել *հորը*), ենթ.՝ **(ջ)հնազանդվող**, հմկտ.՝ **(ջ)հնազանդվելիս**, հրկտ.՝ **(ջ)հնազանդված**, անկտ.՝ **հնազանդում**, վղկտ.՝ **հնազանդվել**, ապկտ.՝ **հնազանդվելու**, ժխտ.՝ **հնազանդվի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀՆԱՄՅԱ**, հրբ. ած.:

**ՀՆԱՆԱԼ**, չբ, ա լծ., կանոն., **ան** սուկած., ենթ.՝ **(ջ)հնացող**, հմկտ.՝ **(ջ)հնանալիս**, հրկտ.՝ **(ջ)հնացած**, անկտ.՝ **հնանում**, վղկտ.՝ **հնացել**, ապկտ.՝ **հնանալու**, ժխտ.՝ **հնանա**: (տե՛ս V<sup>5</sup>)

**ՀՆԱՏՆԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., **ացն** պատճ. ած., խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (հնացնել *գինին*), ենթ.՝ **(ջ)հնացնող**, հմկտ.՝ **(ջ)հնացնելիս**, հրկտ.՝ **(ջ)հնացրած**, անկտ.՝ **հնացում**, վղկտ.՝ **հնացրել**, ապկտ.՝ **հնացնելու**, ժխտ.՝ **հնացնի**: (տե՛ս V<sup>3</sup>)

**ՀՆԱՅՎԵԼ**, **ՀՆԱՏՆԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀՆԱՐ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀՆԱՐԱՄԻՏ**

1. որ. ած., բղդտ.՝ **ավելի**, առավել, գրդ.՝ **ամենա-/ամենից** (**Հնարամիպ** և *փորձաշար անձնավորություն է*):

2. ձևի մկբ. (*Դայակն ավելի հնարամիպ գործեց*):

**ՀՆԱՐԱՎՈՐ**, հրբ./որ. ած., բղդտ.՝ **ավելի**, առավել, գրդ.՝ **ամենա-/ամենից**:

**ՀՆԱՐԵԼ**, նբ, Ե լծ., կանոն., պարզ, խնդրո.՝ **ուղղ.-հայց.** (հնարել *սուր*), **սեռ.-տրկ.** (հնարել *հերոսին*), ենթ.՝ **(ջ)հնարող**, հմկտ.՝ **(ջ)հնարելիս**, հրկտ.՝ **(ջ)հնարած**, անկտ.՝ **հնարում**, վղկտ.՝ **հնարել**, ապկտ.՝ **հնարելու**, ժխտ.՝ **հնարի**: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀՆԱՐՎԵԼ**, **ՀՆԱՐԵԼ**-ի կրվ.: (տե՛ս V<sup>1</sup>)

**ՀՆԳԱՄՅԱԿ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով**, ներգ.՝ **ում**:

**ՀՆԴԻԿ**

1. գոյ., ներ, ի, բաց.՝ **ից**, գործ.՝ **ով** (*Մեր երկիրն ընդունել է բազմաթիվ հնդիկներին*):

2. որ. ած. (**Հնդիկ** երիտասարդները իրենց կրթությունը շարունակել են արտերկրում):

**ՀՆՉԵՂ**

1. որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից** (*Հնչեղ ծայն ունի*):

2. ձևի մկբ. (*Ձայնը հնչեղ արձագանքեց*):

**ՀՆՉԵՐԱՆԳ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում**:

**ՀՆՉՅՈՒՆ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում**:

**ՀՆՉՅՈՒՆԱԿԱԶՄ**, գոյ., եր, ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում**:

**ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ**, գոյ., ներ, թյան, բաց.՝ **ից, գործ.՝ թյամբ/ով, ներգ.՝ ում**:

**ՀՆՉՈՒՄ**, գոյ., ներ, չման/ի, բաց.՝ **ից, գործ.՝ չմամբ/ով**:

**ՀՆՉՈՒՆ**, որ. ած., բղղտ.՝ **ավելի, առավել, գրդ.՝ ամենա-/ամենից**:

**ՀՆՈՒՑ**, ժմնկի մկբ.:

**ՀՆՕՐՅԱ**, հրբ. ած.:

**ՀՈ**

1. կչկ. ձյնրկ. (— **Հո՛, հո՛**, — եզներին քշելով՝ կանչում էր հովիվը):

2. երկբ. վրբ. (**Հո** այսքանով չի սահմանափակվում հյուրասիրությունը):

**ՀՈԲԵԼՅԱՆ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով, ներգ.՝ ում**:

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒ**, գոյ., ներ, ի, բաց.՝ **ից, գործ.՝ ով**:

